Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
7-45

R. Ruggeri
29.XII.43.
Joseph Bulb

891.99
Պ-45

-6 NOV 2011

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՏԱՂԵՐ

Հեղինակի պատկերով

ԵՒ

ԼԷՕ-Ի

ԱՌԱՋԱԲԱՆՈՎ.

Հրատարակութիւն Հ. Ե.

ԹԻՖԼԻՍ

Տպար. Վրաց Հրատ. Ընկ. || Тип. Груз. Изд. Т—ва.

Большая Ванкская ул.

1903

.07.2013

50509

Дозволено цензурою. Тифлисъ, 21 марта 1902 года.

2631-2004

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

I

Ո՞վ է Պէշիկթաշլեանը։

Մենք շատ լաւ գիտենք թէ ով է։—Մէկը այն սակաւաթիւ սիրելի անուններից, որ ստեղծել է մեր աղքատիկ գրականութիւնը տասնիններորդ դարի ընթացքում։ Շատ չեն մեր համազգային սիրելիները։ Պէշիկթաշլեանը կանգնած է մեր այդ պարծանքների շարքում։ Նրան սիրում են ամեն տեղ, ուր հայ մարդը գիտէ կարդալ հայերէն գիրք։

Ի՞նչ է Պէշիկթաշլեանը։

—Բանաստեղծ, կը պատասխանէ ամեն մէկը մեզանից։

Բանաստեղծ, այո, բայց այս մի հատիկ բառից դէնը գնալ մենք չենք կարող։ Որովհետև մի բանաստեղծ է դա, որի երգերը մի անգամ են տպագրվել (Կ. Պոլսում 1870-ին) և վաղուց, շատ վաղուց սպառվել են, այնպէս որ գտնել նրանց շատ և շատ դժուար է։ Որոնում էք Պէշիկթաշլեանին, ուզում էք կարդալ նրան ծայրէ ծայր։ Իզուր։ Պէշիկթաշլեանի կտորները միայն տպված են երգարանների մէջ։ Դժբախտաբար, երգարաններ էլ վաղուց մեզանում չեն հրատարակվում, նրանք էլ հազուագիւտ գրքեր են դարձել։

Եւ ահա զարմանալի, տարօրինակ երևոյթ։ Պէշիկթաշլեանին սիրում ենք, պաշտում ենք, բայց նա ինքը չը կայ մեր մէջ, նրան չենք տեսնում, նրան կարդալ

չենք կարող։ Չը կարդալ մի անմահացած հեղինակ՝ չէ նշանակում ծաղրել անմահութիւնը։ Առաջնակարգ բանաստեղծ, համազգային երգիչ անունով հռչակել մէկին և չունենալ նրա երգերի ժողովածուն... չէ՞ նշանակում անպատուել նրան։

Երեսուն տարի չարունակ մենք անպատուում էինք այն հեղինակին, որ մեր ազգային պարծանքն է։ Այսօր կարծէք քիչ բարեխիղճ ենք ուզում դառնալ, մի քիչ գիտակցութեամբ ենք ուզում վերաբերվել Պէշիկթաշլեանի անուան և յիշատակին։ Երեսուն տարուց յետոյ մեզանում երևում է Պէշիկթաշլեանի երգերի երկրորդ հրատարակութիւնը։ Եւ ինչպէս տեսնում էք, այդպիսի մի գործ մեզանից մի առանձին հերոսութիւն չէր էլ պահանջում։ Գերեզմանը չուտ խլեց Պէշիկթաշլեանին և նրա թողած երգերի հարստութիւնը չատ մեծ չէ. ընդամենը 60—62 ոտանաւոր։ Մի փոքրիկ հատոր, ինչպէս տեսնում էք...

II

Ինքը, ընթերցողը, պիտի հասկանայ և սիրէ բանաստեղծին։ Իսկական բանաստեղծը նա է, ով խօսում է ընթերցողի սրտից, հոգուց, ընթերցողի սրտի ու հոգու հետ, ով յուզում է այդ սիրտը, այդ հոգին, իր համար տեղ է նուաճում նրա մէջ։

Բանաստեղծ է Պէշիկթաշլեանը։

Ահա նրա գործերը գրված են ընթերցող հասարակութեան առաջ. թող կարդան, չատերը կարդան, չատ կարդան և պատասխանեն այդ հարցին։ Ընթերցանութիւնը միակ արդար գրական դատաստանն է։ Այսօր այդ դատաստանին է յանձնվում մի հռչակված հեղինակ։ Կը չարունակվի՞ արդեօք հին հռչակը։ Արդեօք նոր սերունդի համար էլ Պէշիկթաշլեանը կը լինի այն, ինչ էր անցած կամ անցնող սերունդի համար։

Չը վճռենք այս հարցերը։ Նրանց վճռելը այնքան էլ հեշտ չէ։ Թողնենք, որ ժամանակը արտասանէ իր խօսքը։ Բայց մեզ վրա մի պարտք կայ։ Տալով ընթերցողի ձեռքը մի հռչակված հեղինակի գործերը, մենք պարտաւոր ենք բացատրել թէ ինչ էր այդ հեղինակը իր ժամանակում, ինչից կազմվեց նրա հռչակը, ինչպէս նա դարձաւ համազգային սիրելի։

Կենսագրութիւն չէ մեր առաջարկածը։ Բաւական թող լինի մեզ համար և այն, եթէ կարողանանք դծագրել Պէշիկթաշլեանի գրական դէմքը։

III

Սկսենք դարձեալ հարցերով։

Ո՞րտեղից եկաւ Պէշիկթաշլեանը։ Ո՞վքեր էին նրա գրական ծնողները և դաստիարակները։ Մի խօսքով—ինչ ազդեցութեան, ինչ շրջանի արդիւնք է Պէշիկթաշլեանը։

Այս հարցերը մեզ տանում են Վենետիկ։ Մխիթարեաններն էին Պէշիկթաշլեանի դաստիարակիչները։ Իսկ Մխիթարեանները—այս դուք լաւ գիտէք—մեր գրականութեան ամենահին, հսկայ աշխատաւորներն էին։

Խօսել Պէշիկթաշլեանի այդ ուսուցիչների գրական ամբողջ գործունէութեան մասին այստեղ անկարելի է և մեր այս նպատակի տեսակէտից նոյն իսկ անհարկաւոր։ Վերցնենք Մխիթարեան գրականութեան մի գիծը միայն։

Մենք մի վանքում ենք։ Շատ հեռու է այդ վանքը հայրենի աշխարհից, բայց այնտեղ տիրող զարմանալի եռանդը հաւաքել, ամբարել է այն բոլոր գրաւոր վաստակները, որոնց կարելի էր գտնել Հայաստանի աւերակների մէջ։ Վանքը ամբողջապէս նուիրվում է այդ գրականութեան, անցեալի գրականութեան։ Կրօն, աստուածաբանութիւն, հայկական հին գրականութիւն—ահա այն

ասպարէզը, ուր Մխիթարեանները ցոյց են տալիս իրանց ամբողջ տաղանդը, իրանց ահագին տոկունութիւնը։

Մշակվում է հինը—լեզու, պատմութիւն. մշակողները հասցնում են այդ հինը զարմանալի ճոխութեան։

Բայց վանքում ծագում են և ուրիշ պահանջներ։ Մտածել, խուզարկել, բացատրել, կարգաւորել—այդ բոլորը կայ։ Սակայն աշխարհից հեռացած այդ խաղաղ անկիւնում էլ զարթնում է աշխոյժ, զգայուն սրտի պահանջը—երգը։ Մխիթարի վանքը փարում է և երգին։ Սկիզբ է առնում և զարգանում է Մխիթարեան բանաստեղծութիւնը։

Մխիթարեան բանաստեղծութիւն—այսպէս էլ անուանենք խորին հետաքրքրութեան արժանի այդ երեւոյթը։ Մխիթարեան անուանելով, մենք աւելի լաւ բնորոշած կը լինենք այդ բանաստեղծութիւնը։ Ի՞նչ յատկութիւններ ունի նա։

Կան զարգացած, մտածող, զգացմունքներով օժտված մարդիկ, կան տաղանդներ. կայ բանաստեղծական ճոխ լեզու—հին հայերէնը, մշակված, հարստացված։ Կայ երգելու տրամադրութիւն։ Բայց գլխաւորը այս բոլորը չեն։

Գլխաւորը միջավայրն է։ Երգ ունի հովիւը, երգում է և ձկնորսը, կեանքի մէջ տանջվողն էլ իր երգն ունի։ Այդ բոլոր երգերը բանաստեղծութիւն են, գեղեցիկ կարող են լինել, յուզիչ, սրտագին՝ ընդհանուր առմամբ։ Բայց նայեցէք խորը և դուք կը տեսնէք միջավայրի հզօր ու խոր ազդեցութիւնը, որ զանազանում է այդ երգերը, տալիս է նրանց առանձին-առանձին գոյն, համ ու հոտ։ Սարի հովիւը ուրիշ աշխարհ է ներկայացնում, անապատի հովիւը—ուրիշ աշխարհ. մի տեղ ձիւնապատ բարձրութիւնների վեհութիւնն է խօսում, լերան ջուրը, կայծակն ու արևն է նայում. միւս տեղ տափարակների անհուն խորհրդաւորութիւնը, ուր չը կայ բարձրութիւն, թռիչք, ուր կոլոր ու նեղ հորիզոնը սահմանափակում է հայեացքը,

միտքը, կենտրոնացնում է աւելի փոքրիկ, աւելի անձուկ աշխարհի մէջ։

Միջավայրը բանաստեղծութեան ամբողջ հոգին է։ Եւ այդ հոգին Մխիթարեան բանաստեղծութեան մէջ՝ վանքն է։

Վանք... Այնտեղ տիրում են որոշ աշխարհայեցողութիւններ, որոշ աւանդութիւններ։ Այնտեղ երգի մէջ ամենից առաջ և ամենից շատ պիտի խօսէ կրօնը, ապա պատմութիւնը, ապա և բնութիւնը։ Կուսակրօն հոգևորականը (և միթէ միայն կուսակրօնը) իրաւունք չունի կոյսի աչքերը երգել, անձնական սէր պատմել, այդ սիրով բորբոքված սրտի յոյզերը, տանջանքները, հաւատն ու ուխտը դուրս թափել։ Մխիթարեան բանաստեղծութեան մէջ բացակայ է այս երակը։ Բայց յայտնի է որ բոլոր երկրների և բոլոր ժամանակների երգերը այստեղից են գլխաւորապէս կրակ ու թափ ստանում։

Ո՞վ էր ոգևորում Ս. Ղազարի բանաստեղծներին։ Վանքի մէջ, աշխարհային աղմուկներից հեռու, մարդուն չը ջղայնացած է լուռ բնութիւնը, միայնութիւնը, իսկ գրադարանի պահարաններից նրան նայում են հին-հին հատորներ, խոշոր դէմքեր։ Դա մթնոլորտ է, դա ազդեցութիւն է, որից դուրս վանականը գոյութեան իրաւունք էլ չունի։ Եւ ահա Մխիթարեան վանականը կամ նմանվում է հին կլասիկներին կամ ուղղակի թարգմանում է նրանց։

Դասական հեղինակների աշակերտներ են Մխիթարեանները։ Թովմաճանը թարգմանում է Հոմերոսը, Բագրատունին—Հոմերոսը, Վիրգիլիոսը (նորերից Միլտոնը), Հիւրմիւզեանը—դարձեալ Վիրգիլիոսը։ Այդ հին մեծ հեղինակների ազդեցութիւնը այնքան խիստ է թարգմանիչների վրա, որ Բագրատունին գրում է իր «Հայկ Դիւցազն» մեծ պօէման կեղծ կլասիկական ուղղութեամբ, իսկ Հիւրմիւզեանը Վիրգիլիոսի «Մշակականք»-ի նման գրում է իր

«Բուրաստանը», ուր ոտանաւորով պատմում է բոյսերի կեանքը և նրանց մշակելու եղանակը։

Ինքնուրոյն բանաստեղծութեան մէջ, ընականաբար, նոյն կեղծ-դասական ոգին է տիրում։ Բանաստեղծութիւն է դա իսկապէս իր դարձուածքներով, իր ներբողական կազմուածքով. բարձր ոճ, անհասկանալի դասնալու չափ խրթին լեզու—ահա բանաստեղծական չնորքի յայտարարները։ Նիւթը այն է, ինչ տալիս է վանական կեանքը. կրօնական խոհեր, հայոց պատմութեան դէպքեր, վանքի մէջ կատարված զանազան հանդէսներ, վանքը այցելող այս կամ այն անձը։

Երկու խօսք հայրենասիրական բանաստեղծութեան մասին։ Մխիթարեան բանաստեղծները յաճախ երգում էին Հայաստանը։ Բայց դա Եփրատի, Այրարատի ծաղկաբոյր Հայաստանն է, փառաւոր դիւցազունների Հայաստանը, որ պատերազմում է, յաղթում է, որ երկնքի ընտրեալն է։ Հայ Վիրգիլիոսների համար չը կայ և չէ կարող լինել տանջանքների, անկման Հայաստան, հայ ազգի ժամանակակից ճակատագիր։ Դասական հնութիւնը իր հերոսներով, իր աստուածներով այն միակ շրջանն է, ուր տեղերում է Ս. Ղազարի բանաստեղծի միտքն ու երևակայութիւնը։ Նրա համար ներկան գոյութիւն չունի, որովհետև երգել կարող է միայն փառքը, միայն քաջութիւնը, միայն զարդարուն հինը, չքեղ աւանդութիւնը։

Այսպէս ահա, տեսնում ենք հռչակված բանաստեղծներ, որոնք սակայն, երկարատև ազդեցութիւն, լայնատարած ժողովրդականութիւն չունեցան։ Ս. Ղազարի միաբանութիւնը իր բանաստեղծութեան փառքեր է համարում Բագրատունուն, Հիւրմիզեանին։ Կարդում էք այդ մարդկանց տաղաչափութիւնները, ճիշտ որ տեսնում էք տաղանդ, ճիշտ որ բանաստեղծի զգացմունքներ, վեհ տրամադրութիւն։ Եւ նրանք շատ բան են գրել։ Բայց ում համար։

Անհատների, ընտրեալների համար, բայց գլխաւորապէս պահարաններում փակված մնալու համար։ Դուք տեսնում էք որ այդ մանր ու մեծ բանաստեղծութիւնները, այդ կլասիկական ինքնուրոյն և թարգմանական պոէմաները քարացած չքեղութիւններ են, քարացած իրանց ձևով, իրանց ոգով, բայց մանաւանդ իրանց լեզուով։ Յուրաքանչիւրն էլ մնացին նրանք, անհասկանալի ընդհանրութեան համար, կրակել, տաքացնել երբէք չը կարողացան, և աւելի լեզուական հոխութեան ու լեզուական դիտական մեծ ճարպիկութիւնների հանդիսարաններ էին, քան բանաստեղծութեան՝ այս բառի լայն, ժողովրդական մտքով...

Քառասնական թուականներին այդպէս երգող Մխիթարեանների մէջ երևան եկաւ մի երիտասարդ վարդապետ—Հ. Ղևոնդ Ալիշանը։ Բանաստեղծական հոգի էր տուած այս մարդուն։ Նա շատ գրեց, շատ երգեց, բայց գրեց ու երգեց—չը մոռանանք երբէք—նոյն միջավայրում, նոյն վանքի մէջ։ Նոյն ճոխ, խրթին, բայց անհասկանալի գրաբարը, նոյն նիւթերը, ոգևորութեան միևնոյն աղբիւրները։

Ալիշանը հետևում էր իր ուսուցիչներին։ Բայց դա մի միջակութիւն չէր, որ միայն կաչկանդվել կարողանար ընդունված ձևերի մէջ։ Դա մի ինքնուրոյն, ուժեղ տաղանդ էր և իր նորութիւնը—մեծ նորութիւն—մտցրեց Մխիթարեան երգի մէջ։

Վանական աւանդութիւնների դիւթական շրջագիծը պատռել էր հարկաւոր. Հ. Ալիշանը արաւ այդ բանը, ժողովրդականացնելով բանաստեղծութիւնը։ Միայն մի ճանապարհ կար նրա առջև—և դա հայրենասիրական երգն էր։ Մաքուր, բիւրեղեայ հայրենասիրութեամբ կրակված մի սիրտ, նա հայրենական երգի նահապետ հանդիսացաւ մեզանում։ Բայց ինչ երգ էր դա։ Այն երգը, որ հառաչել, արտասվել գիտէ, որ վիշտ ու ցաւ է պատմում, որ

մեծ խորհուրդ է կրում իր ճակատին, որ յոյս ու յարութիւն է երազում։

Այդ նոր հնչիւնները—հնչիւններ, որոնք միանգամից ընթերցողի սրտի խորքն են թափանցում—արդէն ուրիշ լեզու ունին։ Լեզուն, այո, ուզում ենք դրականապէս ասել, լեզուն էր ահագին դեր կատարում երգի այդ նոր փոփոխութեան մէջ։ Մի՞թէ այդպէս չէ։ Տեսէք Ալիշանին գրաբար հայրենասիրական երգի մէջ, դա նոյն Բագրատունին է, նոյն Հիւրմիւզեանն է. երգվողը նոյն փառաւոր հայրենիքն է, նոյն դիւցազնական անցեալը և երգը նոյն մեծաթնդիւն, ճարճատիւն ներբողն է, նոյն փառապանծ յաղթանակը և միայն յաղթանակը։ Բայց ահա Ալիշանի վրա գալիս են ոգևորութեան այնպիսի բօլէներ, երբ նա զգացմունքների թարգման է դարձնում աշխարհաբար լեզուն,—և տեսարանը, կարծես կախարդական գաւազանի մի հարուածով, փոխվում է։ Դուրս է ցայտում ցաւի, հեծեծանքի ձայնը. ժողովրդական դործը ներկայանում է իր հառաչներով ու ժպիտներով. խաւար ու պայծառ արև, աւերակ և վերակենդանութիւն։ Բացվում է հայ քնարի առաջ մի բոլորովին նոր աշխարհ...

Երկու բառով ասենք թէ ով էր Ալիշանի ուսուցիչը։ Նա սովորեց այդ նոր հնչիւնները, այդ մաքուր ոգեւորութիւնը ուղղակի ժողովրդից։ Մխիթարեան վարդապետներից նա էր, որ սկսեց ուսումնասիրել, հրատարակել մեր ժողովրդական երգերը։ Եւ այնքան սիրեց այդ ռամիկ, բայց սիրտ դրաւող և հոգի յափշտակող բանաստեղծութիւնները, որ թարգմանեց նրանց անգլիերէն լեզուով *)։ Թերթեցէք այդ փոքրիկ ժողովածուն, և ինչ կը տեսնէք.—այդտեղ է մեր հռչակաւոր «Կռունկը». այդտեղ ժողովրդի մարդը ողբում է դժբախտ հայ աղջկան,

*) Հրատարակված են, հայերէն բնագրի հետ, Վենետիկում 1852 թ-ին, „Armenian popular songs“ վերնագրով։

որ կին պիտի գնայ թաթարին. այդտեղ բոլորած է գիւղական հարսանիքը, ուր թագուհին փայլուն աստղ է. այդտեղ խօսում է սէրը, քչքչում են անուշ ջրերը, բլբուլն ու վարդը սիրային պայքարի մէջ են, մայրը ողբում է մեռած երեխային, երեխան «Լուսացաւ, լուսացաւ» է երգում, Ջուղայի ժողովուրդը իր ահռելի դերեվարութեան վրա է արտասվում։ Որքան բազմազանութիւն, որքան ճշմարտութիւն, որքան կեանք...

Հեռաւոր իր վանքից, հեռու հայրենիքի ժխորից, Ալիշանը այդ երգերի միջոցով առնում է հայ ժողովրդի հոտը, տոգորվում է նրա սրտից բղխած զգացմունքներով։ Ու պատասխանում է բանաստեղծ ժողովրդին, դրելով իր «Պլպուլն Աւարայրի»-ն, իր «Հայոց Աշխարհիկը» և մի շարք այլ երգեր, ջերմ սիրով տաքացրած, անզուսպ կարօտով կենդանացրած։

Գործը կատարված էր, մեծ գործ։ Տաղանդը կատարեց այդ գործը։ Հայ բանաստեղծութիւնը այլ ևս բառախաղ չէր, արհեստ չէր, հնադարեան փառահեղ դիակ չէր. նա դարձաւ սրտի խօսք, ամենքին հասկանալի, ամենքին սիրելի։ Նա գնաց երգելու, զարթեցնելու, միտք ու խորհուրդ յարուցանելու։

Այսպէս էր Ալիշանը։ Եւ Պէշիկթաշլեանը նրա աշակերտն էր։

IV

Պէշիկթաշլեանը շատ բաներ ունի, որոնք ցոյց են տալիս թէ դա վենետիկեան մի հարազատ սան էր։ Գրել է նա շատ դրաբար ոտանաւորներ. և թէ դուք դժուարանում էք կարդալ ու հասկանալ դրանց, ես կասեմ որ դրանով շատ մեծ կորուստ չունիք։ Դրանք պարզապէս Վենետիկի արտադրութիւններ են։ Վերցնենք, օրինակի համար, հէնց ամենամեծ ոտանաւորը, որ նուիրված է

Մխիթարեանների աբբահայր Գէորգ Հիւրմիւզեանին։ Այդ ներբողի մէջ Պէշիկթաշլեանը ոչինչ ինքնուրոյնութիւն չունի, նա միայն աշակերտ է, Բագրատունու և միւսների աշակերտ, ջանասէր հետևող միայն։ Կամ թէ նայեցէք «Հրաւէր ի մարտ Խոսրովու Մեծի» երգը։ Ի՞նչ էք տեսնում։—Նոյն վենետիկեան փքուն, արհեստական ներբողը։

Պէշիկթաշլեանը այդ չէ։ Ալիշանի պէս ահա նա էլ գրում է աշխարհաբար ոտանաւորներ. և բոլորովին ուրիշ Պէշիկթաշլեան ունենք մեր առջև, այն Պէշիկթաշլեանը, որին ճանաչում ենք ամենքս։

Ինչպէս իր ուսուցիչը, նա էլ վառված է մաքուր, սուրբ հայրենասիրութեամբ. բայց միայն այդ չէ նրա քնարը հնչեցնում։ Նրա և Ալիշանի մէջ մեծ տարբերութիւն է գոյանում, որ դարձեալ միջավայրի արդիւնքն է։ Ալիշանը մնաց վանքի մէջ, իսկ Պէշիկթաշլեանը մտաւ աշխարհ, ուր կայ և սէր, ուր

Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ
Ջիրար չոյեն սիրատարփիկ։

Բացի դրանից, նոյն իսկ հայրենասիրութիւնն էլ կեանքի մէջ ուրիշ հնչիւններ ունի, ուրիշ տրամադրութիւններ է ցոյց տալիս, քան վանքի մէջ։ Ինքը, Ալիշանը, գեղեցիկ կերպով որոշում է իր դրութիւնը, ասելով թէ խաւարի մէջ նստած՝ լոյս է որոնում, այսինքն Աղրիական ծովի փոքրիկ կղզու վրա մենացած հայրենիք է որոնում։ Այդքան հեռաւորութիւնից նա չէր կարող տեսնել իրականութիւնը, մտնել նրա պահանջների մէջ, զգալ, մտածել, յուսալ ժողովրդի հետ։ Եւ նա երգում էր անցեալը, իսկ ներկայի վերաբերմամբ յարութիւն էր աղերսում։

Բայց մի՞թէ այդքանն է միայն հայրենասիրութիւնը։

V

Բանաստեղծներ կան, որոնց կարող ենք նմանեցնել մի որ և է ծառի ճիւղի վրա նստած թռչունին։ Նստած է թռչունը, իր կրակոտ երգերն է հնչեցնում և բոլորովին գործ չունի թէ ինչ է կատարվում ճիւղից ցած, երկրի վրա։ Առաւօտ և երեկոյ, պայծառ և մռայլ եղանակին, ամեն րոպէ, երբ նա ունի երգելու տրամադրութիւն, միակերպ է հնչում նրա ձայնը։ Ի՞նչ է երգում։ Արդեօք հզօր, գեղեցիկ բնութիւնը թէ իր զգացմունքները։ Այդ մեզ համար միևնոյն է։ Մենք միայն տեսնում ենք, որ նա օդի երգիչ է, որ նա չատ անգամ ազդում է մեր հոգու տրամադրութեան վրա, մեզ ուրախացնում է, վշտացնում է, բայց չարունակ բարձրից, երբէք մեզ չը նայելով։

Այդպիսի բանաստեղծներին իսկական բանաստեղծ են անուանում։

Բայց կան և այնպիսի բանաստեղծներ, որոնք, ընդհակառակն, բարձր ճիւղի վրա նստել ու երգել չեն կարող։ Նրանք մտն են դալիս երկրի վրա, նրանք ապրում են մարդկանց մէջ և նրանց երգը հնչում է ժողովրդի, ամրոխի ժխորի միջից, գոյութեան համար կռիւ մղող մարդկանց չարքերից։ Այդ բանաստեղծները սիրում են բնութիւնը, զգացմունքի մարդիկ են, բայց նրանց երգը թռչունի երգը չէ, այլ մարդկային կեանքի երգը։ Նա լալիս է, հառաչում է, ծիծաղում է, բայց լացի, հառաչանքի, ծիծաղի և խնդութեան առարկաները վերացական չեն, եթերի մէջ չեն ապրում, այլ մեր իրական հողի վրա։

Այս տեսակ բանաստեղծները հասարակական գործիչներ են, ժողովրդի մտաւոր և բարոյական չահերի ծառայողներ են, իսկ նրանց ստեղծագործութիւնները հրապարակախօսական երգեր են։

Սրանց իսկական բանաստեղծ չեն անուանում։ Բայց ինչ փոյթ։ Գեղագիտական գրված օրէնքները, որոնք միանգամից ասել պրծել են թէ բանաստեղծութիւնը աստուածների ձայնն է, կարող են նոյն իսկ արհամարհել այն բանաստեղծներին, որոնք ստորացնում են սուրբ և մաքուր արուեստը, ծառայեցնելով նրան մարդկանց չարերին.—բայց ազգերը հէնց այդ տեսակ երգիչներին են իրանց համար նուիրական անուններ դարձնում։

Անհասկանալի չէ այս երևոյթի պատճառը։ Իւրաքանչիւր ժողովուրդ իր ցաւերն ու վէրքերն ունի, մտածող, իդէալ սրբացրած մի բաղմութիւն է. գեղեցիկ են, այո, երկնային ձայները, արշալոյսը, գարնան գոյները, ամբողջ բնութիւնը իր ահեղ ու ժպտուն խաղերով. բայց մարդու սրտին աւելի մօտիկ է ինքը մարդը, մարդ ոչ թէ բառի կենդանաբանական մտքով, այլ մտածող, տանջվող, ճանապարհներ որոնող մարդը։ Եւ այն բանաստեղծը, որ ոգևորվում է այդ մարդով, այն բանաստեղծը, որ ապրում է, տանջվում է իր ժողովրդի հետ և նրա համար, որ ցոյց է տալիս ճանապարհ, ոգևորում, տաքացնում է մարտնչողին, սպեղանի է դնում այրող վէրքի վրա, մարգարէանում է, հեռաւոր գաղափարի ճրագն է վառում,—այդ բանաստեղծը միայն արժանանում է «ազգային բանաստեղծ» անուան և դառնում է ժողովրդի հերոսը, պարծանքը, պաշտամունքը։

Մեր նոր, ժողովրդական գրականութեան ամբողջ ընթացքում մենք շատ քիչ ունեցանք ճիւղի վրա նստած երգիչ—թռչուններ։ Խստապահանջ գեղագիտութիւնը, իր օրէնքներին նայելով, պիտի ասէ թէ հայը բանաստեղծութիւն համարեա չունի, թէ մենք բանաստեղծական ժողովուրդ չենք։ Բայց չը խռովենք մի այդպիսի վճռից։ Մենք մեր կեանքն ենք ունեցել և ունենք։ Այդ կեանքն էլ կարդարացնէ մեզ, եթէ արդարանալու պահանջ լինի. այդ կեան-

քը հասկացնել կը տայ, որ մենք ուրիշ կերպ չէինք էլ կարող լինել։

Ի՞նչ է ասում մեր կեանքը։ Հասարակական գաղափարներ են ծնվում, մտնում են մեր մէջ, մրրկում են մեր կեցութիւնը, պահանջներ են առաջացնում, ծանր՝ կեանքի ու մահուան նշանակութիւն ունեցող պահանջներ։ Պէտք է այդ պահանջներին բաւարարութիւն տալ, իսկ մենք չունենք ուրիշ միջոցներ, բացի գրականութիւնից և գրագիտութիւնից, բացի անհատական, մասնաւոր ոյժերից։ Հասկանալի է, որ այնպիսի ժամանակներում, երբ ճանապարհներ բաց անել, կարիքներ պարզել և պակասութիւններ չտկել, նոր պայմաններ ձեռք բերել, վերածնվել, նորից մկրտվել է հարկաւոր, մեր բոլոր լաւագոյն մտքերը, մեր բոլոր զգայուն սրտերը պիտի հասարակական հոսանքների մէջ խրվէին։ Կեանքը եռում էր, չարունակ իրարանցման մէջ էր. կռիւ ու յոյս, դիմադրութիւն ու խիզախութիւն, երիտասարդ, դեռ դառն փորձերից չը հիասթափված կեանքի անհամբերողութիւնը, փութկոտութիւնը՝—անտարբերներ, սառն գեղասէրներ, ճիւղերի վրա առանձնացած երգիչներ չէին կարող տալ մեզ, քանի որ այնքան բան կար հողի վրա, մարդկանց չարքերի մէջ։

Եւ մենք ամենից շատ մի բան գիտէինք,—գրել, դատել, երգել՝ կեանքի մէջ մի գաղափար, մի ձգտում, մի դաւանանք անցկացնելու համար։

VI

Մեր Պէշիկթաշլեանն էլ այդպիսի բանաստեղծներից էր։ Նա արտայայտում էր հասարակական տրամադրութիւնները, նա տալիս էր իր ժամանակի հային իդէալներ.—ահա նրա փառքի ամբողջ գաղտնիքը։

Հարկաւոր էր տաղանդ, զգայուն ու սիրող սիրտ—

և բնութիւնը չէր զրկել դրանցից Պէշիկթաշլեանին։ Դրանից է, որ նրա խօսքը ազդու էր, դրանից է որ նա խօսում էր մարդկանց սրտերի հետ։

Մենք չենք ասում թէ Պէշիկթաշլեանը բացառապէս հասարակական դաղափարներով էր ոգևորվում։ Ո՛չ։ Նրա բանաստեղծութիւնների մէջ դուք կը գտնէք և ճիւղի վրա նստած երգչի մեղեդիները։ Սէրը, գեղեցկութիւնը, գերեզմանը խլում են նրա սրտից քնարերգական հընչիւններ։ Բայց դա գլխաւորը չէ։ Գլխաւորը «Ա՛ռ զեփիւռն Ալէմդաղիի»-ն չէ, որքան էլ նա գեղեցիկ լինի, այլ «Եղբայր եմք մեք»-ը։

Պէշիկթաշլեանը կեանքից հեռու գտնվող, կեանքին իբրև հանդիսատես նայող մարդ չէր, այլ հասարակական գործիչ։ Կ. Պոլսում նա մէկն էր այն փոքրիկ խմբից, որ հայկական թատրոն ստեղծեց և պահեց։ Զունենալով դերասանի ընդունակութիւն, նա բեմ էր դուրս գալիս, խաղում էր, որպէս զի իր անձնական օրինակով գրաւէ ուրիշներին էլ, ոգևորէ։ Նոյն այդ թատրոնի համար նա գրում էր ողբերգութիւններ, թարգմանութիւններ էր անում։ Նա ուսուցիչ էր և աշխատում էր հայերէն մոռացված, արհամարհված լեզուն բարձր չրջաններում սիրելի դարձնել։ Եւ նրա ջանքերը աջողութեամբ պսակվեցին։ Նրա աշակերտուհիներից մէկն էր օտարացած օրիորդ Վահանեանը, որ ապագայում դարձաւ մեր գրականութեան մէջ յայտնի տիկին Ցիւսաբ։

Պէշիկթաշլեանը մէկն էր այն լուսամիտ հայ կաթոլիկ երիտասարդներից, որոնք գործում էին «Համազգեաց» անունով յայտնի բարեգործական ընկերութեան մէջ։ Այդ ընկերութիւնը կազմված էր կրօնական խտրութիւնները վերացնելու համար. նա ընդհանուր հայկական էր, և այնտեղ կարող էին եղբայրաբար հաւաքվել լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական հայերը՝ իրանց ազգի կրթական պէտքերը հոգալու համար։ «Համազգեաց» ընկերութիւնը կաթոլիկ ֆանատիկոսութեան ստոր ալարքների զոհ դարձաւ և փակվեց։ Բայց նրա տեղ բացվեց «Բարեգործական Ընկերութիւնը», որի նպատակն էր հողագործ ժողովրդին օգնութեան հասնել, պատրաստելով գիտութեան զէնքերով զինված հողագործներ և հայ ժողովրդի մէջ այն գաղափարը մարմնացնելով, թէ ամեն մի ազգի ոյժը նրա հողն է։ Այս ընկերութեան հիմնադիրներից մէկն էր դարձեալ Պէշիկթաշլեանը։

Այսպիսի գործեր կատարող մի մարդ չէր կարող լոկ կոյսի, զեփիւռի, լուսնակի երգիչ մնալ։ Հասարակական ասպարէզը ոգևորում է նրան աւելի սաստիկ քան ծաղիկների բոյրը և նա իր քնարով արձագանք է տալիս մեր ամենանուիրական ձգտումներին։

VII

Պէշիկթաշլեանի ոտանաւորները մի անգամ կարդացողը կը տեսնէ թէ ինչ սիրտ, ինչ խառնուածք էր ստացել բանաստեղծը բնութիւնից։ Դա մի մեղմ, փափուկ, համարեա կանացի սիրտ է։ Մրրիկներ չը կային նրա հոգու մէջ,—մեղմ, սիրող, չօյող զեփիւռն էր այնտեղ։ Եւ ըմբոստ, յանդուգն, ռազմիկ չէ նրա քնարը։ Պէշիկթաշլեանը չէր յարձակվում մեր Գամառ-Քաթիպայի նման, չէր չանթահարում, կծու, անողորմ ծաղը չունէր. նա մրմնջում էր, նա աղօթում էր, նա պաչում էր։

Այդ տեսակ սրտին տրված է նուրբ զգացմունքներ արտայայտելու չքնաղ կարողութիւնը։ Եւ Պէշիկթաշլեանը, իրաւ, մտցնում է մեզ իր զգացմունքների զեղեցիկ, մեղմ աշխարհը, հրապուրում, յափշտակում է մեզ իր գոյների, մեղեդիների քնքշութեամբ, մեղմութեամբ։ Նրան աջողվում են և քնարերգական զեղումները, բայց և այնտեղ, ուր նա իր ժամանակի մարգարէն է, ուր նա գաղափար, ուխտ ու սրբութիւն է երգում,—այնտեղ էլ հրա-

2631-2004

բղխի ժայթքումները չեն մեղ զգալ տուողները, այլ նոյն մեղմութիւնը, նոյն զեփիւռային քնքշութիւնը, նոյն հանդարտիկ օրօրվող, թիթեռնիկի պէս թռչող զգացմունքները։

Եւ որքան գեղեցիկ է Պէշիկթաշլեանին յատուկ այդ շեշտը մանաւանդ այնտեղ, ուր իրականութիւնն է մեղեդիներ թելադրողը։

Ահա դարաւոր անգութ, հրէշային երևոյթը. կրօնը բաժանել է հայ ժողովուրդը զանազան մասերի, և արիւնակից եղբայրները դազանների պէս ընկած են միմեանց վրա, ծուատում են իրար։ Որքան արիւն, որքան անէծք, խայտառակութիւններ են երևան եկել այդ հողի վրա,— զարհուրելի է մտածելն անգամ, զարհուրելի է պատմութեան էջերին նայելն անգամ։ Բայց ահա հեռանում է դարերի մթութիւնը. արշալոյս է բացվում դժբախտ կրուողների, իրար յօշոտողների գլխին։ Լուսաւորութեան առաջին շառաւիղները ցոյց են տալիս միմեանցից անջատված, խորթացած եղբայրներին թէ որքան վայրենի, որքան դազանային էր նրանց դարաւոր ատելութիւնը, անհաշտութիւնը։ Պէտք է զգացվում միմեանց ձեռք մեկնելու։ Ձեռք մեկնել ոչ թէ մագիլները միմեանց մսի մէջ խրելու, այլ եղբայրաբար սեղմելու, թօթվելու համար։ Համբոյր և ոչ անէծք, միութիւն և ոչ թշնամութիւն. սա անհրաժեշտութիւն է դառնում, սա ահագին պահանջ է, սա կեանքի և մահվան հարց է։

Խորհրդաւոր, գեղեցիկ ժամանակ։ Ամեն ինչ պատրաստ է հաշտութիւն և եղբայրութիւն հաստատելու։ Պակասում է միայն համբոյրի օրհներգը։ Եւ Պէշիկթաշլեանը ստեղծում է այդ երգը։ «Համազգեաց» ընկերութեան գործիչ, մէկը այն վառվռուն երիտասարդներից, որոնք մի կողմից «եղբայրութիւն» էին աղաղակում և միւս կողմից կռիւ էին մղում ֆանատիկոսութեան հրէշաւոր ճի-

գերի դէմ, նա դիմում է իր քնքոյշ քնարին, որի լարերից թափվում են պարզ, բայց անմահ հնչիւններ.

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք
Որ մրրկաւ էինք զատուած...
... Մէկ տեղ լացինք մենք ի հընում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըզխնդում
Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան.
... Մէկտեղ յոգնենք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

Տասնիններորդ դարի հայ գրականութեան ամենագեղեցիկ գոհարներից մէկն է սա։ Գոհար ոչ թէ իր ձևով, իր հարուստ շողշողուն արտաքինով, այլ իր մտքով, իր հոգով։ Մեր լեզուի բառերը շատ անգամ չեն այսպէս հիւսվել, մի մեծ գաղափար, մի նուիրական հասկացողութիւն արտայայտելու, ձևակերպելու համար։ Պէշիկթաշլեանը ոչ ոքին չէ մեղադրում, նա պատճառները չէ քննքննում, դարաւոր դրամայի սև գործիչներին չէ անիծում։ Նա միայն կանչում է իր սիրող, քնքոյշ սրտի ամբողջ կատաղութեամբ. «Եղբայր եմք մեք»։

Եւ այդ ոսկէ խօսքերը չը մնացին թղթի վրա. նրանք երգ դարձան, թեաւոր երգ, որ թռաւ տարածվեց ամբողջ հայութեան մէջ. մանուկ ու ծեր, տղայ և աղջիկ այսօր էլ երգում են «Եղբայր եմք»։

Հազարների, բիւրերի բերանում այսպիսի սուրբ, անմահական մեղեդի դնող բանաստեղծը, դրանով միայն այնքան բան էր անում, որ բաւական էր ընդհանուր հիացմունքի և երախտագիտութեան արժանանալու համար։

VIII

Բայց Պէչիկթաշլեանը միայն այդ չէ արել։

Կարդացէք «Ծերն Վանայ» երգը։ Ի՞նչ մեղմ, ողբացող իրականութիւն։ Հարստահարվող, թշուառ գաւառն է այդտեղ երգում։ Պարզ չէ ամեն ինչ. բանաստեղծի լեզուն ազատ չէ, նա չէ կարողանում պատկերը նկարել ամբողջովին։ Հասկանալի է թէ ինչու. թիւրքական հողի վրա է նա ապրում, թիւրք իշխանութեան հպատակ է։ Բայց ծեր վանեցին, այնուամենայնիւ, հասկացնում է մեզ իր դարդը, մանաւանդ երբ իւրաքանչիւր տուն վերջացնում է այս տողերով

Գոց են ամպով ասաղունք... և յոյս
Դեռ շատ հեռու է արշալոյս։

Ծերը իր Մեհիկ աղջկայ հետ է խօսում, աղջկայ սիրահար Ա.րտակի երգն է կրկնում։ Ի՞նչ է երգում Ա.րտակը։

«Ո՞հ, ինչուան ե՞րբ հաճոյք ու սէր
«Առանց սուգի պիտի չըլլան»։

Հեծեծող իրականութեան երգն է սա։ Եւ ծերունին ինքը չէ կարող այդ հառաչանքի վերջը տեսնել։ Նա հին սերունդ է, նա իջնում է աշխարհի ասպարէզից, նա գնում է.

Հոս են չիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամեն դամբան.
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
Հեծեն, ննջող ոգւոց փոխան։

Ինքն էլ այդ չիրիմներից մէկը կը դառնայ, մի հեծող նոճ ունենալով իր վրա։ Որովհետև հին են նրա ցաւերը, հեծում է և նա։ Բայց Մեհիկը, թարմ, նորաբոյս սերունդը.

Եւ դու Մեհիկ կուլաս անյոյս.
Ո՞հ, ոչ. գընա... դայ արշալոյս։

Գալիս է արշալոյսը. այդ զգում է բանաստեղծի հոգին, չէ՞ որ գիշերային մթութեան մէջ նիրհող թռչնիկը ինքնաբերաբար բարձրացնում է գլուխը արշալոյսից առաջ, զգալով որ գալիս է արշալոյսը։ Այսպէս է և հասարակական տենչերով լցված բանաստեղծը. նա տեսնում է առաւօտեան լոյսը հեռուից, շատ հեռուից դեռ այն ժամանակ, երբ շուրջը ամեն ինչ թաղված է խաւարի մէջ։

Ո՞րտեղից է այդ մարգարէութիւնը բանաստեղծի մէջ։ Կարդացէք «Հայ քաջորդի», «Թաղումն քաջորդւոյն *), «Հայ քաջուհին»։ Վսեմ երգեր, որոնց մէջ երիտասարդ, թարմ յոյսն է թրթռում։

Ո՞վ էր տալիս այդ հերոսական տեսիլները Պէչիկթաշլեանին։ Կեանքը, հայկական իրականութիւնը։ Եւ եթէ մենք կամենում ենք իմանալ թէ իրականութիւնը ինչպէս էր ստեղծագործել տալիս, պիտի լսենք մի պատմուածք, որ ցոյց է տալիս Պէչիկթաշլեանի ամբողջ ներքինը։

Ծանօթ է ամենքին Զէյթունի ապստամբութիւնը 1860-ական թուականների սկզբում։ Մի բուռն լեռնցի ժողովուրդ թիւրքաց կանոնաւոր և անկանոն զօրքերի խիստ յարձակմանն է ենթարկվում և հերոսական պատերազմ մղելով, փախցնում է յարձակվողներին։ Սկսվում է քննութիւն, զէյթունցիների կողմից մի պատգամաւորութիւն գնում է Կ. Պոլիս իրերի դրութիւնը և ապստամբութեան պատճառները պարզելու համար։ Այդ պատգամաւորութեան հետ էր և մի Զէյթունցի հերոս քահանայ։

Եւ ահա տեսարան։ Կ. Պոլսի մի հայ տան մէջ հաւաքված են մարդիկ, լսում են զէյթունցի քահանայի

*) Այս սքանչելի բանաստեղծութիւնը Պէչիկթաշլեանը վերցրել է իրլանդացի նշանաւոր բանաստեղծ Թոմաս Մուրից, բայց միանգամայն հայացրել է նրան։

պատմութիւնները։ Ներկայ է և Պէշիկթաշլեանը։ Քահանան ի միջի այլոց պատմում է թէ ինչպէս սաստիկ պատերազմից յետոյ, երբ ամենքը յետ էին քաշվել, մի հայ մայր խելակորոյս որոնում էր իր որդուն պատերազմի դաշտում։ Գիշեր է, բայց մայրը յոյս ունի թէ մթութեան մէջ կորոնէ, կը գտնէ որդուն, և չը գիտէ խեղճը որ որդին դիակ է, փռված պատերազմի դաշտում։

Լսում են ամենքը այդ սրտայոյզ պատմութիւնը։ Լսում է և Պէշիկթաշլեանը և լուռ ու մունջ անցնում է իր սենեակը, ուր պիտի գիշերէր։ Առաւօտեան նա մըտնում է տանտէրերի մօտ, հանում է գրպանից մի կտոր թուղթ, որի վրա մատիտով գրած ունէր մի ոտանաւոր։ Դա «Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ» ոտանաւորն էր, Պէշիկթաշլեանի գլուխ-գործոցներից մէկը։ Բանաստեղծը դրել էր վերնագիր «Ի սգալի մահ Զէյթունցի պատանւոյն»։ Մեզ ամենից ծանօթ երգն է դա, որի իւրաքանչիւր տունը վերջանում է այս երկտողով.

Թիւրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն*).

Կարիք չը կայ երկար կանգ առնելու այդ բանաստեղծական գոհարի վրա. նրա իւրաքանչիւր բառը ձեզ յայտնի է, իսկ եթէ յայտնի էլ չը լինի, կարող էք կարդալ գրքի մէջ։ Պէշիկթաշլեանի ամբողջ տաղանդը, ամբողջ բանաստեղծական քնքոյշ, աքանչելի հոգին դրված են այդ տողերի մէջ, որոնք մի գիշերվայ մէջ դուրս հոսեցին, իբրև վճիտ աղբիւր, նրա սրտի խորքից։

Այդ երգի շարունակութիւնն է «Թաղումն քաջորդւոյն», որ տարաբախտաբար այնքան յայտնի չէ մեզ, բայց

*) Կ. Պոլսի տպագրութեան մէջ այս ոտանաւորը չունի Զէյթուն անունը։ Այնտեղ այսպէս են վերջանում տները.

Խուժից մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի մեր տուն։

նոյնպիսի մի գոհար է։ Զէյթունցի երիտասարդի թաղման այդ գիշերային տեսարանի նկարագրութիւնը յուզիչ է իր աքանչելի պարզութեամբ, իր պատկերներով։

Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ,
Սարէ ի սար չարաչըչուկ տարին լուր
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ
Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ
... Պէտք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցուէր ազատորդի քաջորդին,
Նա յետ մարտին կարծես յոգնած կու հանգչէր
Ու վերարկուն կարմիր բաւէր իւր անձին։
Անձայն ու կարճ «Ննջեցեալոց» մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց Ա՛ստուծոյ,
Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց
Թոյլ չի տըւաւ հառաչ մ՚ ու ճիչ հանելոյ։

Մեր ամբողջ նոր բանաստեղծութեան մէջ դուք հազիւ թէ գտնէք իր տեսակով այսպիսի աննման տողեր, այսպիսի միաձոյլ, չքնաղ հիւսուածք, որ միևնոյն ժամանակ այսքան վեհութեամբ պատկերացնէր ժողովրդական մարտը, դիւցազնութիւնը։. Պէշիկթաշլեանը այս պատկերների մէջ հասնում է ստեղծագործական զարմանալի բարձր ոյժին։

Ո՞րն է այդ ոյժի գաղտնիքը։ Ժողովրդական գաղափարը, ժամանակի հոսանքները, հասարակական կեանքի եռանդուն, յուսալից զարկերը։ Թարմ ու կայտառ, արհամարհող ու երգող դիւցազնութիւնն է դա, որ հաւատում է իրան, որ հեռու է յուսահատութիւնից, որ ամբողջովին կեանք է, ապագայ է։ Եւ այդ ժամանակների երգիչը չէր կարող ժողովրդի, ամբողջ ազգի սիրելին չը դառնալ։ Նրա երգը ժողովրդական գործն էր. նրա մեղեդիները ամեն մէկը պիտի կրկնէր, ամեն մէկը պիտի համարէր իր սեփական սրտի զգացմունք։ Պէշիկթաշլեա-

նը ժամանակի մարդարէն էր։ Նա զգաց թէ ինչ նոր վիճակ է ծնվում հայերի մէջ, նա մեր ինքնաճանաչութեան, մեր գիտակցութեան կանուխ առաւօտի աւետաբերը դարձաւ։ Եւ նրա հետ մենք ամենքս էլ սկսեցինք երգել.

Ո՞հ ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փըչես հովիկ...

IX

Շատ չեն, ասացինք, Պէշիկթաշլեանի ոտանաւորները։ Շատ չեն,—ասենք այժմ—այնպիսիները այդ ոտանաւորների մէջ, որոնք վերոյիշեալների նման ամբեն հայի սրտի խօսքը դառնային։ Սէր ու կոյս էլ է երգել Պէշիկթաշլեանը. բայց սիրոյ Պէշիկթաշլեանը համեմատվել անգամ չէ կարող «ազատորդու» թաղումը երգող Պէշիկթաշլեանի հետ։ Անհատական, եսական զգացմունքների արտայայտութեան մէջ մեր բանաստեղծը մեծ, ինքնուրոյն դէմք չունի. մինչդեռ հասարակական գաղափարների շրջանում նա մի հսկայ է։

Քիչ է, այո, նա երգել այդ հասարակական գաղափարները։ Գոնէ մենք, ընթերցողներս, կարդալով «Հայ քաջուհին», «Եղբայր եմք»-ը, ուզում ենք որ այդպիսի բաներ շատ տուած լինէր մեր քնքշասիրտ, ազնիւ բանաստեղծը։ Բայց այդ քիչն էլ շատ բաւական է նրան հասկանալու, նրա յիշատակը սրբացնելու համար։

Եւ ինչպէս կարող էր շատ բան տալ Պէշիկթաշլեանը։ Հասարակական այդ համակրելի գործիչը մի ճրագ էր, որ այրվեց հասարակութեան համար, այրվեց ու շուտ վերջացաւ։ Ոչինչ չունէր նա իր համար, սեփականութիւն չը ճանաչեց նա։ Ապրեց մենակ, ապրեց համեստ և մեռաւ աղքատութեան մէջ։

Բայց որքան երջանիկ էր այդ մարդը։ Հակառակորդ, թշնամի չունեցաւ, նրան յարգում և սիրում էին նրա ծա-

նօթները, բարեկամները։ Դեռ այն ժամանակ, երբ նա ապրում էր և թոքախտը աւերմունքներ էր գործում նրա սրտում, նա արդէն ստացել էր իր մաքուր, բիւրեղեայ սրտի, իր գաղափարական գործունէութեան լի ու լի հատուցումը։ Նրան գնահատեցին դեռ այն ժամանակ, երբ նա ապրողներից էր։

Բացվեց գերեզմանի դուռը։ Տարիներ եկան անցան այդ գերեզմանի վրայով։ Բայց ապրեցին «Դու զով խընդրես»-ը, «Ո՞հ ինչ անուշ»-ը։ Եւ Պէշիկթաշլեանը դարձաւ այն, ինչ է այժմ—մի նուիրական սրբազան յիշատակ։

Այդպէս էլ նա կը մնայ...

Լ. Ի. Օ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ԱՒ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Մկրտիչ Պէշիկթաշլեանի գործերը ցան և ցիր ինչ որ գտանք աս հատորիս մէջ բովանդակեցինք։ Իր աշակերտներէն և իր բարեկամներէն ոմանց՝ և Մուրատ-Ռափայէլեան ընկերութեան օգնութիւնը թէ որ չըլլար՝ աս հրատարակութիւնը չէ թէ միայն աւելի պակասաւոր կ'ըլլար, այլ թերևս տեղի ալ չէր ունենար։ Ուստի անոնց ամենուն որ մինչև, Պէշիկթաշլեանի նաև մէկ փոքրիկ հեղինակութիւնը մեզի յանձնեցին չնորհակալ կըլլանք, վասն զի ազգիս ծառայութիւն մը ըրած են իր ընտիր զաւակաց մէկուն մատաւոր ծնունդը և յիշատակը իրեն պահելով։

Այս համառօտ յառաջաբանը գրողները ան տղայական եռանդէն վեր կը փափաքին ըլլալ, որ գրաւոր գործ մը ընդհանրութեան ներկայացնելուն, ծաղիկներով դափնիներով կը պսակէ զանի, չլացեալ ինք՝ չլացնել կ'ուզէ զամենքը. Գործը ինք կը խօսի, և քննաբանը կը դատէ։ Բայց Հեղինակին վրայ խօսելու փափաք ունէինք, մանաւանդ որ զինքը առաքինի, համեստ, անչահասէր, ճըշմարտասէր և ճշմարտախոյզ անձ մը ճանչցեր էինք։ Տեսեր էինք զինքը վարժապետ որ առջիններուն մէկն եղած էր որ իր պաշտօնին վայլած պատիւը պահեց, և բաղդով իրմէ վեր եղած մարդկան բարեկամութիւնը գրաւեց՝ առանց բարեկամութեան փոքրիկ արատ մը բերելու։ Բայց այդ փափաքը լաւ խորհրդածութենէ մը վերջը մեկդի՝ և անոնց թողուցինք որ մեզմէ լաւ կը ճանչնեն զմեր Հեղինակը, և հարկաւոր համարեցանք խօսքը հեղինակին տալ և իր վեր-

ջին և երկարատև հիւանդութեան մէջ քանի մը նամակներէն քաղել քանի մը խօսք և ընթերցողաց առջև դնել այս քանի մը տողերս ալ՝ որ աւելի աղէկ կը ճանչցնեն զինքը, քան թէ օտարներուն երկայն գրութիւնները։

Տարի մը և աւելի ժամանակ, երբ հիւանդութիւնը զինքը գրեթէ անկողնին դամեց և որ զինքը գերեզման պիտի իջեցնէր միշտ գրեթէ չըջապատեալ իւր բարեկամներէն՝ աշակերտակիցներէն և աշակերտներէն կեդրոն մը եղած էր ազգային հանճարոյն։ Հոն կը տեսնուէին շաբունակ՝ իւր մտերիմ բարեկամը Գ. Օտեան էֆէնտին, Սագըզ Յովհաննէս էֆէնտին, Եուսուֆեան Տիգրան էֆէնտին, Համամճեան Սարգիս էֆէնտին, Տոքթորներ՝ Բարունակ պէյ, Մոզեան, Շիշմանեան, Ռափայէլեան, Քեաթիպեան, Տեարք, Տիկնայք և Օրիորդք, յարգոյ ընտանեաց՝ Ապտուլլահեանց, Արզումանեանց, Եսայեանց, Միսաքեանց, Նէվրուզեանց, Նորատունկեանց, Հէքիմեանց, Հիւրմիւզեանց, Վահանեանց, Փորթուգալեանց կայլն, կայլն, որոնց մէջ աւելի գորովալից և աղնուական ձեռքեր ջանացին խեղճին վիշտերը սփոփելու։ Վահանեան Տիկնոջ համար խօսելով մտերմական նամակի մը մէջ տեսէք ինչպէս կը խօսի մեր բանաստեղծը։

„Օրհնեալ ըլլան անոնք որ իրենց սրտին գանձերը „աննախանձ կը բանան տառապելոյն առջև, սակայն „ի զուր կը չողայ արևը գօս արմատին վրայ, նա ոչ ոս„տեր ընձիւղէ և ոչ ծաղիկ բողբոջէ"։

Ահա քանի մը տող ալ Մուրատ-Ռափայէլեան ընկերութեան տարեկան խնջոյից վրայ, ուր գրեթէ միշտ ինք նախագահ կը նստէր առողջութեան ժամանակ։

„Մուրատեան Ռափայէլեան աշակերտք ի յիշատակ „Բարերարաց տարեկան տօնախմբութիւն մը կատարեցին „անցեալները. ժողովականք ամենքն ալ շատ ցաւեր են իմ

„բացակայութեանս վրայ, հապա իմ սիրոս որչափ ելաւ
„չի կրնալուս ներկայ գտնուիլ հոն, ու իրենց հետ քամել
„զուարթարար բաժակը, որուն խորը միայն պատրանք
„չի գտնուիր. երանի՜ այն բարեկամաց, երանի՜ այն սի-
„րելեաց որ ուրախական հանդիսի մը մէջ կամ սեղանի
„մը շուրջը զիրար համբելով ոչ զոք պակաս կը գտնեն։
„Քանի մը ճառեր կարդացուեր են, ընկերներէն մէկը իւր
„ատենախօսութեան մէջ իմ յիշատակութիւնս ու իմ անձին
„նկարագրութիւնը գրեր է հանդիսականք յուզուեր և ուժ-
„գին ծափահարեր են, այս համակրութեանց ցոյցերը, ո՛հ
„յիրաւի շատ անուշ պէտք է ըլլան, որովհետև ցամքած
„սիրտ մը կրնան դեռ վերստին դալարացնել“։

Ապագայն իւր սրտին որդն էր, տկար ու հիւանդ՝
կարօտ ապրելու վախը զինքը կը սարսափեցնէր։

„Առնելիքներս, կ'ըսէ, կեցեր են այնպէս, ես քովս
„գտնուած ստակներս սկսայ ուտել, մէկ կողմանէ անոնք
„հատնին, ու եկամուտ մը չի գոյանայ՝ իմ ապագայս ինչ
„կըլլայ, եթէ ապագայ մը ունիմ։ Տարի մըն է բոլոր
„բաղձանքս այն էր թէ վիճակի մը փոքր ապահովութիւն
„մը ստանամ, գիտենամ թէ ամիսը որչափ գումարի վրայ
„կրնամ վստահ ըլլալ, ընդունայն բաղձանք, անստուգու-
„թիւն, դարձեալ անստուգութիւն։

Բարեբաղդութիւն մ'է որ աշխարքիս վրայ երբեմն
ազնուական անձինք կը գտնուին սրտիւ և վիճակաւ։
Այսպիսի մէկը իր անունը քօղարկելով, յիսուն լիրա յու-
զարկած էր մեր հիւանդին որուն այս անակնուելի օգ-
նութիւնը փոքրիկ յոյս մը տուաւ, իւր բարեկամաց քա-
ջալերութեանցը հետ խառնուելով։ Ասոնցմէ ոմանք դո-
վելի եռանդեամբ, Նաումի թատրոնը 'ի նպաստ իրեն
Արշակին ողբերգութիւնը ձեւացուցեալ տուին. և Մ. Ս. Հէ-
քիմեան, իւր Սմբատայ ողբերգութեան առաջին ներկայ-
ացումը նոյն նպաստին նուիրեց. հասոյթը ինչ որ կրցաւ
ըլլալ իրեն յանձնուեցաւ. ան փոքրիկ գումարները իրեն

դրամագլուխը սկսան պատրաստել, երբ հիւանդութիւնը
օր օրի կը զօրանար և կ'ըսպառնար։

„. . . Երէկ հազէն սաստիկ տանջուեցայ... դուք ողջ ա-
„ռողջ՝ անցաւ ու անվիշտ եղէք միշտ, այսպիսի իղձեր
„որչափ աւելի եռանդեամբ կը սլանան մարդուս սրտէն
„երբ նա ցաւոց մէջ կը հեծէ“։

„Իմ առողջութեանս վիճակը մի և նոյնն է, կրնամ
„ըսել աւելի վատթար... կը սիրէի ատեն մը կեանքը և
„իրաւունք ունէի սիրելու. բայց հիմայ որ անհուն զգա-
„ցումներս՝ անհուն պատրանքներ դարձեր են՝ կեանքը
„ինձի համար ոչ հրապոյր և ոչ արժէք մը ունի, ուստի
„անոր կորուստն ալ՝ կամ կորստեան երկիւղը չի կրնար
„այլ ևս երևակայութիւնս վրդովել“։

„Շատ հանդիստ ուղևորեցայ ի Բերա, օդը գեղե-
„ցիկ էր ինչպէս գիտէի, պահ մը կառքին պատուհանէն
„անյագ նայեցաք մը նետեցի երկնից՝ տեսայ զինքը վեր-
„ջապէս իր ամբողջութեանը մէջ, որչափ ատեն է որ գրե-
„թէ զուրկ եմ իրմէ, ժպտեցաւ ինձի բոլոր իւր գեղովը,
„այլ ինչ օգուտ, ուրիշ ժպիտ մը չունէի ես իրեն փոխա-
„րինելու“։

„Օդոց սպառնալիքէն խուսափուկ, փութացի հայ-
„րենի շուքին տակ ապաստանիլ, չկայ քան զայն ապա-
„հովագոյն ապաւէն մը որչափ ալ աղքատին ըլլայ։ Ողբա-
„նուագ տատրակը իւր յետին և ամենէն աղէկիղիկ վու
„վուն արձակելով, մուսայից գգուելի գլխիկը դողդոջ թե-
„ւերուն տակ կը հանգչեցնէ, լսեցի նորա սքանչելի մնչիւ-
„նը և արձագանգն արդէն սկսաւ հնչել հոգւոյս մէջ“։

„Ո՜րչափ գեղեցիկ են օդերը, բայց ես չարժելու կա-
„րողութիւն չ'ունիմ, որ գոնէ ձիով փոքրիկ շրջան մը
„ընեմ, որչափ երկայն տևեց այս եղերական տրամը ու
„երբ պիտի գոցուի վարագոյրը“։

Վերջապէս վարագոյրը գոցուեցաւ նոյեմ. 29—1868
և ազգը որ խորութեանց նիւթին հարուստ է, գոնէ Պէ-

չիկթաշլեանին դագաղին բոլորտիքը միաբան էր, և իր մեծ ու պզտիկ մասերն, և ամեն վիճակի մարդիկ յուղարկաւորութեան փառաւոր հանդիսին գտնուեցան, դամբանականները խօսուեցան և հանդանակութեամբ համեստ մահարձան մը դրուեցաւ գերեզմանին վրայ 'ի Ֆէրի քէօյ։

Իր մտերիմ բարեկամը Գ. Օտեան էֆէնտի ի պատասխանի իւր այս տողերուն,

(*) „'Ի հանդիստն իմ հողոյ մըտից անդրէն ընկողմանեալ,
„Ո՜հ մերթ հոգիս ըզմայլեալ գայցէ վայրացն այն այցելու.
„Գոցէ ըզմարդ, գոցէ զպուրակ և զերգեցիկն թըռչնիկ.
„Եւ զքեզ քաղցրիկ բարեկամ որ զիս միայնդ յիշես և լաս։

այս ոտանաւորը իր շիրմին ուղղեց։

„Ցրտասարսուռ մառախլապատ ի վիմեդ
„Թող շող արփի ցոլայ ափռի յընդհանուրս
„Աւիւն հոգւոյդ ճաճանչ հատեալ յարփենեայն
„Ցալր ցոլացիկ ի թրթռականդ յերգս աղու
„Քնարաց ի քնարս իրր զնչոյլ յալեաց յալիս
„Աւանդեսցէ ապադայից զանուն քո,
„Պէշիկթաշլեան այս քո բաժին յետ մահուդ
„Եւ այս քաղցունք խառնեալ յարտօսր մըտերմիդ“։

Նոյնպէս Գեր. Երդուարդ Հիւրմիւզեան, այս տողերը իր շիրմին նուիրեց։

Աստ Պէշիկթաշլեանն հանգչի Մկրտիչ,
Անունն անամփոփ յանձուկս յայս 'ի կիճ.

(*) Տես „Մերձ ի մահ գրված“-ի վերջը։

Սիրելի ազգին, և ազգին 'ի սէր
Եղեալն անձնատուր բոլորանուէր,
Սիրտ ազնուագութ և հանճար վրսեմ
Գեղապարելով 'ի նմա 'ի ճահ ճեմ.
Ի մանուկ տիոց խոհեմ և ըզգօն
Քաղաքավարեալ 'ի բարս և 'ի կրօն
Քերթող հոգեշարժ 'ի թատր և 'ի քնար,
Ամբիծ յերկոսին դաշնակեալ զլար
Քառասնամենի ելիք ըզկենցաղ,
Համազգեաց բնաւից 'ի սուգ և աւաղ.
Նոցին շնորհապարտ սէր և վարկ անկեղծ
Կանգնէ զայս նըմա յիշատակ անեղծ։

Մեզի պարտք կը համարինք այս համառօտ յառաջաբանը վերջացնելով այս տողերով զոր իւր աշակերտաց առաջիններէն երգեց օրիորդն Սրբուհի Վահանեան (Տիկին Տիւ Սափ)։

Ոչ ես է նա՝ որ զիւր քընար ձօնեաց առ ազգ,
Առ հայրենիս.՝ Ոչ ես է նա՝ որ երգ աղու
Զարթուցանէր յաւերժակաց ըզդիւցազունս
Ի բազմամեայ խորախորհուրդ նիրհմանէ,
Ի տալ ճառել ըզհայրենեաց փառս 'ի թատերս,
Ըզտառապանս խորայատակ և զիւր վէրս։
Ոչ ես է նա՝ որ նուագաւոր յաղերսանաց
Հարք պատառեալ ըզդալկացեալ պատանս իւրեանց
Մերկանային զարիւնթաթաւ լանջս կարեվէր
Յայտ առնել թէ արիւն իւրեանց չըրջի 'ի մեզ,
Թ'են նոյն մեր քաջք, նոյն մեր ոսոխք, նոյն մեր չահք։
Ոչ ես է նա՝ որ մեղեդիք խանդավառ
Ի ցըրտահար վառէին սիրտս կայծ սիրոյ։
Երգոցն 'ի լուր՝ ատելութիւն, ոխ չիջանէր։
Այլունք՞ հրացայտք դորովանօք ժըպտէին.

Եւ զիրերօք փարէին սիրտք բաժանեալք.
„Եղբարք եմք մեք“ խընդաբարբառ ձայնեալ չուրջ։
Ոչ ևս է նա որոյ մըրմունջք ողբական
Սողոսկէին 'ի ցաւահար 'ի հոգւոջ,
Ի նըւագս ըսփոփեալ զայն հեծութեանց։
Տըխուր էր ողբն՝ 'ի մըթութեան զերթ տապան
Էր անուշակ իբրև ըզկոծս պըլպուլին,
Որք անկանին ստեղազարդ ընդ գիշեր։
Ոչ ևս է, ահ, լըռեաց տաւիղն. լըռեաց Տէր...
Մինչ լարէիր մուսայական ըզդաշնակ
Տալ 'ի յորդոր փորձել մատանցս, ո՛ քերթող,
Զըգիտէի թ'էր իմ քընար հընչելոց
Զայս սըգաւոր զիմ ողջոյն ահ առ քո տապան։
Զըկարծեցի թէ այս քան չոյտ դու կանգնելոց
Էիր չիրիմ վերայ ձըրից սըրտիդ մըտացդ։
Քառասուն ըզքև գարունք բարդեցին փառս.
Զայն ամենայն 'ի մութ կայան թաղեցեր։
Ծանո՛ւնք արդեօք թըւեցան քեզ սարդենիք
Որ ընտրեցեր ըզհողն ցուրտ քեզ բնակարան։
Հանգի՛ր ապա, Պէշիկթաշլեանըդ մեծոգի,
Մինչ մըտերիմքդ ըզտապանաւըդ լացցեն։
Հանգի՛ր, փանդիռն մինչ Թորգոմեան զգերեզմանաւդ
Կախիցէ զիւր սահար լարս անմըրմունջ.
Հանգի՛ր. անուն քո լիցի յօդ միութեան.
Հանգի՛ր, յուշ քո կեցցէ ցորչափ ազնիւն և՝ լաւն,
Ցորչափ հանճարըն պաշտեսցի. հանգի՛ր Ոգի։

Ի ԲԵՐԱՆՈՑ ՄԱՆԿԱՆ ԱՌ ՊԱՇՏՊԱՆՈՒՀԻՆ

—

Տէր, աղբիւր յորդ բարեաց,
Դեռաբոյս իմ կենաց
Գորովովըն ամբաւ
Հայրաբար գութ կալաւ.

Ո՞վ առատ պարգևաց.
Զի կրկին շընորհեաց
Հըրեշտակս պահապանս՝
Հովանի մանկութեանս՝

Ինձ զուարթնոյն ըզտիպար
Զիսկուհին տալով մայր.
Որպէս զով շաղ հեղիկ
Դալարեացըն փափկիկ՝

Այնպէս գութ իւր և ինամք
Անուշիկ են ինձ կեանք.
Հեղ և դու բաղցրաբուղխ
Վեհ նորայն 'ի դըլուխ՝

Շընորհաց քոց ըզցօղ,
Ո՞վ անմահդ ըստեղծող։

ՆՈՒԱԳ Ի ՄԱՀՆ ԳԻՍՈՒՍԻ

—

Կայր բարձրացեալ անմեղն Գիսուս՝ յիւր փրկական
ի խաչին՝
Բոսորատիպ յարեան թաթաւ գեղեցկագեղ իւր
մարմին.
Այլ յայն տագնապ չարալլուկ արտասուաթոր
զաչս ի վեր՝
«Հայր, թող դոցա» մեծաբարբառ առ Տէրունին
աղերսէր։
Զիւր մօտալուտ ըզդառնն մահ տարերք ընդ հուպ
գուժեցին.
Թնդաց երկիր, որոտընդոստ ձայն արձակեաց
ահագին.
Դղրդեցան լերինք հիմամբք, շանթիս տեղեալ
հրրացան՝
Երկրի սպառնան աշխարհաւեր կորուստ ածել
անդարման։
Ընդէ՞ր աղէ, մահկանացուք, ահիւ պակեալ մե-
ծապէս՝
Միտք ալէկոծ և ի մրռայլ յուզիք խորհուրդս
ի պէս պէս.
Ո՞ւր խուսափիք խիստ տագնապաւ՝ անքոյթ խընդ-
րել ձեզ դադար.
Ահա Աստուած մընայ մահու դիւին յաղթել
չարաչար.

Հօր բարձրելոյն այն ինչ ի ձեռս զիւր սուրբ
զհոգին աւանդեաց՝
«Մահըն կորեաւ, զերծաւ Ադամ» գոչեաց հրեշ-
տակն ի բարձանց։

ԳԸՆՏՐՈՒԹԻՒՆ Վ. Հ. ԳԷՈՐԳԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԲԲԱՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԵՐԳ

Ո՞՛ Հայրենիք, ուրախութեան առ երդ յոսկի
ի քընար,
Եւ դուք, ծընունդք պերճ դիւցազանց, ելէք ի
թինդ գեղապար.
Ոգի անմահ այսօր յերկիր ձայն հընչեցոյց ա-
ւետեաց,
Ըզտըրտմութեան խաւարազգեստ զօղ փարատել
ի դիմաց.
Խաղաղութեան աստ թեւաւոր զեփիւռ շընչեալ
քաղցրասիւք.
Եւ ժամանել մեզ գարնայնոյ թըռչնոց ի հեշտ
դայլայլիկ,
Փողենի մեզ ըզցանկալւոյն շըքեղ փառաց զաւե-
տիս.
Օ՜ն ցընծութեան առեալ նըւագ ելէք ի պար
հանդիսիս.
Աղէ և դու, մուսայդ անմահ, երգեա՛ որպէս մինչ
ի սուգ
Նըստեալ Ոգին Հայաստանեայց դառըն ցօղէր
արտասուք

Ի լուր փառացըն Գէորգայ և ի նորայն պերճ
համբաւ
Մերժեալ ըզսուգն աղէխորով զբաւարթ յոտին
կանգնեցաւ։
Այրարատայ հանդէպ լերին է լայնաձիգ դաշ-
տավայր՝
Գեղազբաւարճ նըստեալ ի դիր, ծաղկեալ ի բոյս
ի դալար.
Մանուաճաւալ անդ ի պըտոյտ դընայ Երասխ
սըրընթաց,
Եւ ի ծաղկունս բազմաբուրեան պըճնին ափունք
գեղապանծ.
Ի միջավայր դաշտին այնմիկ լայնատարած է
անտառ,
Ուր թաւոստեան նոճիք ամբոխուր երկայնաձիգ
կան ի շար.
Ամբարձուղէշ յաղթ եղևին խոր կանդաղեալ ի
յերկրի՝
Զբաւարթարար ի սիւք հեղիկ ձրգէ ախորժ հո-
վանի,
Եւ անդանօր յաւեժական հնչեալ զեփիւռ քաղ-
ցրաշունչ՝
Շարժէ զտերևաց վարսագեղ ծառոցըն մեղմ ի
մրմունջ.
Համատարած խոր լռութիւն և մութ ահեղ և
նըստեմ՝
Ո՜հ, ի ամբոխուր միայնութեան կան ի տեղին անդ
վըսեմ.

Եւ հոյակապ պերճ մահարձանք, կոթողք շիրմաց
մեծասքանչ՝
Ասա անդ ի ցիր կիսականգուն կան ի տեսիլ վե-
հապանծ.
Անդ դիւցազունք մեր, որ երբեմն արիական ի
հանդէս՝
Կազմեալ ի կռիւ ահեղասաստ գուպարայաղթ
ասպարէզ՝
Գոռ նահատակք ընդ արքայից բերեալ ահեղ ի
պայքար՝
Ցաղթանակաց պըսակ ի գլուխ բոլորէին գե-
րափառ,
Եւ մեծաշուք տիրեալ փառօք աշխարհակալ ա-
թոռոց՝
Ցորոտընդոստ խոշիւն զինուց զերկիր սարսեն ի
խորոց,
Եւ որ հըզօր երբեմն ի ձեռըս ունէին գաւազան՝
Ամփունացեալ են արդ ի հող, ի սեաւ մահուն ի
կայան.
Անդ կայծակունք չիջեալ ոչ ևս ճայթեն ի դաշտ
խազմարար,
Արքունական թագք ի փոշի անկեալ դընին վայ-
րապար,
Եւ պերճ համբաւ նոցին, աւաղ, ծածկեալ է
մութ ի գիշեր.
Ոչ ոք տըխուր գայ արտասուս ձօնել շիրմացն
ի նըւէր.
Եւ Հայաստան անփառունակ, թափուր յորդւոց
քաջազանց,

Անկարեկիր կայ ի տեսիլն, և ըղնոքօք առնէ
զանց։
Այլ մենաւոր անդր ի նոճիս Հայաստանեայց վեհ
Թագին՝
Թափառական չբրջէր ի ճեմ, ի սուգ թաղձեալ
տրտմագին,
Մերթ ևս նըստեալ անդ ուր Երասխ Թափէ
պըղտոր և լալիս,
Զեռն ի ծընօտ, եղերական հեղոյր արտօսր և
լալիս,
Եւ զնախկին փառըս Թորգոմայ բերեալ աչացն
յանդիման՝
Զաշխարհաւեր արդ ըզկորուստն ողբայր նորա
անդադրման.
Մերթ յանտառին շիրմայն հանդէպ նըստէր Թաղ-
ձեալ և տըխուր,
Աղիողորմ ի ձայն ողբոց հընչէր ողջոյն տեղին
լուռ.
«Աւա՜ղ, դոչէր, կենդանարար կորոյս երկիրն իմ
զարև,
Եւ սեամաղձ մրթին խաւար պատեաց զնովաւ
մըշտատև.
Ա՜հ, դու, Արամ, ընդ ծանրակիր հեծեաս շըղ-
Թայս անմըռունչ
Ո՞ր ձեռն անգութ ի քում գլխոյ ղշբքեղ զար-
դուց կապտեաց փունջ.
Ըզգեղանի քոյ զայդ դիտակ և զայն երես վա-
յելուչ՝

Ցարիւնացայտ կայլակ վիժեալ արդ տեսանեմ
Թաթաւուչ.
Ողբամ ըզքեզ, Հայոց աշխարհ. ըզքեզ ողբամ
դառն ի կոծ.
Վա՛յ և եղո՛ւկ քեզ եղկելւոյդ, աւա՜ղ փառացդ
անցելոց.
Ո՞ւր Թագաւորք քո վեհափառ դեղապաճոյճ ի
հանդէս,
Եւ քաջազանց վաշտից փաղանդ վառեալ փառաց
յասպարէզ.
Աստէն գոռոզ Նեբրովիթըն Բէլ դիւաթաւալ ի
յերկիր.
Ի լայնալիճ աղեղանէ անկաւ Հայկայ գըրկալիր.
Քաջակորովն անդէն Արամ գոռ ի մարտի նահատակ
Ըզժանտաժուտ Նիւքար ի յօդ տայ աշխարհի
նըշաւակ.
Դիւցանըմանն ահա Տիգրան գոռայ ի մարտ դը-
ժընդակ,
Ի ճապաղիս յարեան վըտակ դընէ ի լիւղ զԱշ-
դահակ.
Առաքինին ասա Վաղարշակ օրէնըսդիր դերիմաստ՝
Ըզցանկալին զիւր Հայաստան փուԹայր գործել
բարեբաստ.
Մեծն Արտաշէս սպառազինօք ծածկեալ զերկիր
պատ ի պատ՝
Տիեզերաց ընդդէմ ահեղ վառեալ կազմի ի ճակատ.
Աշխարհ համայն երկիւղաբեկ դէտ ակն ի նա
հիքաբար՝

Ոչ խիզախէ ընդդիմամարտ բերել նըմա ի պայքար.
Տիգրան դոռոզ յաղթող զինուք շանթս յարձակէ ի յերկիր,
Ահեղախրոխտ սէդ թըշնամւոյն փառքըն դարձան ի մոխիր.
Աբգար ըզգօնն իւր տէրունւոյն վառեալ ի սէր խանդակաթ՝
Ըզհաւատոյ կապեաց ի գլուխ գեղապարոյր ըզպըսակ.
Աստ Տըրդատէս հրսկայազօր երագաթև ի յընթաց
Կոխէր զազինս, ւ՝ ի քայլ ոտին դողայր երկիր ի հիմանց.
Ի կռիւ ապա վառեալ զինու խաչին ընդդէմ անդընդոց՝
Զարադիւթից դիւացն ըզխումբ հոսեաց ի վիհ դըժոխոց.
Քաջըդ Վարդան, պըսակաւոր առաքինիդ նահատակ,
Դիւամոլից զաշխարհդ ընդդէմ դու կազմեցեր ի բանակ.
Խաւարաբորբ Սանդարամետք հուր ժայթքեցին ի խորոց,
Այլ շինուցեր բոսորաբուղխ արեամբդ ըզհրոյն կիզիչ բոց։
Զարթիք աղէ, ո՞ Արամեան պերճ դիւցազունք քաջայաղթ,
Զարթիք տեսէք զաւաղելին ըզթորդոմայ նըկուն բաղդ.

Շինչաւ նորա աստղըն փառաց՝ որ լուսափայլ չողչողէր,
Եւ արդ յողորմ նըստի ի սուգ նըսեմաստուեր ի գիշեր
Այն որ պըճնէր վայելչագեղ երբեմն ի շուք իւր յաւէժ՝
Մերկ և թափուր անդընդախոր անկաւ ի վիհ դահավէժ.
Եւ որ երբեմն իշխան դոռոզ մեծափարթամ ճոխանայր,
Ի մեծաշուք կապտեալ փառաց արդ կայ տընանկ ապիկար.
Աւաղ նըմա, ըզցանկալին լըքեալ զերկիր հայրենի,
Կեայ խուժդուժից ի մէջ ազգաց, ի տար աշխարհ վայրենի։
Վա՜հ եղկելւոյն, որ հայրենեաց մերկ կենսաձիր յարևէն՝
Թափառական ընդ անծանօթ շըրջի դաւառ տարադէմ։
Աղէ՜, զարթիք... այլ, ո՜հ, նորա դընին ի հող մահակիր,
Եւ Հայաստան անյիշատակ նընջէ ի քուն անյարիր...»
Այսպէս Ոգին ի լուռ անտառն հանապազորդ երսովոր՝
Աշխարելի ի ձայն ողորմ եղերերգել մենաւոր.
Մերթ այս մերթ այն շիրմին վերայ ձօնեալ աղի արտասուս

Ընդաղելի գլուխն ի կախ ճեմէր ի վայրըն անլոյս.
Այլ միշտ անդ աստ հայէր սրխուր աչօքն յուսով ինչ բարեաց՝
Ծագէ արդեօք լոյս կենսաձիր յաճիւնացեալ ոսկերաց՝
Մինչ արփենին վեհ Մբխիթար ծագեաց յերկիր լուսագեղ,
Խընդաց Ոգին, և բերկրաձայն երգեաց ընդա ի գեղգեղ.
Եռեռ զորդիս նորա, զաստեղս պայծառափայլ ի ճաճանչ,
Ծագեալ յաշխարհըն Թորգոմայ զլուսրթ ի լոյս գեղապանծ.
Այլ աստ մինչդեռ շողն արփաւոր խաւարեցաւ արևուն՝
Ընդխրականն արկաւ զանձամբ ընդմութ հանդերձ սևագոյն.
Ողբաց ընդա, ողբաց ցաւով զաղգն ի հօրէն անտերունչ,
Լընոյր լալեօք զանտառն ողջոյն հանապազորդ ի մրմունջ.
Այլ ո՜հ, ուստի քաղցրանրւագ հընչեն քընարք օրհնաբան.
Ո՞ւր բազմամբոխ ժողովրդոց պարրն դիմէ բերկրական.
Ահա տաճարն աստուածաբնակ պրճնեալ ի զարդ գեղապանծ.
Փայլեն աստեղք անդ լուսալիր պայծառագեղ ի ցոլմանց.

Քահանայից դաս լուսերամ շուրջ պար առեալ երգեցիկ՝
Ընդեծաշուք հանդէս վեհին կաղմեն ի կարգ գեղեցիկ.
Եկրն, տեսէք, մուտ ի փառս իւր առաքինին հանճարեղ՝
Հեզահամբոյր ի կերպարան և ի տեսիլ փառահեղ.
Ցասաուաձարեալ կալեալ ձեռին ընդնորհազարդ գաւազան,
Ի քայլ վրսեմ և մեղմընթաց մատեաւ ի բեմ սրբրբազան.
Եդեալ ի գլուխն ի խոհական գեղապաճոյճ վեհ ընթագ՝
Եկ յօրինեալ պրսակաւոր՝ որպէս յաղդողնահատակ.
Ի նոյն և փողք, վին և տաւիղ դաշնակաւոր յերգ յամբաւ՝
Հընչեն զանուն նորա չրքնաղ և հռչակեն ի համբաւ.
«Կեցցե՛ս» գոչեն միաբարբառ աղդ և ազինք համօրէն.
«Կեցցես յաւէժ, և մեծաձիր ընկալ պարգևս ի հօրէն.
Վատաբախտիկ կացցես Հայկայ ակընկալիք մեծայոյս.
Մատաղերամ և իւր որդւոց լեցիս ի մեծ ի խրախոյս»։
Զայս բերկրանաց լրաւ նրւագ Ոգին, անդէն և յարեաւ.

Առաքինին ակընկառոյց՝ ասէ. «Եկիր դու բարեաւ.
Ինձ զուարթարար քո է գալուստ, պըսսկ վա-
ռաց Թորգոմայ.
Քանի՞ արդեօք խինդ բերկրալիր հոգ յաւելցես
դու Նըմա»։
Որպէս յորժամ գորովագէտ մայր կողկողեալ ի
թախանձ՝
Ողբայ զորդեակն իւր ի ժանիս ծախեալ գայլոյ
մարդախանձ,
Ցանկարծ Նըմա թէ աւետեաց ձայն հնչեսցէ
խընդական,
Եւ ըզմատաղն իւր ըզմանուկ տեսցէ աչացն յան-
դիմանն՝
Հըրճուեալ յոգին բերկրապատար մերժէ ըզկոծ
մահաբեր,
Եւ մոռացօնք լինին Նըմա ցաւքըն տաղտուկ վրշ-
տըմբեր,
Այսպէս Ոգին վեհին ի տես, և շուք անմահ
ճակատուն
Փայլեաց գեղով իբրու զպարզել ի թուխ ամպոց
արփենուոյն.
Անդէն ի թաւ փայլակնացայտ լոյս ծագեցաւ
յանտառին,
Եւ բարեբաստ Ցոյս ի յերկնից էջ ի յաշխարհ
ըստորին.
Ի նոյն և վեհն ձայնեաց. «Ցեղի տուք հեռ, նա-
խանձ վայրենիք.
Իսկ դու յաւերժ կեցցես այո՛, ո՛ իմ չըքնաղ
հայրենիք.

Կենդանարար ցորչափ զայրը չընչիմ կենաց քաղ-
ցրաշունչ՝
Ա՜հ, մի երբէք վատաբախտիկ՝ լըքեալ թողցիս
անտէրունչ.
Քեզ զայս ուրեմն երդումն անսուտ յինէն ընկալ
ի Նըւէր»։
Ասաց և յոյժ գորովեցան աղիքն աղդին առ ի սէր.
Զայս բան վեհին, ո՛ քաղցրաշունչ տարէք զե-
փիւռք առ Ոգին,
Եւ կարեվէր ի սիրտ նորա ցօղ տեղասցէ զովագին.
Զայս ի գեղգեղ յեղանակել առէք թըռչունք
բազմերանգ.
Աւետաւոր զայս բան յաւերժ թող հընչեսցէ ար-
ձագանք.
Ի թինդ ոտին գեղապարեալ ձայն ետ Ոգին ցընծութեան.
Ի մահառիթ թըմբրութենէն զարթիր ի լոյս,
Հայաստան.
Քեզ երանիս այսուհետև մեծաբարբառ փողեմ
արդ.
Եկ ընդ առաջ աղէ վեհին՝ պճնեալ ի շուք գե-
զազարդ.
Դա մեզ անշուշտ չըքնաղ պարգև ընծայեցաւ
երկնառաք
Անմահ ի գլուխս առաքինուոյն բոլորեսցուք պերճ
պըսակ.
Քեզ անձկայրեաց, վեհ՝ազըն դու, սիրտ իմ մը-
նայր բազմատենչ.

Բիւր նըւագաց օրհներգութիւնք յաճախեսցին առ
ի մէնջ.
Դու զարտասուաց կայլակահոս սըրբեցեր զուին
ապաժոյժ.
Արամազնեայց ի մութ սըրտէն ցաւք մերժեցան
մահագոյժ.
Հայաստանեայց երկնաբընակք, և դուք, հովիւք
լուսաճեմ,
Իջէք ի տես այս վեհազին անմահ յերկնից ի
գահէն.
Դա սըրբափայլ վարուց ձերոց բերէ յանձին ըզ-
տիպար։
Լըւան անմահքն, և ի յերկիր իջին թեթև գար-
շապար,
Փայլակնաշող լոյս սփռեցաւ, ըզվայրն ելից գե-
ղապանծ,
Եւ ոսկեթոյր ամպք ծալ ի ծալ ծածանեցան ի
բարձանց.
Հայրըն բարձրեալ յՈլիմպոսէն որոտընդոստ հուր
տեղաց.
Զուարթունք անդ չորք լուսապարփակ փայլին
նըման աստեղաց.
Մեծըն Գրիգոր, Ներսէս Սահակ, ոսկի մական
ի ձեռին,
Սեբաստիոյ ծընունդըն պերճ անդ Մըխիթար
բաջարին,
Ի մեծայաղթ կալեալ յաջոյն ըզջահըն մեծ լու-
սավառ՝

Որով ի մէնջ զանգիտութեան մերժեաց զահեղն
ըզխաւար՝
Փակ ըզնոքօք բազմագունին ոսկեկամար ծիածան.
Ցոդ պարզեցաւ լուսացընցուղ երկնահանդեսն
ի կայան.
Ընման յորժամ դեղանըշոյլ շողք լուսասփիւռ
արփենւոյն
Կապուտագեղ շանթեն յալիս խաղաղանիստ ով-
կեանուն,
Ձեփիւռ քաղցրիկ շուրջ թեւածէ, լուռ են այերք
և անդոյր,
Անդ վեռ ի վեռ դեղապարեալ շողան ալիքն ոս-
կեթոյր՝
Այնպէս շողայր օդըն տարած և տիպ վեհիցն
հոգեղէն
Եւ ճաճանչեղ յամպոյ միջի ցոլմունք ցայտեն բո-
ցեղէն,
Քայլեն նոքա հանդարտահետ՝ լոյս յառաջոյ փայ-
լակէր՝
Որպէս թըռչնոյ հոյլք տարմաբար թռուցեալք
թեթև ընդ այեր.
Այն ինչ մինչդեռ զառաքինին ի յակնարկին յան-
գիման.
Սիրտք խայտացին հոգեգորով վեհիցն ի խինդ
անպայման.
Ժըպիտ ծաղու քաղցրահամբոյր նոցուն ի դէմս
փայլեաց,
Եւ շողշողեաց վայելչագեղ գոյն կարմրերփեան
երեսաց.

Վեհք ընդ վեհին ոգեխառնին խանդաղակաթ ի դորով,
Զեղուն անձինք նոցին մաքուր՝ անմահական սերտ սիրով,
Եւ անդ համբուն լեալ ցընծազգեաց հաւատոյ հայրըն Գրիգոր՝
Աւրժանագով ի ներբողեան շարժեաց շըրթունս երկնաւոր.
«Ողջոյն վեհազըն շնորհափայլ, չըքնաղ պարգև երկնաձիր,
Խաւարարգել Հայաստանեայց ծագել արփի լուսալիր.
Առ քեզ տարփմամբ ցընծայ հոգիս երանութեանց դու աղբիւր,
Համբաւդ ի լուր տիեզերաց տարածեսցի համապիւռ.
Շուք պարծանաց զարմին Հայկայ դոլ և պըսակ դեղապանձ,
Շուք և կրօնիցն աստուածաւանդ՝ զիմոյս բերեալ ըղնախանձ,
Ըղհաւատոյ վառեալ յինէն լոյսն յաշխարհի բերկրատար՝
Քեզ ի նըշոյլ ճաճանչաւէտ բորբոքեսցի վառ ի՛վառ.
Քեզ ալ Տեառն ամենազօր հովանասցի ի բարձանց,
Տարտարոսին դղորդեալ անդունդք սասանեսցին ի հիմանց»:
Զայս լուսազգեաց Մեծն Հայրապետ մաղթեաց վեհին բարեփառ.

Իսկ և Ներսէս, ժիր նահատակ, զայս հրճուանաց ետ բարբառ.
«Ողջոյն վեհիդ, շնորհաց հոգւոյն վայելչազարդ յօրինուած,
Պայծառագեղ դու Թորգոմայ ճառագայթեալ լոյս փառաց,
Որ աղեկէզ ի հեծութիւն վերաւորեալ ի հոգի,
Եւ քըրձազգեաց դընէր անկեալ հողաթաւալ ի փոշի՝
Ի քեզ միայն ակընկառոյց վերամբառնայ ըզդըլուխ,
Եւ զապաժոյժ սըրբէ յաչաց ըզգերարտասր յորդաբուխ.
Վերածնանի նորափետուր, զի մահացեալ յոյս նորա
Վերածնանին և հայրենիք աւերակացն 'ի վերայ.
Տեսցէ նա զքեզ ընդդիմադէն հանդիսացեալ ախոյեան,
Զաղիտաբեր մերժել չարիս ակնարկելովըդ միայն.
Ցանդորը ըզնա յանկուցանել վաստակաբեկի յոգի՝
Զալ քոյ հըզօր լայնատարած կարդեալ նըմա հովանի.
Եւ թօթափեալ ըզթաղծութիւն յանձնէ զաճիւն և ըզբուրձ,
Զայն ցընծութեան բերկրապատար տացէ աղանցըն հանուրց.
Առաքինւոյդ յոյց երանեաց, իսկ ես հիւսեմ քեզ պըսակ»:
Բարբառեցաւ աստուածարեալ Պարթևազունըն Սահակ.

«Քեզ խբրթնայեալ վայելչութիւն պայծառասցի թորգոմայ,
Մատաղերամ հոյլք մանկըտեաց ըղլոյս տեսցեն գերակայ.
Զի դու եղծեալ ըզբանդն ուր կան ի մութ ահեղ և նըսեմ՝
Իմաստութեան ծաղկափըթիթ ածցես յուղին լուսաճեմ,
Եւ ի նորայն բարձրադիտակ լուսաճաճանչն ի տաճար
Շոյտ սաւառնեալ թեւապարիկք դադարեսցեն ի կատար.
Անտի 'մաստից և հանճարոյ փայլատակեալ ճառագայդ,
Եւ յաննըշոյլ երկիրն Հայկայ բոց վառեսցի հըրացայտ.
Ամպրոպայոյզ գնասցեն մըրրիկք և դառնաշունչ ձըմերունք,
Եւ փըթթեսցին անուշահոտ յարաղբուարճ նոր դարունք.
Իմաստութեան վերընձիւղեալ նորաբողբոջ ծաղկեաց փունջ,
Թըռչունք ի յոստս ըզքոյդ անուն առցեն երգոց ի մըրմունջ».
«Ո՜հ, յիս քանի՞ հոգեղբուարճ զեղուն հրճուանք խնդարար՝
Որդւոյս ի տես իմ անձկաւէտ, արին գոչեաց Մխիթար.

Ի նորատունկ բուսեալ դրախտէն տունկըդ մատաղ ածեցուն,
Զի՞ դեկեցիկ յանկարծ զգլուխ բարձեր ի միրգ ակաղձուն.
Ցաւուր յորում պըսակազարդ ցուցար փառօք յերևան,
Եւ պարզեցեր ըզվեհ ճակատդ ապշեալ ազանցն յանդիման,
Տօն խմբեցաւ հանդիսակիր առ խորանաւն աստեղեայ,
Մատունք անմահ նըւագածուաց հարին զքնար տանաղեայ,
Եւ խընդակից ինձ երկնախումբ լուսերամից եղեն պարք
Զի դու որդեակդ իմ ծագեցար տանըս իմոյ շըքեղ փառք։
Օ՜ն ըզբաժակ արբեալ հոգւոյն ել 'ի հանդէս նահատակ,
Քեզ 'ի զընին կացեալ յերկնից զալ կարկառեմ օժանդակ,
Մի բախտ դըժխեմ չարանախանձ կամ թէ աղէտք դըժընդակ
Քեզ 'ի գիմի արձանացեալ կայցեն ձեռինդ հակառակ.
Այլ աղջամուղջ տըգիտութեան և չարակնող խեռ նախանձ
Ի թուխ գիշեր դարանամուտ, ժանիս սըրեալ գիշախանձ

Ցանկարծ 'ի դուրս արշաւելով ահեղասռիչ 'ի դա-
լար
Թոյն մահահոտ ամենասփիւռ ճարակեսցեն քոյդ
յաշխարհ,
Եւ քեզ ընդդէմ նախանձաբեկ թէ յուզեսցին
տարապարտ,
Արի և դու, զիմաստութեան դէր 'ի դըլուխդ
սաղաւարտ
Կալ ի ձեռինդ զայս զիմ աւանդ, դիտութեան
ջահ լուսավառ,
Զանգիտութեան մերժել ի բաց զաշխարհակուլն
ըղխաւար
Սուր հանճարոյդ հըրաբոլբոք փայլակնեցո ըղսուս-
սեր
Անկցին ոսոխքըն դիմադրաւք դոռ խիզախողքն
ի վրսեր.
Յերկնից յայնժամ հանդիսատես Բարձրեալն 'ի
քոյդ յաթանակ,
Աստեղազարդ պըսակ ի դլուխըդ կշռեսցէ մըր-
ցանակ
Աջն հովանի, աչք իւր անքուն լիցին հսկող պա-
հապան
Մենարանիդ, Քեզ և Քոյոցդ մընալ յաւերժ ան-
սասան—։
Զայս ասացին, սաւառնաթև թռեան յերկինս
լուսաճեմ;
Եւ Աւետիս բերկրեալ Ոգին սփռեաց յաշխարհ
համբրէն։

Ի ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ՅՐԳ

Դըժոխք ի մարտ արշաւեն
Գոռ բանակաւ սեագունդ,
Արի՛ք ընդդէմ քաջազէն
Վառեալք յասպար 'ի մըկունդ
Թորգոմեան դիւցազունք
Նահատակք աննըկունք։
Ահա արին յարեաւ Վարդան
Դըռոյթ 'ի դաշտ տալ փառաց,
Գուպարայաղթ քաջացն 'ի կռիւ
Որոտընդոստ ձայն գոռաց,
Վառեցարուք յասպարէզ
Հուր ըղդեցեալ բոցակէզ
Թորգոմեան դիւցազունք
Նահատակք աննըկունք։
Յարեաւ Աստուած 'ի յաթոռոյն
Ճշմարտութեան ախոյեան,
Եւ լուսաթռիչ Հաւատքըն սուրբ
Ճախրեաց Վեհին յանդիման։
Վառեցարուք յասպարէզ
Հուր ըղդեցեալ բոցակէզ
Թորգոմեան դիւցազունք
Նահատակք աննըկունք։
Ահա ըղսուրն շարժեաց Վարդան
Եւ սեաւ անդունդք սարսեցին,

Ահա արին անկաւ Վարդան
Երկինք 'ի խնդ պարեցին։
Վառեցարուք յասպարէզ
Հուր ըզգեցեալ բոցակէզ
Թորգոմեան դիւցազունք
Նահատակք աննըկունք։

Ե Ր Գ

Վարդ մի գունեան և յոյժ փափկիկ
Փթթեալ թերթիւք բոյր 'ի բոյր,
Նըւաղեցաւ մերկ ի գեղոյն
Ի տապ բոցոյ անմաքուր։
Վայրընկեցիկ 'ի փառաց
Ո՞ այլ դիցէ նըմին շուք,
Կամ պըճնեսցէ ըզգըլուխ
Թառամելոյ այն ծաղկամբ։
Պատանեկին խանդաղակաթ
Եղուկ սիրոյն դժրանաց,
Դառըն լեղի էր ըմպելոց
Ոչ թէ վայելք գըգուանաց։
Վայրընկեցիկ 'ի փառաց
Ո՞ այլ դիցէ նըմին շուք
Կամ պըճնեսցէ ըզգըլուխ
Թառամելոյ այն ծաղկամբ։

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Թարգմանութիւն.

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Ցետ դառնաշունչ ձըմերայնոյն,
Եւ ի դաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն,
Մինչ բոյր ի բոյր փըթթին ծաղկունք
Եւ ճըռուողեն նորեկ ծիծառունք,
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։
Ոչ Հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ ղըւարթ մարգագետինք,
Ոչ քան ըզքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք.
Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Քոյովըդ յաբ տապիմ անձկով,
Ի խանձարուրդ իմոց կենաց
Ո՛վ Հայաստան առնեմ ես դարձ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթև ի գարշապար.
Ուր հէգ Մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել ըզսէր,
Ըզնինջ ի ծոցդ առնում յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

ՏԱՊԱՆԱԳԻՐ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԱՆԿԱՆ

—

Ի գբրկաց գիրդ գորովոյ թբռեար հրեշտակդ անմեղուկ,
Անշաղախ 'ի յերկրէս պահեալ զոտկունսբդ փափուկ։
Ի դառբն բաժակէ կենաց միայն զանուշակ
Մայրենի կաթին առեալ և գգուանացն ըզճաշակ
Հանգիր աստ, զերդ յօրոցիդ, քեզ երանի ով մանկիկ,
Ոչ ծանեար զարտասուս, զոր մեզ հեղուլ տաս այժմիկ։

ԱՌ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

—

Ո՞վ գերաթռիչ արծիւբդ վեհ օդապար,
Երկնասլացիկ բնակեալ Մասեաց 'ի կատար,
Անտի զօդոյն հատեալ զամբաւն յասպարէզ,
Ճախր յանդիման առնուս արփւոյն բոցակէզ,
Զանմահն յերկնից ծբծեալ ըզսիւդ եթերաց
Հուր ի ծոցոյդ ժայթքես և շանթ կայծականց.
Դու զբոցաշունչ պարդեալ քոյին ըզլեզու,
Արիւնռուոդ թբռչիս ընդ դաշտն Արտազու
Ընդ 'ի միջի դբժոխբմբեր արհաւրաց

Պաշտօնէից մռնչես ընդդէմ տարերաց.
Դու և երբեմն հեզամբնչիկ աղաւնեակ
Եւ կուսական կամ թէ փողար ողբերգակ.
Վբտակահոս 'ի վարդագոյն ճապաղիս
Ողորմ ողորմ մբռնչես մբնչիւնս դառնաղիս.
Մերթ դու սոխակ քաղցրախօսիկ 'ի մբրմունջ
Աւետաւոր դաս մեզ օդոց բարեշունչ,
Եւ ի կարմիր վարդին բուրեան տերևոց
Ցարաղբուարճ մաղթես գարունբս Հայոց,
Ո՜հ յիրաւի յաս գարունիկդ աւասիկ,
Ի փունջ վարդից պճնեաց Հայոց աշխարհիկ՝
Ցարեաւ սոխակդ որ բեզ ըզնոյն գեղգեղէ,
Զի՞նբդ փափուկ ըզդայլայլիկն յօրինէ.
Մերթ դու հրեշտակ խաղաղութեան 'ի համբոյր
Մեռելատիպ պատեալ 'ի քոզ սեւաթոյր
Ի սեւասուեր տբխուր վիմին 'ի սընար
Ողբանբւադ եղերերգես 'ի քլնար.
Նա զինչ ասեմ, թողեալ զերկիր դու 'ի վեր
Թևս 'ի թեթև սաւառնեցեալ ընդ եթեր,
Թբռեար 'ի գլուխ անդամանդեայ սիւնակին
Եւ խօսակից եղեր ընդ վեհ դիւցազին.
Ըզհոյլս հոգեացն ըզմայլեցոյց անմահից
Քաղցրաձաւալ ծորանք երգոցն անուշից.
Անդ ի տախտակ մրտացդ էիցբս տիպար
Հանեալ ճբշդրիտ գեղեցկաթոյր 'ի նբկար,
Անդ 'ի թաւալ խուժէ 'ի ներքս ովկիան,
Եւ փբրփրադէզ ցայտէ 'ի դուրս միւսանդամ։
Մերթ դու Հեղեղ ուղխահոս ճոխ աւարաւ,

Եռանդնաշարժ գրչես զալիս սուրարշաւ,
Եւ մերթ յանդորը սլորտացեալ անապակ
Զերդ բիւրեղեայն ծիծաղաժպիտ ջինջ վրտակ.
Եւ յայնժամ ոչ գեղեցկատիպ բընաւ էք
Քոյդ քաղցրութեան հաւասարեն ինչ երբէք.
Ոչ ծաղկասէր փրթթեալ չքնաղն դարուն,
Գոզտրիկ Շուշան, յասմիկ և վարդ ցօղասուն,
Ոչ զեփիւռիկ գարնան խընդից պարառաջ
Ոչ օդաթռիչ հաւուց մրրմունջք քաղցրաւաչ։
Այրարատեան ով դիւցազունք իմ Հայոց,
Զոյս ոխերիմ ծածկէ դեռ հող յիւրն 'ի ծոց.
Օն զաղջամուղջ լռեալ մահուն ըզդամբան,
Անմահութեան վերաթևէք յօթևան.
Եւ ոսկեփունջ առէք 'ի գլուխ պերճ պըսակ,
Զոր Զեզ Ղևոնդ հիւսէ մատամբք գերունակ։



Ի ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԱՀ ՈՍԿԵԱՆ ՊԵՏՐՈՍԻ ՊԱՏԱՆԻՈՅ ՃԱՐՏԱՐԱՏՈՒԵՍՏ ՆԿԱՐՉԻ

ԵՂԵՐԵՐԴՈՒԹԻՒՆ

Ով, զի՞ ճարտար է մահ յընտրել ըզհունձս ի սար գերանդւոյն
Ըզբարին և զդեղեցիկ միշտ ժանտ աչօքն որոնէ,
Մինչ շուշան և ընբուշ փրթթին ծաղկունք 'ի գարնան,
Արագ արագ խամրէ զնոսին 'ի մահատիպ դոյն դալկան։

Ո՞վ Պետրէ, մինչդեռ այն ինչ մրտեր կենացս յասպարէզ,
Զիմարդ բոլոր փափկութեամբ ծիծաղեցաւ քեզ կենցաղ
Վայելչութիւն և գեղ դիմաց, շուք հասակիդ և շընորհ
Մանկութիւն գեղածիծաղ խաղապատեալ շուրջ ըզքև,
Ի կոչունս վայելից կենաց տային քեզ հրաւէր.
Այլ մահ 'ի դառըն ժըպիտ կացեալ հեռուստ ծիծաղէր.
Դու 'ի պատրանըս փաղաքուշ հրրապուրեալ կենցաղոյս,
Ծափ ըզծափի պարելով ոստեար կենացդ 'ի պարտէզ.
Եւ լիաձեռըն ծաղկունս անմեղ խընդից բերկրաւէտ,
Քաղէիր, այլ զո՞ արդեօք զարդարեսցես դու նոքօք,
Ըզդլուխդ, փունջ երփներանգ յօրինելով քեզ պըսակ։
Անպըղտոր երանութեամբ խայտալ տիոցդ 'ի դարնան,
Եղե՞ւկ քեզ, նոքին հուպ մեռելակիր դագաղոյդ,
Եդեալ 'ի զարդ, 'ի տրխուր թառամեսցին 'ի դամբան,
Մահ ըզհետոցդ ընթացեալ դիտէր զոտիցդ դարշապար,

Զտեսեր զնա որ զանխուլ սողոսկելով ծաղկանց մէջ,
Ընդ ոտիւքըդ մահաշունչ իւր ըզվէշապ գալարէր.
Եւ մինչ դու վըրձինդ 'ի ծայր նըկարելով ըզբընութիւն,
Զերկինս զերկիր ամփոփէիր համայն 'ի դոյզն 'ի տախտակ
Նա 'ի սուր սայր գերանդւոյն զչիրիմդ 'ի հող նըկարէր,
Եւ ապա քեզ ընդ առաջ յանկարծ ոստեաւ մոլեգին.
Կազմեցաւ ըզմահացուն ածել յեռին ընդհարուած.
Գուլթ չարկին 'ի նա հասակդ նորափըթիթ 'ի բողբոջ,
Ոչ կայտառ և գեղանի դէմբըդ շնորհաց օթևան,
Ոչ աչկունքըդ ծաւիք, ականողիք սեաթոյր.
Եհար ըզքեզ անագորոյնն աւաղ 'ի խոց կարեվէր.
Եւ յաղթ բազկաւ դըլորեցոյց խոր 'ի մահիճըս ցաւոց,
Սեափեռուր թեւքըն պինդ անդէն ըզբև պատեցաւ,
Փըչեաց ըզշունչ իւր 'ի քեզ ըզժահահոտն և զաղիր.
Այլագունեաց ըզկարմրութիւն այդ վարդագեղ այտերուդ,
Եւ մարմին նըւաղեցաւ մեռելատիպ ի դալկան։
Իսկ դու լռես և անտրտունջ կաս եղկելի պատանիդ,

Եւ ոչ 'ի յողբ անմըխիթար հեծես 'ի սուգ աղեխարշ.
Ոչ յողոք անկեալ մահու ըզգըթութիւն պաղատիս.
Ոչ յոգւոց հանելով 'ի վեր յերկինս բողոքես.
Կենացս անցաւորի խաբեպատիրն բաժակ,
Ա՜հ, թոյն մատոյց քեզ դառնորակ զուարճութեանցըն փոխան,
Աղբիւր կենացըդ վըճիտ դառնայ 'ի հուն իւր 'ի հող,
Թօթափեցան և խամրեցան ծաղիկք չքնաղ մանկութեանդ։
Իսկ դու լռես և անտրտունջ կաս եղկելի պատանիդ,
Այո, այո, ըզնաղելին խոնարհեցոյց իւր գլուխ
Որպէս շուշանն ի հովտի հարեալ 'ի խիստ խորշակէ.
Ապշեցաւ մահ ինքնին մարդկան ոսոխըն դժնեայ,
Ոչ այնչափ արիութիւն յառոյդ ոգւոջն յուսալով։
Պետրէ, եղբայր իմ սիրելի, ո՞վ կէս հոգւոյս իմ հատոր
Աւաղ ննջես արդ 'ի հող ըզքուն մահուն անյարիր.
Ո՞ տայր ինձ 'ի ժանիս լինել մահուն քո փոխան.
Քանիցս ընձա ողոքեցի կըտրել ըզթել իմ կենաց
Եւ 'ի քոյդ հիւսել չքնաղ երջանկաւէտ ընդ աւուրց,

Եւ կամ դէթ զիս մահակից դընել մահճիդ առ
ընթեր.
Այլ ոչ այնպէս յերկնից մեզ վիճակեցաւ երկ-
կոցուն.
Քեզ մեռանիլ, ինձ արտասուք՝ ողբալ ըզմահ քո
յաւերժ,
Ընդ գեղեցիկ երկնաւ ուսմանց և իմաստից 'ի
տաճար
Կըրթեցաք 'ի միասին 'ի գերապանծ ասպարէզ.
Եւ կապեցաք մըտերմական սիրով հոգի ընդ
հոգւոյ
Այլ ինձ եղեւ, բիւր աւաղ, զի կանխեցեր դու
քան զիս.
Դեռ ոչ իսկ վայելեալ զարդիւնս անմահ վաս-
տակոցդ,
Ցոյժ տարաժամ հասեալ վերայ մահուն մըռայլ
աղջամուղջ.
Ըզգեղեցիկ ապագայից շիջոյց զճրագըն պայծառ.
Եւ արդ 'ի սիրտ ներնջեաս երկրի ըզքուն յաւերժ
անյարիր.
Այլ ոչ, յերկինքս կենդանի շնչես զոգ կենսու-
նակ.
Ո՞վ, թեւապարիկք հոյլք անմահից լուսերամ,
Դուք ըզնա խառնեցէք 'ի խումբ դասուդ գե-
ղապար
Անդ մանկութեան նորա զդարուն փրթթեցուցէք
անթառամ,

Ցանմահ ծաղկանց յօրինեցէք պըսակ 'ի գլուխ
գեղափայլ,
Պետրէ, տեսցուք դարձեալ զիրեարս յերանա-
ւետն յայն կայան։

Ի Մ Ա Հ

ՑԱԿՈԲԱՑ ՁԱՄՁԵԱՆ

—

Եկու քընար աղէկըտուր թելերով
Զուարթ պըճնած երբեմն անոյշ վարդերով.
Ոհ այն փունջեր թափթըփեցան իմ չորս դին
Զի սիրելին իմ գոցուեցաւ 'ի շիրիմ։
Եկու կապեմ ճակտիդ նոճեայ մի պըսակ,
Սև տխրութեանց ոգիք զարնեն քու նըւագ.
Քու մըրմընջիդ հետ խառնըւած զեփիւռիկ
Թող փըչէ ցուրտ հոն ուր հանգչի Յակոբիկ։

Աղնիւ հոգի ու սիրեցեալ ամենէն
Ինչպէս շուտով ելար կենաց պարտիզէն.
Ու հասակիդ ծաղիկներով զարդարուած
Ա՞յդպէս կանուխ իջեր 'ի հող տխրամած.
Ամբողջ դարուն մի չի տեսած այս կեանքին,
Մըթին դաղտնիք շիրմին ըզքեզ պատեցին.
Քոյդ մըտերմայ, որոց էիր քաղցրիկ սէր,
Տես ինչ աւանդ թողուցիր, սև կսկիծներ։

Գերեզմանին դըռնէն մտար դու երկինք,
Ուր անթարշամ կենաց բազմիս 'ի հարկինք.
Հոգիդ սլացաւ մաքուր մարմնէդ առ Աստուած
Ինչպէս անուշ հոտ մը ծաղկէն բաժնըված.
Փափուկ գըրկէն հէք քուրերուդ սըգաւոր
Թըռեար 'ի ծոց վաղամեռիկ հօր և մօր.
Բայց մինչ քեզմով խնդան հայրիկդ ու մայրիկ
Ահ ինչ կընեն եղբարք ու քորք նաղելիք.

Երիցըս որբ, նստած դարձեալ 'ի սեր.
Այլ ո՞վ սրբէ անոնց աչքին արցունքներ.
Սիրաբողբոջ տունկեր դեռ նոր ծաղկած դուք
Այս քանի հեղ զարնէ վրանիդ մահուան շուք.
Դու որ անոնց էիր եղբայր մի սիրուն
Ցիշէ, կրկին ունիս այժմիկ դողոր անուն,
Այդ սրտակէզ հարազատացդ անբաժան,
Հոլաթևիկ եղբայր, հրեշտակ մի պահապան։

Ելէ լուսնակ գերեզմանաց այցելու
Քօղ մի դէմքին ձըգած ճերմակ ամպերու,
Մութ կամարին վերայ տժգոյն թափառկոտ
Տես դայ շիրմիդ, ղերդ տըխուր կոյս ամբչկոտ
Մինչ զովագին փըչէ հովիկ անուշակ
Ու չորս կողմէն բուրեն յասմիկ մանուշակ
Ո՛հ մօտ եկուր յայնժամ առ սիրտըս ցաւած
Հիզիկ թևով հսկէ 'ի քուն սիրելեաց։

Ծաղկէ նաև հոն մինչ շուշան ըսպիտակ
Անմեղութեան սրտիդ ամբիծ նըշանակ.

Վարդըն կարմրիկ ծաղկէ հոն սուր փուշերով
Ցայտնել ինչպէս քու կեանքդ էր լի խոցերով.
Խանդաղակաթ տեսեր ըզմահ ծընողաց.
Դառն հարուածով մահուան և դու զարնըված
Մընաս բարով ըսիր կենացդ արևուն
Եւ մանկութեան ծիծաղադէմ օրերուն։

Ի ՄԱՀ

ԱԶՆԻՒԻ ԼՈՒԹՖԵԱՆ.

—

Ո՞ւր ես Ազնիւ, տեսանք երթալդ
Ուրախ դարձիդ չառինք մէկ լուր.
Քեզ գրկելով ճամբայ դըրինք
Դըրկերնիս բաց կ'սպասենք զուր.
Ո՛հ, ամենուն տըխուր ձայնիւ
Կը հարցընենք, ո՞ւր է Ազնիւ։

Ի՞նչ աւանդներ յանձնեցինք քեզ
Մօրդ ու քրոջդ արտասուագին
Հարազատիդ և մըտերմաց
Այրած սրտերն ու 'ողջոյնն յետին՝
Երբ դաս մեզի ուրախ դարձիւ
Ինչ փոխարէն բերես Ազնիւ։

Ու դեռ ինչեր ենք պատրաստեր
Թէ զքեզ նորէն գրկենք սիրով,

Քեզի նման ծաղկի փունջեր
Ու հանդէսներ ցնծուն պարով,
Բայց սրտերնիս լի է ահիւ
Ո՞հ կուշանաս, ինչու Աղնիւ։

Աւաղ, տեսէք սուգ առաւ ծով,
Զինքը տանող դարձաւ հովիկ,
Թևերըն կախ փըչէ տրտում.
Ի՞նչ լուր բերիր մեզի հովիկ,
Այն ձեր սրտի հատորն աղնիւ
Թըռաւ գընաց, մեռաւ Աղնիւ։

Վաղ չունեցար սիրուն Աղնիւ
Գոնէ տըխուր հողին վրայ
Արցունքներով մէկ թաց չիրիմ
Այս խօսքերով կանգներ վրկայ.
«Հոս իր բարքով դիմաքն աղնիւ
Ծաղկահասակ ներնջէ Աղնիւ»։

Ու չը լըսես պիտի ափսոս
Քու սիրելեաց չորս դին բոլոր
Աղեկիզիկ հառաչանքներն,
Ոչ սոխակին երգ սրգաւոր,
Եւ ոչ երկինք ու 'սատղունը անթիւ
Անոյշ ցողով լան քեզ Աղնիւ։

Թառամեցաւ ծովընկեցիկ
Փափկասուն վարդ իւր հասակին,

Աղի ալեաց անդունդին մէջ
Շիջաւ արև այն կորիճին,
Ցաւերժահարսունք գիսախըռիւ
Ծովուն մինակ լան քեզ Անիւ։

ԵՐԳ

Բացան դըրունք նոր տարեւոյս հայր ցանկալի,
Բացցին և քեզ նոր դանձք չնորհաց անըսպառ.
Հրեշտակք ըզքև կացցեն հըզօր հովանի
Զի անսասան կեցցես բազում ամաց շար։

Ականակիտ աւուրքդ յաւերժ պերճափառ,
Եւ մեր ի քոյդ ոլորեսցեն կենաց թելք.
Կեցցէ զգլխովդ երանութեան աստղն վառ.
Մընան յերկինս անմահութեան քեզ վայելք։

Համբաւըդ պերճ բացցէ ուղի դիւրահորդ
Մանկականաց մերոց ոտից դայթ ի դայթ,
Ի բաղմափայլ հոգւոյդ ձըրից լուսայորդ
Որդւոյդ ի մեզ հատցի անջինջ ճառագայթ։

ԵՐԳ

—

Ո՞վ երջանիկ դու նըժդեհ
Հիւր մեզ եկեալ պանծալի
Խաղաղութեան ոսկեփունջ
Փայլէ յաջոյդ ձիթենի։
Ճախրեն ըզքեզ թեւապար
Հաւատ և Սէր լուսաթռիչ
Ծագեալ Ցուսոյ կենսաւէտ
Նըշոյլ ի սիրտ բոլորից։
Հայրըն հոգւոց մեր Գրիգոր
Սերկեան աւուր ի հանդէս,
Զըւարթ ի Քեզ ակնարկէ
Եկեալ իւրում տանն ի տես։
Ըզքեզ ակումբ լուսերամ
Առեալ խայտամբ գեղապար,
Աստեղազարդ Քեզ այս մեր
Ցնծայ ողջոյն սուրբ Տաճար։

ԵՐԳ

Թարգմանեալ ի գաղղիականէ.

—

Մի՛ ի շաւիղ ընդ մոլար
Ուր ընթանայն մեղաւոր
Այլ 'նդ Տէրունեան ճանապարհ
Գնայցես որդեակ անխոտոր.

Լեր ուսանող և զբաղթ
Զանմեղութիւն ի քեզ պահեա գեղազարդ։

Լիջիր խոնարհ և ցածուն,
Մի՛ մեծատան բազմադանձ
Եւ վեհից փառք անկայուն
Արկցեն ի սիրտըդ նախանձ.
Զի ոյժ փառաց յաղթական
Սիրտն անմեղիկ և անարատ մանկութեան։

Ըզբերդըս կուռ բարձրաձիգ
Տէր ընդ ոտիւք տապալէ,
Այլ մամռապատն ի բունիկ
Միշտ հաշտ ակամբ ակնարկէ,
Ուր մայրն ի յերգս հըրճուալիս
Սընուցանէ ամբիծ սիրոյն ըզխայրիս։

ԲԵՐԹՈՂԱԿԱՆ ՈԳԻՆ ՀԱՑԱՍՏԱՆՈՒ Ի ՔՈՒՆ

ԵՐԳ

—

Ապողոնի որդիդ Նընջե՛ս ընդ ուռենեացն հովանեաւ
Պըսակաւորդ ի՛ հիւս դափնեաց նորա յաւէրժ անթառամ,
Քեզ ըզպաշտօն հարկանեն անմահ Մուսայքն ա-նուշիկք,

Եւ 'ի մեղմիկ մընչէ աւաղ կայեալ քընարդ առ
ընթեր։
Գեղաձաւալ որպէս աղբիւր զեղեալ 'ի սուրբ
ականէ,
Այնպէս խանդից 'ի ծոցոյդ ցայտեն ծորանք
քաղցրաբուխ,
Դաշնակութիւնք 'ի լեզուէդ կաթեն առատ մեղ-
բաժոր.
Եւ դու նընջիս ընդ վարսագեղ ընդ ուռենեացն
հովանեաւ
Ապտղոնեան 'ի հիւս դափնեաց պըսակաւորդ ի
ճակատ.
Օն արի, ել 'ի հանդէս, աշխարհալուր հար ըզ-
վողդ,
Հընչեցո 'ի լուր հայկեան դուպարայաղթ դիւ-
ցազանց
Բունելոց յանդընդային 'ի վայր մահուն աղջա-
մուղջ.
Եւ կանգնեսցին միանդամայն խոր 'ի շիրմացն
յարուցեալք
Քեզ ժըպիտ հըրճուանաց հանեալ ի դէմս վե-
հափառ
Ճախրեսցին լուսաթռիչ վեհից յաւերժն ի կայան
Անմահութեան ընկել 'ի քէն մատուցակեալն
ըզբաժակ։

Գ Ի Շ Ե Ր

—

Խաղաղական ժամ պարապոյ էր անդոյր,
Եւ տիեզերք պատեալ 'ի քօղ սեւաթոյր.
Բնութիւնն համայն անկեալ 'ի խոր 'ի թըմբիր
Վաստակաբեկ հանգչէր 'ի քուն և երկիր.
Համատարած սեւադէմ մութն ահաւոր
Բազմէր իշխան յաղջամըղջին յիւր աթոռ,
Թեռայր ընդ լոյս և ընդ արփին լուսավառ,
Կամէր զի սպառ լիցի երկիր իւր աւար։
Մակաղէին խաշինք յարօտն 'ի դադար,
Եւ օդականք առեալ 'ի յոստս ըզդալար,
Լքքեալ լերինք, լքքեալ և դաշտք ամայի,
Միայնութիւն բնակէր միայն 'ի յերկրի.
Փունջք խուռներամ ծաղկան վարդից կոտորակ,
Մարդարտաչար լըցեալ շաղով կենսունակ,
Ի սիւք հեզիկ ծածանէին վէտ 'ի վէտ,
Բուրումն անոյշ ծաւալանայր խընկաւէտ։
Դիշերախօս անդուստ և այն երգեցիկ
Եղանակէր գեղգեղ 'ի յիւր դայլայլիկ.
Նա միայնակ արարածոց յանդիման
Ի լըռութեան ժամու կացեալ մեղ թարգման,
Օրհնաբանեալ հաստչին ըզվեհ սքանչելիս.
Ցերկինս նըման վերառաքէր դըրուատիս,
Ո՛վ նազելի թըռչնիկ ճարտար երաժիշտ,
Քոյդ երգ սիրոյ դիւրիչ ոգւոյ բազմավիշտ.
Ո՛վ ամոքիչ սըրտից զեփիւռ ըզձական,

Մինչդեռ զերկիր պատեալ է քօղ տրխրական,
Եւ բընութիւն համայն սքօղեալ 'ի մրթար,
Ո՜հ, դուք միայն, դուք աշխարհիս մրխիթար.
Սակայն երկին շողայր վրսեմ վառ 'ի վառ,
Ջահազդեստեալ եթերաճեմն էր կամար.
Արծաթափայլ դրշխոյն 'ի գահ բոցակէզ
Ճեմէր դաշտին լայնածաւալ յասպարէզ.
Անդ պաղպաջուն հոյլք դընդից շուրջ պարաւոր,
Բոլորելով ակումբ 'ի կարգ դեղաւոր,
Ոսկեճաճանչ ակնապարար 'ի զարդու
Պատուասիրեն ըղնա շրքեղ 'ի սպասու.
Ո՜հ, երկնաճեմ աստղունք 'ի փոյլ լուսազգեաց,
Դուք ճառագայթք աստուածային վեհ փառաց,
Մինչդեռ 'ի խոր նընջեն 'ի քուն տիեզերք,
Լուռ են երկինք երկիր և ծով և այերք,
Դուք 'ի գովեստ անցեալ վեհին 'ի հանդէս,
Կապուտագեղ ընդ սրբարշաւն ասպարէզ,
Մրշտամրմունջ երկնից քընարք բազմաղեայ
Երգաբանէք զարքայն յաւէժ Ոլիմպեայ.
Ո՜հ, ես 'ի թաւ յայս դարևանդ հովասուն,
Ուր 'ի ծործորս խաղայ վրտակ կարկաջուն,
Ուր 'ի համբոյր ըզծաղկանց բոյլըս քընքուշ,
Շուրջ թևածեալ դրդուէ զեփիւռ փաղաքուշ,
Խորհրդաղդաց առեալ ընդիստ ես ասէն,
Տէր, ամայի կացեալ երկրիս համօրէն,
'Ի ձեզ աստղունք 'ի ձեզ յառեալ զաչս 'ի վեր,
Ի հոգեզուարճ թրմբիր պրշնում ընդ եթեր.
Այլ դուք մարմինք արդեօք լցեք օդապարք,

Եթէ զուարթնոց լուսեղինաց հուլից պարք.
Աստղունք աստղունք, մինչ 'ի գիշեր զովագին.
Նրշոյլք 'ի ձէնջ կաթեն 'ի շաղ ցօղագին,
Ցարշաւասոյն լուսաշաւիղ ձեր ի' ճեմ
Ի ձեզ զանմահ ծընունդս երկրի նրկատեմ:
Ո՛վ իմ Հայոց չրքնաղ երկիր դրախտավայր,
Տես զի որդւոցդ դիւցազանց վեհից պար
Երկնապարիկ յեթերս աստեղք բազմայոյլ,
Ոսկեծրզի փայլեն յաւէժ 'ի նրշոյլ:

ԵՐԳ ՄՕՐ

Թ վերայ մանկանն Բուենոյ.

—

Նընջեա մանուկս աչօք վճիտ
Նընջեա անոյշ յօրօրոցիդ:
Այդ հրաշագեղ գոհար բրբունք,
Որ յարթնութեանդ միշտ երերունք,
Ոհ, զի՞ խաղաղ և անշարժիկ
Փակեալ 'ի նինջ են աւասիկ.
Շրրթունքդ շուշանք լցեալ շաղով
Եւ գիրդ մարմնդ երկնից դեղով՝
Նընջեա մանուկս աչօք վճիտ
Նընջեա անոյշ յօրօրոցիդ:—
Ցօղն 'ի վերայ վարդին թերթից
Իմ ցօղ աչաց վառ վառ այտիցդ

Թշուառ մանկիկ, քեզ մոր միակ
Ո՞հ անժըպիտ են գորովանք,
Զուրկ դեռափթիթ 'ի տիպդ ամբիծ
Հոր կաթոգին 'ի համբուրից
Որ 'ի գըդուանս իւր սիրակեզ
Այսպէս փափկիկ ծընաւ ըզքեզ.
Աւաղ 'ի մէնջ գընաց հեռի,
Թող ըզքեզ որբ և զիս այրի
Զանդրանիկ իւր որդեակ չըքնաղ
Եւ ըզտարփալի հարսնըն մատաղ.
Ոչ գեղանի քեզ այլ եղբայր
Լիցի ընկեր սիրապատար,
Անմեղունակդ իմ աղաւնեակ
Դու ինձ միայն մնացեր որդեակ.
Այլ մեք լըքեալ թողաք անտէր,
Եւ մինչ ես մայրդ քեզ առընթեր
Ըզցայդ ցերեկ 'ի կոծ անբաւ
Սրտահառաչ մաշիմ 'ի ցաւ,
Ժպտես ճըչես քաղցրաղրուցիկ
Կամ յօրոցիդ հանդչիս հեզիկ.
Եւ հայր քոյին 'ի հող տըխուր
Գերեզմանաց անդր 'ի բըլուր
Շուրջ պարառեալ նոճեաց 'ի սեաւ
Ընդջէ մահուն ընդ ցուրտ շիրմաւ,
Արդ 'ի շրթունսդ իսկ վարդաձոյլ
Զբուարթութեան փայլէ նըշոյլ.
Ընդէ՞ր երեսքդ ժըպտեցան,
Հրեշտակք եղեն քեզ յանդիման

Որ յերազիդ քում ոսկեթել
Մօտին զայտերըդ համբուրել;
Ոմն զէիւնափայլ պարանոցիկդ
Այլ ըզթաթիկըս քո փափկիկ
Կամ յանուանէդ ըզքեզ ձայնեն
Կամ շուրջ ըզքեզ պար բոլորեն.
Այլք խաղալով ընդ քոյդ օրոց
Ցունկնըդ մնչեն ձայնիւ երգոց
«Ի քո քաղցրիկ մօրէդ ծածուկ
Մանկիկ յերկինս եկ փախիցուք»։
Եւ քո արդեօք թռեաւ հոգեակ.
Զարթիր զարթիր իմ աղաւնեակ.
Կաթն անուշիկ քընոյդ փոխան
Քեզ ջամբեցից մեղրածորան։

ՈՂԲ ՄԱՆԿԱՆ

Ի բռչնիկն իւր վաղամեռիկ

—

Ո՛վ իմ թռչնիկ քաղցրալեզուի
Հիւր և բընակ ընդելական
Անուշահոտ մեր պարտէզին,
Որ տանձենեաց զբուարթափթիթ
Վարսագեղիցն 'ի տերևոց
Մշտամրմունջ յերգ անուշիկ
Ծըւիկ ծըւիկ ինձ ձայնէիր,
Աւաղ ընդէ՞ր այդպէս անշարժ

Կաս դու լռիկ և անբարբառ.
Պուտ պուտ գունով փոքրիկ գլուխդ
Կախեալ 'ի վայր, ողորմ տեսիլ.
Ո՞ւր քոյդ պարել վազեալ 'ի թինդ
Ոստոց 'ի յոստ շոյտ ոստոստելդ.
Ի կոչ ձայնիս քեզ սիրալուր
Շուրջ ըզգլխովս առեալ թըռիչս
Ընդ խոպոպիս իմ խաղայիր.
Զիս սուր 'ի քիթ փայփայէիր.
Այլ ո՜հ այժմիկ մեռա՞ր արդեօք.
Ահա սեռուկ քոյին աչկունք
Են նուաղեալ թերաբացիկ.
Եկ նաղելիս տաց քեզ հողոյ
Ի՛աղօթեցից վասն հեզ ոգւոյդ.
Զի 'ի պարտէզքն Ցիսուսի,
(Են են անշուշտ և անդ թռչնիկք),
Ոսկեճամուկ 'ի նոր փետուրս
Աստ անդ երգով թեւապարիկ
Զունկն Ցիսուսի զմայլեցուսցես.
Սակայն խնդրեմ, անտի դարձեալ
Ծըւիկ ծըւիկ ինձ ձայնիցես։

ՀՐԱՒԷՐ Ի ՄԱՐՏ ԽՈՍՐՈՎՈՒ ՄԵԾԻ

—

Ե Ր Գ

Ի գահոյս Արամեան
Պերճ առիւծ սիգախրոխտ
Խոսրով արքայ դիւցազանց
Մըռընչէ ահաւոր
Դող առին Սասանեանք.
Գուպարաւորաց շողան զէնք
Ի մարտամբոխ գրդին 'ի ռազմ։
Ահագնատրոփ 'ի քայլ ոտից
Հեծեն կայանքն անդնդայինք,
Ցոլաց արփին 'ի դաշտ փառաց
Ել հանդիսակից Հայ փառաց,
Շարժին ահեղ 'ի հողմոց
Ի բարձրութիւնս արծուեդրօշք։
Ցարամեան գահոյից
Ելանէր արքայն մեծ
Գոչիւնք փողոցն որոտմանց
Զարիւնուշտըն հրաւէր
Հընչեցին սոսկալի
Զարթեան արձագանք դղորդմամբ
Խոսրով արքայ նաղէր 'ի ճեմ.
Խնդացին վաշտք նահատակաց
Լըւեալ խաղմից զաւետիս դոռ
Խնդացին վաշտք նահատակաց։

Վեհաղնոյն 'ի տես արքային.
«Հայկեան փառացն ախոյեանք
Ողջոյն ընդ Ձեզ իմ կորիւնք։
«Ընդ Ձեզ քաջք իմ ելից
Գոռոզին Սասանեան
Առնել ըղձահ բոցակէզ.
Ցաղթութիւն ճախրէ զմեօք
Պճնեսցին սուսերք մեր
Բոսորակայլակ ճապաղեօք
Հալածեսցին պիղծ մոխրաշունչք,
Ո՛հ իմ պայծառ փայլէ ճակատ
Տեսէ՛ք յեռանդ ձեր ապաժոյժ։
Ո՛հ իմ պայծառ փայլէ ճակատ
Ի շողիւն յաղթանակաց պերճ։
Եւ ոչ 'ի ծագս աշխարհի
Կացցեն անմահ թշնամիք։

ԵՐԳ

—

Անոյշ աշխոյժ կերպարան
Շնորհաց սիրոյ բնակարան,
Բարքով հեզիկ Աղաւնի
Խօսքն մընչիւն գեղանի,
Ո՞վ է արդեօք թող զրուցեն—
Եւփիմէն։
Այն երեսէն հուր ելաւ
Այն աչքերէն նետ թըռաւ.

Զեմ դիմանալ բիւր ցաւոց
Զամիսորէ հասակս ծախէ բոց.
Ո՞վ դիս զարկաւ թող զրուցեն—
Եւփիմէն։
Ո՞վ երջանիկ Իւսկիւտար
Ըզքեզ ալ թող չեմ 'ի տար
Այնպէս քեզի կապուեցայ
Բաժնըւելու ճար չըկայ
Ո՞վ դիս բըռնեց թող զրուցեն—
Եւփիմէն.

ԵՐԳ

—

Անմահ անուշ դու գինի
Շատ սիրելի ես քաջին,
Զի գոյնդ արեան նմանի
Պատերազմաց 'ի դաշտին.
Բոսորափայլ քո փրփուր
Որ մեզ 'ի կռիւ փըշէ հուր
Թէ հաշտութիւն գայ արդար
Փոխի 'ի ցող զովարար։

Դափնիք քեզմով կառնեն ոյժ.
Կարմիր կրակոտ դու գինի
Քեզմով զըւարթ և աշխոյժ
Կըլլայ հեզիկ ձիթենի,

Քեզմով վառի բոցագոյն.
Օրիորդին համեստ գոյն.
Կեցցեն մեր քաջ պատանիք
Եւ նազելի դեղեցիկք։

ՀԱՆԵԼՈՒԿ

—

Թէ որ կուզես զիս ճանչնալ
Վերարկուէս մի խաբուիր.
Իմ մականունս չունեցող
Պըտուղք համով չեն ուտուիր.
Տաճկերէն ինչ ըսել եմ
Զանա աղէկ գիտնալու
Առանց անոր կարկանդակ
Դուն չես կրնար ուտելու։
Երկրորդն յեսթանց բռնաւոր
Տիրէ սրտի իմ վրայ,
Ու ես անոր զօրութեամբն
Մատենագիր մը եղայ.
Իմ անունըս իմաստունք
Ցիշեն արդար բարկութեամբ,
Սարկաւագունք երգելով,
Տգէտք անմիտ յարգութեամբ.
Անունով մեծ ճգնաւոր
Ու եմ հովիւ պաշտօնով
Գործքով գիտնաս ինչ ըլլաս
Պիտի դողաս սարսափով։

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Առ Միքայէլ վարդապետ Շէրեան

ԲՈՂՈՔ

—

Մխիթարեանց եմք աշակերտ,
Վարժեալք նոցուն 'ի դասատակերտ
Զի զմեզ առնես արդ դատափետ
Է՞ Շէքեան դու վարդապետ։
Թէ ոչ վաստակ նոցին գրչաց
Կոփէր զանհարթ միտս հայազգեաց,
Էիք արդ դու և Պօրճոնեան
Բեռին բարձողք 'ի Նաւարան։
Անշուք ծնողաց 'ի խոր խաւ սր
Տգիտութեան, իմաստիւք վառ
Փայլեն սրդիքն 'ի դարուց դարս,
Իբրու զվարսամ յաստեղաց պարս։
Դաստիարակ հանուրց ազգիս,
Զսոսա միայն գիտեմք յաստիս.
Իշխե՞ս զուգել նոցին փայլման
Նըսեմաստուեր դու Է՞ Շէքեան։
Անիծակո՞ւռ անկցին յերկիր
Որք չար խօսին անկարեկիր.
Թող Կայենի առցեն բաժին
Եղբայրասեացք 'ի հուր մաշին։
Ցորչափ շընչեմք զոդ 'ի ոընդունս,
Խաղայ արիւն մեր յերակունս,

Եւ ցորչափ զայս երգէ Պլեէտ,
Մխիթարեանք կեցցեն յաւէտ։

15 օգոստոս 1852.

ԳՆԱՑԷՔ ԻՄ ՏԱՂՔ

—

Գնացէք իմ տաղք, ոչ թէ յեթեր
Ուր շող և փայլ և հով ժպտին,
Եւ ուր զուարթնոյն վարսք լուսահեր
Ծալ ծալ 'ի ճեմս իւր ծածանին։
Գնացէք իմ տաղք, ոչ 'ի կամար
Ուր լուսափթիթ ծաղկունք երկնից
Իբր ըզդրասանդ ականց գոհար
Կախեալ ցոլան յոլորս փնջից։
Գնացէք իմ տաղք, ոչ թէ 'ի ծոց
Զարմանահրաշ սիրոյ բնութեան
Որ 'ի յաւիւն 'ի հուր և բոց
Վառէ, գրգէ տածէ զհամայն։
Գնացէք իմ տաղք, ոչ 'ի պարերդ
Օդաթըռիչ այն Սիլֆիտաց
Որ յասպարէզ կապուտաներկ
Կայթեն հողմոյն 'ի սոյլ նուագաց։
Գնացէք իմ տաղք. գնացէք առ կոյս
Գնացէք մեղմով և պատկառոտ

Ծաւի աչաց նորա 'ի լոյս
Զուարթացէք անձկակարօտ։
Եւ թէ անոյշ ձեզ ակնարկեաց,
Իբրև զերամ թռչնոց, յուշիկ
Դուք թառեցէք իւր խոպոպեաց
Վերայ, ձեռաց և յուս փափկիկ։
Եւ երգս աղու յօրինելով
Ցունկըն նորա ճառուողեցէք,
Թէ յարթմընի թէ ըզբընով
Միշտ ըզնովաւ թևածեցէք։
Իսկ՝ յորժամ ոչ ևս իմ ձայն
Հասցէ առ նա՝ և կամ իմ շունչ
Ու 'ի մոռացօնս անկայց համայն
Գոնեա լըսէր ըզձեր մրմունջ։

—※—

Ա Շ Ո Ի Ն

—

ԵՐԳ

Առ Նէ.

Ո՞ւր էք ծաղկունք դուք փայլփլլունք.
Ո՞ւր ձեր այտեր անուշ հոտով.
Ո՞ւր ձեր պչրանք ու փափկութիւն
Եւ ծոց լցեալ շաղ մարգարտով։

Ինչու հովիկ, անգութ հովիկ
Ցուրտ համբոյրներ կուտայ ձեզի,

Մոռցաւ արդեօք իւր սեր գողտրիկ
Եւ իւր գգուանք փայփայելի։

Ո՞ւր թիթեռնիկ հոլաթևեան
Ձեր բաժակին հիւթոց կարօտ,
Որ դայր թերթից ձերոց գունեան
Տանել ըզբոյր հեռու և մօտ։

Ա՜հ, ո՞ւր սոխակն իմ սիրակէզ
Որ տերևոց նստած 'ի շուք
Հալէր կարմրիկ վարդին 'ի տես
Եւ կողկողէր սրտամաշուք։

Զկա՛յ ղեփիւռ, չկա՛յ ծաղիկ
Եւ ծաղկատարափ չկայ թիթեռ,
Զկայ սոխակ, ոչ վարդենիք
Լցեալ ցօղով մարգրտայեռ։

Սակայն կուսիկ մի կայ փափուկ
Բոլոր անձէն շնչէ գարուն,
Կուսիկ որ դեռ թըւի մանուկ,
Հրեշտակ 'ի թուխ վարս ոլորուն։

Այլ ինչ պիտին ծաղկանց փունջեր
Ցորժամ նորա այտերն հայիս,
Այլ ինչ պիտին վարդից հոտեր
Ցորժամ նորա մօտ գըտնըւիս։

Ոհ մի՞ երթար դու տեսնելու
Ձերմակ շուշանն թէ յիւր ճիւղիկ
Ի՞նչպէս նազի գլուխըն ազու
Երբ հոգն իրեն տայ ողջունիկ,

Տես թէ կուսին փափուկ ուլան
Վերայ ի՞նչպէս կը տատանի
Հոյլ հոպոպեօք գեղածածան
Զքնաղ գլխիկ իւր նազելի։

Լո՛ւռ կաց գիշերց սիրուն խօսնա՛կ
Լրսէ մէյ մ'ալ զիւր դայլայլիկ,
Լո՛ւռ կաց, կուսին երբ 'ի դաշնակ
Երթևեկեն մանու թաթիկք։

Ո՞վ հրաշագեղ կոյս օրիորդ,
Ցիմ հայրենիս թէ դու էիր,
Հայոց չիրմաց՝ արտասուայորդ
Ուռենիներն թէ տեսնէիր։

Եւ իւր վրտակն ողբանըւէր
Ի սըրբափայլ իւր հայելի
Տայր որորել այն քու պատկեր
Որ հրեշտակաց է տարփելի։

Անընմանեակ աչերդ մեղոյշ
Նորա երկինք թէ տեսնէին,

Ու մէկ նայեաց, նայեաց մ'անոյշ
Արձրկէէ՛ր նորա հողին։

Ցայնժամ սոխակ չիրմացն Հայոց
Որ միշտ ողբայ հողմոց 'ի մռունչ
Գէթ մի անգամ լռեալ ըզկոծ
Քեզ ողջունէր յուրախ մրրմունջ։

ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻ

ԾՐԳ

—

Դու փափկաթև մանկիկ զեփիւռ
Աղբերց վրայէն լուսակարկաչ
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ
Ի՞նչպէս թռչիս ինձ ընդառաջ,
Ու խունկ և զով ընծայելով
Չիս ողջունես հեզիկ շնչով։

Ո՛հ կըսիրեմ ըզքեզ հողմիկ
Երբ դու փութաս ինձի գալու
Ի պար 'ի թռիչ 'ի սոյլ մեղմիկ
Այրած ճակտիս իմ այցելու,
Ծաղիկ հոգւոյս քև զովացած
Բացուի 'ի լոյս ախորժ կենաց։

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ
Լուր տար հովտին ու ծործորին
Ու անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակը թառին;
Թէ մըտերիմն իւրեանց եկաւ
Բիւր ըզմայլմանց յիշատակաւ։

Ո՛հ կորսըւած իմ հաճոյքներ,
Հոս վերըստին գըտնեմ ըզձեզ,
Ծառոց շըքով էք ծածկըւեր
Ու փըրփըրով առուակին հեզ.
Ահա կայտառէք 'ի յայս ծըմակ
Ի յայս թըփուտ հովանոցակ։

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ
Ճակտէս 'ի բաց հեռանային
Ու փունջք ժամուց գեղապարիկ
Սիրտս թեթև օրորէին,
Եւ բընութիւն՝ մայր որդեսէր
Քնքուշ գրկաց մէջ զիս գըգուէր։

Հոս ճէմէին երեկոյեան
Ի զով ըստուեր պար մի կուսից,
Մաղերն հովուն բազմաբուրեան
Սիրտք ընծայուած հեշտ վայելից.
Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ
Ջիրար շոյեն սիրատարփիկ։

Մըտերմութիւն, Սէր կրակ ու բոց
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան,
Ուր բիւր դալարք ձեզ հանդըստոց
Ու՝ անհուն դաշտեր զբօսարան.
Մըտերմութիւն, ինձ երանի՜
Թէ հոս ծոցեդ հոգիս թառանի։

Դու փափկաթև մանկիկ գեփիւռ
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ
Թըռիր թըռիր ինձ ընդ առաջ,
Ու խունկ և զով ընծայելով
Պարէ՛ չորս դիս հեզիկ շնչով։

Ե Ր Գ

—

ՅԱլեմտաղըն այն գեղեցիկ
Գացի ժուռ դալ անհոգ մոլար
Ուր բիւր վրտակ բիւրեղ ծոցիկ
Մատուցանեն անկոց դալար,
Երբ փայլփըլուն ծագէ արև
Ոսկի ցանուի լերանց վերայ,
Շող արձըկէ ամեն տերև
Ձեփիւռ թըփոց հետ կըխաղայ։
Բայց քան զամեն հովիկ ընքուշ
Հրեչտակ մի անդ կըթևածէր

Ու քան զամեն երգերն անուշ
Այն նաղելոյն ձայնիկն հնչէր։
Թըռի՛ր ինծի, ահա մըռայլ
Անտառին մէջ իջաւ գիշեր,
Կանչէ պըլպուլ լուսնին 'ի փայլ
Բաց անոնցմէ չունինք ընկեր։
Սա հովանիքն անուշաբոյր
Տեսնեն ըզմեզ թև ընդ թևով
Ասդիս ծաղիկ անդին համբոյր
Փունջ փունջ սիրոյ ընծայելով։
Պարանոցիս մարգրիտ մանեակ
Կախէ՝ սպիտակ բուկին թևեր,
Մաղերդ գըլխիս իմ հովանեակ
Ու լուռ մընջիկ սահին ժամեր։
Երբ բընութիւն անխօս կենայ
Մահկանացուք ձայն չեն հաներ
Լուռ է ամեն ինչ որ շուրջ կայ,
Աւելի տաք խօսին սրտեր։
Շուշանափայլ բարձ մի փափկիկ
Ըլլայ քու ծոցդ ինձ առ ի քուն.
Բայց թէ այն սէրդ է խաբուսիկ
Լաւ է չը տեսնամ ըզլոյս առտուն։

ԵՐԳ

—

Ո՞ւր էր թէ զեփիւռիկ
Ելլայի թափառիկ
Ոսկեթել մազերուդ
Տայի համբուրիկ.
Ո՞ւր էր թէ վարդ գոհար
Ելլայի վառ 'ի վառ,
Ընարէի ինձ բազմոց
Կուրծքըդ ձիւնափայլ.
Ո՞ւր էր թէ քանարիկ
Ելլայի ես թրռչնիկ,
Թռչիլ դալ ու շոյել
Դէմքըդ գեղեցիկ.
Կամ երաշ խուսափուկ
Որ դայի մինակուկ
Քունիդ մէջ խըռովել
Քու սիրտըդ փափուկ։
Ի՞նչ ըրի ես քեզի
Որ ցաւոց այդպիսի
Եւ անբոյժ հարուածոց.
Ելամ արժանի։
Հըրեշտակ էր թըռաւ
Երաշ էր որ անցաւ
Այդ քու սէրըդ փափուկ
Շուտով թոռմեցաւ։

ԵՐԳ

—

Ի՞նչու երկինք որոտալով
Զարդարուեցաւ պայծառ ամպով,
Տեղան ամպրոպք կրակէ նիզակ.—
Զի բարձրացաւ յօդ աւազակ...

ԱՐՏԱՍՈՒՔ ԿՈՒՄԻՆ

—

ԵՐԳ

Լաց ո՛ կուսիկ. զի արտասուք
Կուսին 'ի բիբ են մարգարիտ.
Լաց ո՛ կուսիկ. զի տրտմասուդ
Զքնաղ ևս են աչկունք վըճիտ։
Ըզփափկամէջք սիրեմ ծաղիկ
Որ 'ի դաշտիկ կայ պատկառուկ,
Ըզնա գիշերց պճնէ ցօղիկ
Արտօսր ըզգլուխն առնէ կախուկ։
Սիրեմ ըզշողս ես լուսարփի
Որ 'ի նամէտ ծոցոյ ամպոյն
Ի ծով ծաւալ փայլ ըզփայլի
Ոսկի հերաց ցոլան հանդոյն։
Զանմահ փափուկ սիրեմ հրեշտակ
Որ ըզդիմօքն ածեալ թևեր
Մատունք 'ի քնար տիրահընչակ
Լայ ըզմարդկան ա՛երկրի զաւեր։

Լա՛ց ո՛ կուսիկ, և դըթութիւն
Ոչ սրբէ զայն չիթս անուշիկ,
Այլ կայ յակճիռ և ըղմայլուն,
Այնքա՜ն, թէ լաս, ես դեղեցիկ
Լա՛ց ո՛ կուսիկ, մինչև յերկնից
Իջցէ դալար երջանկութիւն
Եւ դգուեսցէ զայտերդ ամբիծ
Եւ ըղձալիկդ այն գրգասո՜ն,
Թուխ աչերոյդ տացէ համբոյր
Զարտօսր անոի սրբել 'ի սպառ,
Եւ իբր 'ի բոց անուշաբոյր
Հալեալ ցնդին չիթք լուսավառ։

Ե Ր Գ

Մեռած ի մահուն եղեռերգեալ

—

Հեծեա՜ց զերդ սօսափիւն գիշերական պաղեալ հողմոց,
Տուր ձայնիս ծաւալանալ հանգոյն ջայլից գուժաւորաց.
Ի գերկս իմ եկ և մրմնջեա՛ հուսկ մրմունջ չև՛ փըշրեալ ըզքեզ
Եւ ըզբեկորըս քո արկեա՝ կոխան ոտից անցաւորաց։

Արշալոյս ծիծղուն կենաց 'ի մէջ մըռայլ կայ խորասոյզ,
Ապագայն իմ ըսքողեալ ընդ թուխ ամպովք փայլակնացայտ,
Եւ ներկայս որ 'ի ձեռին քսմնեալ 'ի փուշ և 'ի դժնիկ
Ո՜ Քընար և սիրտ իմ խոնջէ ընդ բեռամբք յիշատակաց։
Ի նախընծայ լարքս քոյին մինչ կայտառէին մատունք զըւարճ
Պարք հաւուց խայտանըկար զիս ունէին ընկեր նուագաց,
Մուսայն իմ լոգանայր 'ի ճախրահոս բնութեան աղբիւր,
Ինձ մեղր անոի մատուցանէր և ծաղկահոտ անուշութիւնս։
Մի ևեթ օր անամպ փայլեցաւ այն երջանկութիւն
Եւ երկրորդն առաւօտ չունէր ըզնոյն գեղ դիտակի.
Ցանձնիւր աւուրն 'ի ծոցոյ ծնեալ խաւար բարկ փոթորիկ,
Մէն մի ծաղիկ 'ի փընջոյս կապտեր սուրայր յանհետ փախուստ
Արդ առաջի իմ սոսկագէմ արձանացաւ թշուառութիւն։
Ուղևորն հէք 'ի տեսիլ արիւնըռուչտ հուղկահարին

Ըզբեռն 'ի բաց դընէ զումպէտ, մի սուսերին
լիցի խափան,
Ի բաց ըզքնարն ես արկանեմ 'ի տես խոժոռ ա-
խոյենին։
Հեծեաց զերդ սօսափիւն գիշերական պաղեալ
հողմոց,
Տուր ձայնիս ծաւալանալ հանդոյն ջայլից գու-
ժաւորաց,
Ի գերկս իմ եկ և մրմընջեա հուսկ մրմունջ չև'
փչրեալ ըզբեզ
Եւ ըզբեկորըս քո արկեալ կոխան ոտից անցաւորաց։
Զի հանդոյն չողին լուսնի զորովք փարել ըզձայ
մանուկ
Սրտահեշտ ձօնիք կենաց թոթափեցան յիմոց
ձեռաց,
Ոյք զաշխոյժս իմ տանէին բոցանըշոյլ շիջան
հըրատք.
Հաս սեաւ գիշեր՝ յոր ըսպիտակ ուղիս հանդէպ
տարածանի։
Ընթացայց մենաւոր ըզճանապարհն ամայութեան,
Ոչ ևս յԱդինն իմ դարձուցից ըզբիբս որ այլ
չունին արտօսր.
Եւ զի՞նչ պէտք նըւադաւոր երգոց անդարձ աբ-
սորելոյն.
Փչրեաց Քընար. ես լուռ ցաւեր խնդրեմ և լուռ
գերեզման։

ՎԵՐԱԴԱՐՁ

Ասէր ոգեակ մանուշակին,
«Թերթք իմ անկան, բեկաւ ծըղօտ,
Քոյր իմ, երթամ, և ցօղադին
Լացցէ վաղիւ զիս առաւօտ,
Այլ ոչ ընդ բաղդն իմ հառաչեմ
Որ զիս ընկճէ 'ի դալարւոջ.
Ցորժամ դարուն դայ ծաղկաճեմ
Նազիմ դարձեալ ես յիմ բողբոջ»։

Իսկ ես, ասէր, այդուց ցօղիկ
«Ի տերեւոց գգուիմ 'ի ծոց
Ինձ փարելի ծաղկանց ցեղիկ
Նոցա այտեր ինձ հանդըստոց.
Այլ զիս կիզու հհ, արևակ...
Մի՛ մի՛ տխրիր վարդ սիրեցեալ
Գայցէ գիշեր և կարմրորակ
Ի քո ծոցիկ եկից դարձեալ»։

Անդուստ սոխակ 'ի պուրակին.
Ցեռին նըւադ դայս յեղյեղէր.
«Ողջմամբ մընայք ջուրք առուակին,
Ողջմամբ ծըմակք նըսեմաստուեր.
Այլ մինչ նորոգ դայ Ապրիել
Եւ զարթիցեն գեղ դալարիք.
Ցիմ հովանիս եկից թառել,
Սլաստին դարձեալ իմ դայլայլիկք»։

Եւ դու վըտակ տխրակարկաչ
Զի՞ այդ մրմունջ քո սրտացաւ.
«Լըսարուք դաշտք ոհ, զիմ հառաչ,
Վըճիտ աղբիւրս ցամաքեցաւ.
Այլ ձիւնաբերք մինչ 'ի լերանց
Գայցեն զերկիր արթուցանել,
Ես 'ի միջոյ փափուկ ծըղեաց
Եկից դարձեալ հեղիկ սահել»,

Շողն արփենուոյն ընդ երեկոյս
Ցիւրն օրհասին ամպոց վերայ
Աղօտափայլ դողդոջ մի լոյս
Տայր ընդ ոլորտս բացակայ.
«Սակայն, ասէր, երկիր ծաւալ
Ծով ծիրանի, առնում ձեզ այց.
Ընդ աշալուշ վաղիւ դարձեալ
Ցոյժ առաւել ես փայլեցայց»։

Այսպէս ահա ծաղիկ և ցող
Սոխակն անոյշ, անոյշ առուակ,
Եւ արփենուոյն կենսաբեր շող
Մեկնին, սակայն դառնան երագ.
Եւ դու կուսիկ դու որ դեռ նոր
Ծածկեալ 'ի հող մատաղ ըղտիս
Տարեր ըզգեղդ ըզբոյր և շնորհ,
Ա՞հ դու միայն ոչ ես դարձցիս։

ՃԵՄՔ Ի ԼԵԱՌՆ ՀՍԿԱՑԻՆ

—

ԵՐԳ

Ծովքն ցոլայր և ծըփծըփայր
Սուրայր ակատն 'ի մէջ ալեաց,
Հոգն հեզաթռիչ երթայր ու գայր
Վազվըռտելով ամեն դիւաց։
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Մրմընջէին մանըր ալեակք
Նաւուն կողից տալով համբոյր,
Եւ կոյս՝ բաժիշտ Ոգւոյս նմանեակ
Երգ ծաւալէր 'ի ծով անդոյր։
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ի՞նչ շուտ հասանք և հանդարտիկ...
Կարծես ծովուն վրհուկ գըլթոտ
Մեզ գգուելով 'ի ծոցն յուշիկ
Բերաւ 'ի զով յայս ըստորոտ.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Զերդ գեղավարս յաղթող հսկայ
Որ խրոխտ նայի ընդ չորս բոլոր,

Այնպէս լեռն ալ մեղի մօտ կայ
Անտառներով պըսակաւոր.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թեւեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Թռչնոյ մը պէս կուսիկն անուշ
Տըւած մաղերն հովուն 'ի ծուփ,
Կըթռչըտի ընդ քար ընդ փուշ
Դարէ 'ի դար թուփէ 'ի թուփ.
Բացէք հաճոյք փափուկ թեւեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Դար վեր դար վեր. ո՜հ ինչ վըսեմ
Ընդարձակի կապոյտ եթեր.
Դար վեր, ահա ծովում նըսեմ
Դիտեմ հեռուանց ահեղ պատկեր.
Բացէք հաճոյք փափուկ թեւեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Միտք իմ անժոյժ և սուրարշաւ
Թըռաւ յանկարծ իւր ալեաց մէջ,
Խաղաց, ծըփաց, թաւալեցաւ
Թուխ կոհակաց ընդ ել և էջ։
Բացէք հաճոյք փափուկ թեւեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ու ձիւնափայլ այն փրփուրներ
Որ անդընդին ցայտեն մէջէն,

Կարծես ճերմակ վարդից թերթեր
Որ յիւր ծոցէն կըբողբոջեն.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թեւեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Հուր հեր արփւոյն կը ծաւալի
Ի դաշտ յարօտ գեղաժըպիտ,
Ծոփն 'ի յերկինքս կ'ըզմայլի
Երկինք 'ի ծով ծիծաղախիտ.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թեւեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ի՞նչ սխրալի ես դու բնութիւն
Երբ կենսունակ քուկին շնչով
Գայ պարաւոր աղուոր գարուն
Գունակերպիկ ծաղիկներով.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թեւեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ի՞նչ գեղանի ես դու բնութիւն
Երբ շաղն ու ցօղ ծոցեդ տեղան,
Եւ քու մէջքիդ գօտի անհուն
Եօթնակամար կապես ծիածան.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թեւեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ու երբ գիշերը կը բանայ
Իւր աստղազարդ ամպհովանի,

Լուսնին զարդով ճակտին վերայ
Նայի ծովուն 'ի հայելի.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ի՞նչ վեհ, ի՞նչ մեծ ես դու բնութիւն
Որոյ նայուածքն է սուր փայլակ,
Իւր ձայն՝ մրրկոտ ալեաց մռնչիւն
Երբ ամպերէն վազէ կայծակ.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ու այս ամեն ըսքանչելիք
Աւելի վեհ կուգան 'ի տես
Ու վառեն զիմ սիրտ և ոգիք
Երբ 'ի բարձանց դիտեմ ըզքեզ.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ո՛հ, զայս բնութիւն երգէ՛ կուսան.
Իւր զարդերէն մէկն այլ դու չե՞ս.
Քենէ չքնաղ կ'ըլլա՞յ դուսան
Որ ձայնիկովդ երկինք դիւթես.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ահա խոսի... ըլցան բոցով
Իւր սեաթոյր ականջիք.

Ահա երգէ... ըլցաւ խանդով
Հովիտ ու մարգ ու՝ ամէն տեղիք.
Բացէք հաճոյք փափուկ թևեր
Տարէք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Շունչք և մրմունջք դադարեցին,
Միայն հողմիկ փըչէր համբոյր,
Ու 'ի վերայ մաքուր ճակտին
Օրորուէին հոպոպք սամոյր.
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Ու լուսափայլ ամպիկ բարակ
Գլխուն վերև հեղիկ խաղայր,
Եւ հովանին զով ու՝ պտորժակ
Դէմքին վերայ ծաւալանայր.
Բացէք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

Անշուշտ 'ի յայն ծածկեալ էին
Զոյգ մի հրեշտակ օդապարիկ
Որ իրարու փըսփըսային
«Ի՞նչ անուշ մեր երգէ բուրիկ...»
Բացէ՛ք հաճոյք փափուկ թևեր
Տարէ՛ք ըզմեզ բըլուրն 'ի վեր։

ՄԱՀ ՊԱՆԴԽՏԻՆ

(Եմանցողութիւն)

—

Մի լայք հայր իմ ու մայրիկ
Կոյս մի՞ լար. թէ երթամ
Յօտար երկիր պանդխտիկ
Այլ շուտով եմ դառնամ.
Դառնամ առ քեզ Հայաստան
Եւ հովիտք ծաղկաբոյր.
Ո՜հ մէկ աւանդ սիրական
Տուր ինձ մայր քու համբոյր։
Առաւ համբոյրն ու գընաց.
Այլ 'ի տար աշխարհին
Թըռաւ արևն իւր կենաց
Ի ծաղիկ հասակին.
Լացէ՛ք հայր իմ ու մայրիկ
Լաց ո՞ կոյս զի երթամ
Յօտար երկիր պանդխտիկ
Մեռանիմ ես անժամ։

ԴԻՒՑԱԶՈՒՆՔ ՀԱՑՈՑ

—

ԳԻՇՆԸ

Ժամ էր պարապոյ խաղաղական և յանկուցիչ.
Երկիր 'ի քօղ սևաթոյր ըզլռութեամբ փարեալ անոյշ
Խոր 'ի քուն թանձրութեան հանդչէր համայն վաստակաբեկ։
Իբրև հսկայ թըխատեսակ յանդնդափոս վազեալ յայրէն
Սևադէմ ոստեաւ գիշեր ծագաց 'ի ծագս տիեզերաց.
Լըռէր ընութիւն առ հեշտեաւ լըսել ըզսոյլ հովուին սրնգի,
Ըզնուրբ շըշունչ շրթանց սիրոյ զերգ մօր յորրանն 'ի քաղցրաճաւինչ
Ըզկարեվէր սրտից հառաչ և զաղօթկեր մրմունջ ծերոյն.
Ի փարախս օթագայեալ մակաղէին հօտք և անդեայք,
Եւ օդականք սաղարթախիտ առեալ 'ի յոստս դադար.
Փունջք խուռներամ վարդից ծաղկանց մարգարտաշար լըցեալ շաղով
Ի սիւդ հեզիկ ծածանէին և խունկ անոյշ ծաւալանայր

Հնչէր անդուստ փափուկ նըսեմաստուեր ւ'ի թաւ մայրեաց
Գիշերախօս երգեցկին նըւագաւորըն դայլայլիկ,
Նա միայնակ լըռութեան ժամուն կացեալ ընդ մեր թարգման
Ըզմրմունջն օրհներգութեանց երկրի յերկին վերառաքէր.
Եւ երկինք ջահազգեստեալ շողայր վըսեմ և վառ 'ի վառ,
Լուսին ամպեղէն քող լուսաստիւռ արկեալ գիւրեաւ
Նաղէր 'ի պարս աստեղաց շուրջ ըզնովաւ ակըմբահոյլը։
Ո՜հ, ես 'ի յայս բուրազուարթ և հովասուն 'ի դարև անդ
Ուստ 'ի ծործոր խաղայ վըտակ սահուն ալեօքըն կարկաջոտ,
Ուր 'ի համբոյր զբոյլըս ծաղկանց դգուէ զեփիւռ փաղաքշելով,
Խորհրդաղդած առեալ ըզնիստ, տէր ամայի կացեալ երկրիս,
Միաք իմ ընդ քեզ ճեմեն լուսնակ 'ի հրաշազարդ դաշտըս երկնից
Եւ 'ի ձեզ Աստղունք փայլունք, 'ի ձեզ յակճիռս ակընկառոյց
Կապուտափայլն ընդ կամար յառեալ պչնում հոգեզբաւրճ.

Այլ դուք մարմինք իցէք արդեօք, եթէ զուարթնոց պարք լուսեղէն.
Լուսատուք տիեզերաց միթէ լապտերք մշտաբորբոք,
Առկախեալք 'ի դահլիճս Աստուածութեան օթարանաց,
Թէ բոցեղէն հովանոցք ուր մէն մի դահք են Անմահին։
Մինչ 'ի դիշեր զովագին, Աստղունք, աստղունք գեղեցկաշարք
Նշոյլք 'ի ձէնջ վայրաբերեն կաթիլք 'ի շաղ ցոզատարափ,
Ի ձեզ զանմահական երկրի ծընունդս ես նըկատեմ։
Ո՜վ դու դըրախտավայր երկիր, երկիր թորգոմական
Կառչ 'ի վեր զաչըս քո տես ըզդիւցազանց որդւոցդ ըզհոյլս.
Եւ այնք աստեղք երկնապարիկք եթերականն 'ի կամար,
Եւ այնք յաւէժ 'ի նըշոյլ փայլեն շողշող ոսկեծըղի։
Ահա Ներսէս, Սահակ, Մեսրոպ, Տըրդատ, Վարդան, Ղևոնդ Սըմբատ...
Այլ ո՜ւր այժմիկ սըրավարեալ, ասա՛ երկիր իմ հայրենի
Ո՜ւր բախտդ և փառք ամենապանծք անցին ւ'ի սպառ անհետացան.
Արդ մերկացեալ ցըրտասարսուռ աւերակաց բնակեալ 'ի մէջ.

Վայրապար անցաւորաց դողդոջ ըզձեռսըդ տա-
տանես,
Որպէս այր մեծափարթամ մարդադաւ ճանա-
պարհի
Աւազակաց մատնեալ 'ի ձեռս, պերճ 'ի զար-
դուցըն կողոպուտ
Մահացու հարեալ վիրօք արիւնաղանգ կայ 'ի
փոշւոջ
Հծծիւն նըւազ աղեգորով միայն ողորմ հընչե-
ցուցեալ.
Ա՞յս է ազգին դիւցազանց յետին փառացըն ար-
ձագանգ.
Դու Ոգիդ հոլաթևեան, դէտ հինաւուրց ժամա-
նակաց.
Զայս մի նուագ մաղթեմ պարզեա 'ի վեր ըզմու-
թըն վարագոյր,
Իզձ 'ի սրտիս կարօտակէզ անկաւ տեսոյն իմ
հայրենեաց.
Ըզնախնին նորա տեսից ըզկերպարանըս վեհա-
փառ.
Բացա՜ւ, ո՜հ... վերացաւ... ըզցան սըրտիս տենչ
և անձուկք.
Ո՛վ անցելոյն ահեղահրաշ տեսիլ ծաւալ իշխա-
նութեան.
Անպարագիծ Ովկիան յար ալեսանջ ե՛անդնդա-
խոր,
Ցորձնեռանդըն պըտոյտքեալ սուրայ վազիւք ար-
շաւասոյր

Ի վիհ ինչ անյատակ յահեղ կարկաջ շառաւ-
չելով.
Դարք վաթսուն կոհակաւէտ 'ի յուս նորա գը-
նան թաւալ.
Ամպրոպաձայն փոթորիկ կայծակնացայտ հոլա-
թևօք
Մըղէ անդուլ ըզնոսա յուղի անդարձ ճեպե-
ցուցեալ.
Միթէ չունչ անմահական իցէ արդեօք նա բար-
ձրելոյն.
Անդ վեհավայր շէնք և քաղաքք հըզօր և պերճ
արքայութիւնք
Մի ըզմիով թաւալագլոր հարեալք փըշրին կուռ
դըզորդմամբ.
Եւ այն գոչիւն կականաւոր յանդնդային ելեալ
վըհէն
Մըռընչիւնք են սոսկալի աղգաց յախուռըն վա-
րելոց.
Ահա և իմ Հայրենիք և դիւցազունք գուպարա-
յաղթ,
Ահա գոռոզքն և ահագին Տիգրանակերտ, Վա-
ղարշապատ,
Ահա հրսկայքըն Հայկազունք Հայկ և Արամ,
Տիգրան, Վահագն,
Ահա և քաջք Պարթևազունք Արշակ, Խոսրով,
Գոռն Արտաշէս,
Երագաթռիչ ալեացն 'ի թևս և նոքին ո՜հ վա-
րեալ յապշոպ

Սլանան շոյտ և նըւաղեալ լինին յաչացս աներ-
լեալթ.
Ո՞ւր փախչիք, ո՞վ դուք պարծանք և փառք յա-
ւէժ Հայաստանեայց.
Ո՞ւր ըզհէք Հայրենիս թողուք այսպէս վատա-
բախտիկ։
Ամենակալ Տէր, աստուածեան այլ իմն շունչ
յղեա մաղթեմ;
Թեռս ընդ կրունկըն դիմեսցէ յափըշտակիչ այս
Ովկիան
Սըփռեալ յերկիր զիմ դիւցազունս, ըզդաստա-
կերտսըն հոյակապ,
Ըզփառսըն Հայրենի նորոգ այսրէն դարձուցա-
նել։
Ընդունա՛յն աղերս և իմ ամբոխեալ միտք բան-
դագուշեն.
Ի ձեզ Աստղունք Աստղունք Հայոց, վերամբառ-
նամ զաչս իմ անդրէն՝
Զայսոսիկ ողոբաւոր հեղլով մաղթանս կողկողա-
գին.
Զա՛հք մըշտավառք լուսատու լերուք երկրին ձեր
պանծալի,
Փայլեսցէ անաղօտ ընդ ձեր լուսոյ և փառք
նորին.
Բոցատիպ նըշոյլ և շաղ հեղէք աստէն բաղցրա-
ծաւալ,
Մի յանլոյս 'ի գիշեր ծածկեալ երբէք խարխա-
փեսցի.

Ցեղացէ՛ք հուր 'ի յերկնից սիրաբորբոք վառա-
բանէն,
Թարիցեն ժառանգաւորք 'ի ջերմ մոխրոց հին
դիւցազանց
Նոր կենդանութիւն շնորհել Ազգիս և Հայրե-
նեաց։

ԶԲՈՍԱՆՔ ԱՐՏԱՇԷՍԻ ԱՌԱՋՆՈՑ

—

Ելէք 'ի դաշտ սեղ իմ կորիւնիք դռոյթ տուք
խաղից յասպարէզ,
Դուռ հրսկայից գոչէր հրաւէր հրսկայազօրն Ար-
տաշէս։
Ելին վաշտք վաշտք քաջայ ձայնին ըզհետ աշ-
խարհաւեր
Վառեալք 'ի բոցափայլ պըզընձակուռ յասպար
'ի զրահ.
Այլ զի՞ այդչափ խուռն ամբոխ հուր 'ի զայրոյթ
բորբոքելոց
Եւ շըռինդն յուզեալ սատիկ երբ ըզճայթմունքս
ամպրոպաց.
Զի՞ այդչափ դափք 'ի գետին դրընդիւն յոխորտ
երիվարաց,
Կամիցին պեղել ըզհող և մարտ դնել ընդ ան-
դընդոց.
Ո՞ր ըզվրէժ լուծցեն այս քաջք. կամ յո՞ր վը-
տանգըս դիմագրաւք.

Նաղեսցին պար առեալ 'ի ճաճանչի յաղթանա-
կաց.
Միթէ՛ զերկիր 'ի հիմանցն յաւիտենից քայքա-
յեսցեն
Կամ ծովուն ընդդէմ ցամաքն ահեղախրոխտ բեր-
ցեն պայքար։
Ըզբօսանք Արտաշէսի ընդ աշխարհիս և ընդ
աղգաց։—
Ինքն 'ի կառըս վերելեակ, սանձն 'ի ձեռին ձիոց
վեցից
Արշաւէր նախընթացիկ մեղմ 'ի ժըպիտ և զուար-
թադէմ.
Մերթ 'ի ճախր ըզձիս ածէր և մերթ հեզիկ
յաշխոյժ 'ի պար,
Որպէս կայծակն 'ի մէջ ամպոց այնպէս անուանն
որոտալով՝
Մերթ առ իւրսըն դարձ ընդ կրունկըն հրա-
մայէր դոյզըն պատուէր
Ցարուցանել յանկարծօրէն կարկառակոյտ լեա-
ռըն վիմարդ
Կամ նետիցըն տարափով քօղ արկանել 'ի զարե-
գակամբ
Եւ խաղ առնել ըզնովաւ և զբոցակէզ ճառա-
գայթիւքն։
Տեսին աղգք դիզացեալ փոշի յերկինս որպէս
ըզծուխ՝
Այն էր նշան դուժաբեր պերճըն ճեմոց Արտա-
շէսի.

Անշընչացան 'ի զոփալոյն զօրհասական տեսեալ
ըզժամ։
Անցանէր Արտաշէս, տապալէին բարձրապարիսպք,
Անցանէր մրրրկաբար, դաշտանային 'ի դիւր
քաղաք,
Անցանէր և ընդ քարշ ձրդէր զարբայս և զժո-
զովուրդս.
Եւ ընդ քեզ ընդ վայրենեւոյդ խաղաց, ո՜ ծով,
և ըզբօսաւ,
Իբրու գազան չըզթայակապ 'ի զուր մոլեալ մրոնն-
չեցեր.
Ցիւր երկիր տեղափոխեաց ըզդիւցընկէց վեհից
կայանս։
Զերթ հրսկայ Ոգի յաղթող թեատարած ճախ-
րեաց 'ի վեր
Կալաւ զաշխարհ 'ի ձեռին որպէս մանկունք դըն-
տակ 'ի խաղ,
Խաղաց նովաւ և ըզբօսաւ, այն էր իւր խաղ
արքայական։
Շատ է արդ Արտաշէս, աստուածասցիս և
դու հըզօրդ.
Զորս ընդ աթուր կոխեցեր, քեզ մահացուք հար-
ցեն պաշտօն.
Դարձիր 'ի զբօսանացդ... այլ ընդէ՞ր սուրբ փայ-
լատակեն,
Զերթ Ովկիան ալետանջ ինքն ընդ անձին իւր
ոգորի

Հիմ փոթորկեալ զեռայ խուժան և յո՛ սուրայ
Արտաշէս,
Զինչ այն աղմուկ խառնագոչ... ոչ՝ մի շշունչ...
լռութիւն մահու...
Դիակնացաւ աշխարհակոյտ, տեսէ՛ք, բանակն
յաղթողական.
Տեսէ՛ք կողք քաջաղանցն են ապաժոյժ աղբերք
արեանց.
Գործի փառացն Հըզօրին իւր արևուն ած ըս-
տուերած։
Ո՞վ Մեծդ, ըզքոյդ յեռին վըսեմութեան
բարբառ շըրթանց
Առ 'ի խրատ աշխարհիս՝ որ 'ի յաչոյդ սարսեալ
դողաց,
Քանդակեցից չերմիդ վերայ. «Աւաղ փառացս
անցաւորի»։

Ծ Ե Ր Ն Վ Ա Ն Ա Ց

Ե Ր Գ

Մութ է դիշերս, ինչպէս սիրտս ալ
Եւ թուխ ալիք մշտափրփուր
Վանայ ծովուն ծիածաւալ
Հառաչանօք լի են տըխուր.
Գոց են ամպով աստղունք... և յոյս.
Դեռ շատ հեռու է Արշալոյս։

Ո՞վ նաղուհի գուսան իմ Մեհեկ
Շուշան և վարդ դաշտաց մերոց
Եկո՛ւ, ու հորդ ծերուկ և հեք
Առաջնորդէ՛ 'ի Զորն Հայոց.
Գոց են ամպով աստղունք... և յոյս.
Դեռ շատ հեռու է Արշալոյս։

Քու սիրատարփ կարիճ Արտակ
Տըխուր երգեց, ո՜հ, այս գիշեր.
Սէրն էր երգոց իւր նըպատակ
Բայց Թորգոմայ զաղէտսն յիշեր.
Գոց են ամպով աստղունք... և յոյս.
Դեռ շատ հեռու է Արշալոյս։

«Ո՜հ, ինչուան ե՞րբ հաճոյք և սէր
Առանց սուգի պիտի չըլլան».
Այսպէս 'ի քնարն իւր նա երգէր
Ու արցունքով աչք մեր լըցան.
Գոց են ամպով աստղունք... և յոյս.
Դեռ շատ հեռու է Արշալոյս։

Հոս են շիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամէն դամբան.
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
Հեծեն, ննջող ոգւոց փոխան,
Գոց են ամպով աստղունք... և յոյս.
Դեռ շատ հեռու է Արշալոյս։

Հին են ցաւերս, հեծեմ և ես
Ժամ է իջնամ 'ի գերեզման

Երթամ վերից Հայոցն 'ի տես
Վանայ կոհակք թող զիս ողբան։
Եւ դու Մեհեկ կուլաս անյոյս.
Ո՜հ, ոչ, գընա... դայ Արշալոյս։

ԲՆԱՐ ԵՒ ՇԻՐԻՄ

—

Որպէս և սիրտ իմ փշրեցաւ և դու Քընար բեկ-
ցիս ջաղջախ.
Շատ իսկ 'ի յողբս ու 'ի թախիծ վաստակեցար
'ի միասին.
Հանգոյն կողերց ուռենեաց թելքդ արտասուաց
լրցան ցողով.
Զեղերերդ ցաւոց միայն գտեալ առ քեզ յարմա-
րադէպ
Ողորմ մահուան իմ սիրելեաց գնացեր յաճախ
յուղարկաւոր.
Եւ կոծակից լեալ սոխակին հողմոց 'ի սոյլ ցըր-
տաշունչ,
Առ սընարքս նոցին շիրմաց դու ընդ լուսնին
ցանգ հրակեցեր։
Ցետ անուշիկ ձայնին մօր առ մանկութեանն
իմ որբանաւ,
Որ ըզմանկիկ հոգեակն իմ գրգեր 'ի ծոց սիրոյն
անճառ,

Որպէս աղու աղաւնեակ գգուէ ըզձագ իւր նո-
րաբոյս,
Ի հրմայս մայրենի անհուն գրթոյն զիս վար-
ժելով
Թևածել անփորձ կենաց 'ի ծաղկաւէտն 'ի գրդա-
ռան,
Ա՜հ, էր ոչ այլ ձայն քաղցրութեան ինձ հրա-
ւիրակ չեղև խնդի.
Է՞ր և դու Քընարդ իմ ոչ պըսակեցար յոլորս
վարդից։
Ցակումբ պարու դեղեցկահոյլ ուր զուարթու-
թիւն խայտայ 'ի թինդ
Եւ յոյզ ծաղկանց փրփրադէզ մատռըւակէ քաղցր
օշարակ,
Դու ոչ ընկեր հաճիս լինել այն հրճուանաց ա-
նապակին,
Ոչ երգաբան մեչես յորդոր օրիորդաց 'ի պը-
սակին
Որք 'ի խորան մատչին սիրոյ կապտեալ ըզթերթըս
վարդենեաց.
Զա՞յն խորհիցիս թէ զերդ ծաղկունս են վաղան-
ցուկք հարսունք սիրոյ։
Ի խրախճանս իսկ մըտերմաց և 'ի կայտիռ փափ-
կիկ ոտից
Ընդ որպիսում դու սեաւ ոգւոյ լինիս արդեօք
գաղտ խօսակից,
Զի յանկարծ նըսեմասուեր թուիս փոխեալ
յանտառ նոճեաց,

Հեռի 'ի ծաղկոցաց ուր կոյսք ճեմեն ւ'անբիծ
տատրակք.
Հեռի յամենայնէ որ շնչէն սիւգ երանութեան
Եւ մօտ միայն ուր բու 'ի լուռ հեծէ կեղերջ մա-
հաշրշուկ։
Ի սառնասոյղ վերայ լերանց ւ'ի ծաղկածիր
դաշտըս Հայոց
Քանիցս անժոյժ թռուցեալ թեւք գորովաղէտ
դու գուսան,
Երգս հայրենիս փորձեցեր. քեզ զդարձուած ե-
տուն աւերք
Եւ շիրիմք նոճեպարփակ տխրահնչակ կրկնեցին
վանդ։—
Քընար քո միանգամ ևեթ դադարեցին ար-
տասուաց շիթք.
Եւ կոյս մատամբ ցոյս ըղտխուր պատառէր քոյ
ըղճակատուդ,
Մինչ սէր ոսկի իւր թեւք պարայածիկ եկեալ
ըղքև
Շարժէր ըզլարսդ յաղեբաս յերգս 'ի մրմունջ
սրտահաճոյ
Առ մեղուշքն Նաղենիկ առ աջագեղքն կոյս քընե-
քոյշ.
Ցայնժամ զիարդ 'ի ծոցոյդ ծաւալեցան դաշնա-
կութիւնք
Մշտահոսան իբր յաղբերէ յիմ սիրտ ցամաք և
ծարաւուտ.

Զի գեղեցիկ կոյսն էր ամբիծ և փարելի հոգ-
ւոյս իմոյ.
Այլ աւաղ 'ի բարձրադէտ 'ի դարևանդ Եդե-
մական
Ցնկեալ էր նա վարդ անմահից, գութ կաթոգին
հրեշտակաց
Թնամածուք նըմին 'ի լոյս 'ի ցօղ աստեղց սընա-
նելում։
Իմ յոյժ նրբին էին թեւք և բիւր տենչանք վա-
ռեալ 'ի ծոց,
Ուստի զայս առ ստորեաւ ոգեմ ուղերձ սիրա-
տարփիկ.
«Զի խանդակաթ ես օրիորդ, դուստրըդ սիրոյ
և փափկութեան
Զի տարփալի իցեն երկինք ւ'աստղունք թէ քո
պէս ծիծաղին
Եւ հրեշտակք արքայութեան թէ քո նրման իցեն
փափկիկք.
Ո՜հ, եկ թըռիր առ իս Քոյր իմ, և յանապատ
սրտի իմոյ
Դու փթթեսցիս անուշաբոյր, և զերդ պիւլպիւլ
դիւրագորով
Անդ մընչեսցէ սէր քոյին երջանկութեան ըն-
ծայաբեր.
Եւ թէ 'ի քոյդ 'ի փափկալուր առ իս 'ի ձայն
բարեբաստիկ
Ոգենորոգ զարթնու հոգիս ւ'առոյդ տիոցս իմ
դալար,

Նուիրեցիս քեզ ըղծաղիկս երիտասարդ իմոյ կենաց.
Վասըն զո իմոյ ընարիս զուարթասցին լարք տխրական
Ըզբոյդ միայն ցանկալի մրմընջելով անուն չըբնաղ.
Եկ սպիտակ իմ նազելիս, յորմէ հեռէ տեսի ըզքեզ
Երանութիւն լուսածղի բազկօք զինև փարեցաւ.
Ցոյժ առաւել լուսապայծառ զգեցաւ հանդերձ բնութիւնն անհուն,
Առաւել քաղցր հնչեցին տիեզերաց դաշնակութիւնք.
Եւ ոսկեթոյր մանկութեան աւուրք կենաց գեղածաղիկ,
Հիւսեալք ընդ վարդս 'ի մի փունջ առաջնորդեալք 'ի յուսոյ
Ինձ յանդիման եկեալ ըզհէր անձն իմ լըցին անուշութեամբ։
Եկ քոյր իմ; թէ և ընդ հուպ ակնարկեսցէ ինձ մահ խոժոռ
Ի մի համբոյր և ի նայեացդ կեցից ես դարս բիւրապատիկ։
Ցարեաւ Քրնարս 'ի գեղգեղել, այլ ոչ ևս էր նազելին այն
Մահկանացու այն հրեշտակ թէպէտ անթև, այլ շոյտ փախեաւ.

Եւ ուր արդեօք ծածկեցար դու... լեղի՛ է յոյժ յետինն ողջոյն,
Որ անճաշակ 'ի քաղցրութեան գընայ յետին համբուրի։
Տրտմազգեցիկ իմ Քընար, եկ ընդ իս այլ ոչ խաբեսցիս,
Առաւել հաճոյ և անկդիտեմ իցեն քեզ եղերերգք։

Ի խորշ ուրեք Վոսփորոնի բըլուր մի կայ ապառաժուտ
Որ զինքըն 'ի ծովըն նայի ծիծաղ ծաւալ առ իւր ոտիւք.
Ոչ առ նովաւ ոսկեհունձ ծածանին մարդք և արտորայք,
Ոչ վարսագեղ ծառոց շարք, ոչ արծաթի ջուրց խոխոջանք.
Հողմն որ անդէն փըչէ ըզթեւս թացեալ յալիս Ելլեսպոնտեայ
Տխրագին թափառի զի չիք ծաղիկ առ 'ի գըգուել.
Ոչ անդ շըքեղ դաստակերտք, ոչ հանգըրուանք անդէորդաց,
Այլ 'ի գագաթըն մի ծառ և մի բնակիչ կայ ընդ ծառով,
Մի բնակիչ անդ ընդ ծառով, և այն ծածկեալ է 'ի հող,
Եւ այն եղբայր իմ է, աւաղ, բարձեալ յինէն վաղամեռիկ։

Եղբայր իմ, դու ընդ այս ծառովս ախորժէիր
բաղմիլ ըստէպ
Որ զհովանին շնորհէր քեզ. ըզփուտ տերևս իւր
արդ սրփռէ
Ի վերայ շիրմիդ՝ ուր ես բաղմիմ տրտում և մտա-
խոհ.
Նախանձեցայ քում հանգստեանդ, ընկալ և զիս,
հա, ոչ թողից
Վարատական տերևոց լինել միակ ընկեր շիր-
միդ...
Այլ այս ուստի՞ յանկարծ հնչեն երգք 'ի ժամուն
խաղաղական.
Զինչ 'ի Նըշոյլ լուսնակին որ ծիծաղի յերեսըս
ջուրց
Բաղմահոյլ դիտեմ ամբոխ երկայնաձիգ առ ծո-
վափամբ
Ճեմ զճեմի և զուարթառատ խայտան 'ի գիրկ
զբօսանաց.
Աստեղք կաճառք լուսահոս որ 'ի կամար ցոլան
երկնից
Թըւին ըզխինդ և զբերկրանս տեղալ յերկիր
ընդ շող իւրեանց,
Ի զեփիւռին մեղմիկ շունչ և 'ի դեղդեղս երա-
ժըշտաց
Սահարկեալ գընան մարդիկ երջանկութեան յա-
լիս վրճիտ.
Աստ ուր կամ շիրիմ մահու, և անդ հաճոյք
բերկրապատար.

Այդ չափ մեծ իրերաց սուդ տրամութիւն և
հեշտ վայելք։
Այլ գիշերըն տխրամած ահա պատէ տակաւ
զերկիր
Զերդ սևադէմ թշուառութիւն զոսկեղինիկ ա-
ւուրց ըզդէմս,
Լռեցին նուագք և ամենայն ընկալաւ 'ի խորըս
մըթութեան։
Այլ դու կաց մընա լուսին. մի զմտերիմդ
թողուցուս զուրկ,
Մի և զայս վէմ ցրտահար. հա, սիրեցի ես ըզ-
լոյս քո
Ի մատաղ տիոց իմոց, զի դալկահար ես իբրև
զիս.
Իբր յիմ ճակատ և 'ի քոյդ մելամաղձիկ բնակին
խորհուրդք.
Սիրեցի ըզփայլդ հեզիկ որպէս զայտից իմ Նա-
զենեան,
Եւ զճառագայթքս քոյին իբր ոսկեթել զիւր խո-
պոպիս.
Տես փչրեմ ասա զիմ քընար. լուսին՝ մաղթեմ
յետին հայցուած,
Մի զուրկ թողուս ըզմտերմիդ ըզցուրտ դամբան
մենաւոր։

ԵՂԲԱՑՐ ԵՄՔ ՄԵՔ

—

ԵՐԳ

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար.
Զունին ձայն մի այնքան սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։
Տուր ինձ քու ձեռքդ, Եղբայր եմք մեք
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։
Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքըն դաժան
Քազցր արտասուաց բուժին ցօղով.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։
Մէկտեղ լացինք մենք 'ի հընում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըզխնդում
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

Ի ՀԱՆԴԷՍ

Պարգեւաբաշխութեան աշակերտուհեաց

ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՐԹԱԳԻՒՂԻ

Առ Հայկազուն օրիորդս

—

ԵՐԳ

Շատ դարերու ցաւերով
Տրտում տխուր ողբական,
Ի գերեզմանս նստելով
Արցունք թափէ Հայաստան.
Ո՛ կոյսք փունջ մի քաղեցէք
Եկէք իրեն մօտեցէք։
Եւ պար առեալ վայելուչ
Ո՛վ դուք ժպիտք Հայ յուսոյ,
Երգեցէք յերգ սրտառուչ
Ըզդարձ բախտին և լուսոյ.
Ո՛ կոյսք փունջ մի քաղեցէք
Եկէք իրեն մօտեցէք։

Փունջ մ՚ալ անգին խմաստից
Եւ գիտութեանց ծաղկաւէտ,
Պարկեշտագեղ բարոյից
Որով պարծի նա յաւէտ.
Ո՛ կոյսք փունջ մի բաղեցէք
Եւ զայն իրեն մատուցէք։
Հրաւէր տըւէք սրտաթունդ
Ու քաջալանջ պատանիք,
Թող սըլանան գունդագունդ
Հոն ուր կոչեն հայրենիք.
Ո՛ կոյսք փունջ մի քաղեցէք
Նոցա ճակատն մատուցէք։
Ճարտար մատամբք ձեր յորդոր
Գեղեցկահիւս բանուածով,
Դուք Հայ փառաց սըգաւոր
Ցօրինեցէք թագ շուտով
Ո՛ կոյսք իրեն մօտեցէք
Ու զայն իւր գլուխ դրէք։
Դադրին նըւագք ողբերգու
Սրբէ արցունքն Հայաստան,
Զի յոյս զըւարթ օրերու
Աղջկունք Հայոց իրեն տան.
Ո՛ կոյսք իրեն մօտեցէք
Ու թագն իւր գլուխը դրէք։

ԳԱՐՈՒՆ

Ո՞Հ ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փըչես հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով
Եւ մաղերուն կուսին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց, } կրկին
Գընա անցիր սըրտէս 'ի բաց։

Ո՞Հ ինչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն 'ի յանտառին
Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց, } կրկին
Գընա երգէ սըրտէս 'ի բաց։

Ո՞Հ ինչ մրմունջ հանես վըտակ
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց, } կրկին
Գընա հոսէ սըրտէս 'ի բաց։

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վըտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են Հայրենեաց, } կրկին
Նոքա չերթան սըրտէս 'ի բաց։

———*———

ԵՐԳ

Ի մահ Խոսրովու Մեծի

—

Վայ քեզ Խոսրով, դու սուգ յամայր
Ըզդիւցազամբք արկեր Հայոց,
Առ քոյդ չիրիմ եղերամայր
Սեաւ տխրութեանցն Ոգիքն 'ի կոծ
Գոյժ անողորմ տացեն Մասեաց
Մահաշրջուկ ըսպառնալեաց։
Պերճ Յաղթութիւն երկնասլացիկ
Ըզցանկալին իւր օթևան
Անմխիթար եթող ելիք
Ձերանութեանցն իմ Հայաստան։
Ցարփին Հայոց ամպ թըխաթոյր
Էած լուսոյ այր անարժան,
Զանիւ բաղդին արշաւասոյր
Գլորեաց 'ի վիհ ձեռքն դրուժան.
Խոսրով դու ոչ 'ի դաշտ արեանց
Վիրաւորեալ 'ի մահ փառաց.
Մինչ հաշտութեան կարկառեցեր
Զաջ դիւաբախ նենգաւորին,
Փոխան ընդդէմ սուր կարեվէր
Ել մահառիթ կենաց քոյին։

Ի ՍՐԲԱՆՈՒԷՐ ՕԾՈՒՄՆ

Աստուածապատիւ Տեառն Եղուարդայ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԻՒՐՄԻԶԵԱՆ

Եպարքեպիսկոպոս Շիրակայ 'ի Հռոմ

—

ՏԱՂ

Ո՞ւր ընթանաս երագաթև դու Համբաւ
Եւ ո՞ւր զբաւթ դիմէ խուժան այդ ամբաւ.
Ընդէ՞ր աստեղք շողեալ և ջահք լուսավառ
Ակընախտիղ փայլեն շրքեղ 'ի տաճար.
Է՞ր քաղցրախօս հընչեն քընարք բազմաղեայ,
Եւ վէտ 'ի վէտ խայտան ալիք Տիբերեայ։
Դու լցեաս Հայր որ մեծաշուք 'ի հանդէս
Ի գերահրաշ ելեալ կրօնից յասպարէզ
Պըսակաւոր մատչիս 'ի բեմ սրբազան,
Թագ ըզշնորհաց առնուլ և պերճ գաւազան.
Ահա երկնից աստեղազարդ 'ի գահէն
Աստուածադրոշմ փայլեաց կընիք բոցեղէն
Որ 'ի քոյին հարաւ վրեմ 'ի ճակատ՝
Տրպաւորեալ զանմահ անուան ճառագայթ.
Առատաձիր պարգևս օժիտ քեզ հարուստ
Կենդանարար ձօնեաց Հոգին 'ի վերուստ
Եւ պըսակեալ իբր ըզյաղթող աննըման,
Ի հիացումն աղգաց ցուցար յանդիման։
Ի լուր փառացդ այսօր 'ի կայթ 'ի քընար,
Քոյդ մենարան պարէ 'ի թինդ գեղապար.

Ազգէս ցնծայ 'ի խընդութիւն անվրթար,
Հոգեզբաղձ հրճուի յերկինս Մըխիթար։
Այլ մինչ աշխարհ խընդայ ամեն բերկրալիք
Ահ, զի՞ գործեն աստէն քոյին սիրելիք
Զորս անտէրունչ դու 'ի յերկիր տարադէմ
Որք կացուցեր անոք և զուրկ առ 'ի քէն.
Որք և 'ի սուղ ժամանակի 'ի սահման,
Զբքնաղ 'ի զոյդ յակընկալեաց զբրկեցան
Որք 'ի համայն ըսփոփանաց անճաշակ
Զյետին արքին արդ դառնութեան ըզբաժակ.
Զի՞ գործեցին. յողբ և յաշխարհ դառնագին,
Աղեխորով հիւծեալ 'ի սուգ մաշեցին.
Ընդ օտարաց ուրախ երգոցըն 'ի հիւս
Եղերական խառնեալ աղի արտասուս
Ընդ հոյակապ տանըս այս բաղդ մոլեգին
Ցանդ թշնամի հանդիսացաւ ոխերիմ,
Եւ մահ նըմին, ո՜հ յիշատակ վըշտըմբեր
Արիւնբռուշտ կացեալ դահիճ առ ընթեր.
Վեհից կենաց հընձեաց ըզթելսըն չքնաղ,
Ցիւր սայրասոյր արիւնազանգն 'ի մանգաղ.
Դուք երկոքին զերծայք ահեղ 'ի ժանեաց
Թերևս 'ի ձեզ խրոխտայր դիմել դիւազդեաց.
Այլ յԱստուածեան պատմուճանէն լուսափայլ
Շըրտեաւ և յետս դարձոյց զոտիցըն ըզքայլ.
Միայնացեալ տանըս մնացէք դուք նեցուկք,
Զեզ 'ի սրտէ բերեալ տարփուն և անձուկ
Կարօտակէզ այրիմք բոցով տենչանաց,
Ո՞վ դուք իմոց ղբաղթարար լոյս աչաց

Զո՞ր երանի կարդամ նմին 'ի սրտէս,
Որ անձկաւէտ գորովական ձեր 'ի տես
Զեզ առ ընթեր առ 'ի վայել կացեալ միշտ
Կեանքս վարէ բարեբաստիկ և անվիշտ։



ՎԻՐԳԻԼ Ի ՊԱՌՆԱՍԵԱՑ

Առ Բազրատունին Մեծ

—

Որ Աւոնեան փողոյս ընդ նուրբ երկրագործին նուագող զարդիւնս
Հայկական ոլորեալ երգս ըզկէս փառաց իմ կապտեցեր
Անմահականն 'ի Պառնաս սիւդ անուշիկ հնչեաց երգոցդ
Ցաւէրժ մայրեացն աստուածանուէր մըրմընչեցին վարսք ի գեղգեղ։
Անդ 'ի բաղմոցս փափկութեանց 'ի դարեւանդն ուր անմահից
Հոյլ շուշանաց 'ի գեղաթոյր թերթից ե՛երփնից պարարին աչք
Ուր կաստալն արծաթի պաղպաջափայլ ճեմի ալեօք
Կանգնեսցուք կըճեայ տաճար Քեզ 'ի ծաղկանց պճնեալ բոլոր

Մատունք քնքուշ Մուսայից բուրեան ըզ-
փունջսըն կապեսցեն։
Շուրջ ըզնովաւ 'ի պարանցիկս երաժըշտացըն
հանդէս
Ի գովեստ հնչեսցեն Քեզ նուագաւոր դաշնա-
կութիւնս
Ապոլոն, Պինդարոս, Տիբուլ, Կատուլ նախանձ-
ընդդէմ։
Ես 'ի կայտիռըս պարառաջ, պըսակ 'ի գլուխս
իմ դափնեփունջ
Համասպրամըն ծաղկունս ծաւալեցիս շուրջա-
նակի.
Եւ բարձրադէտ 'ի ճակատուն քանդակեցիս 'ի
տառ ոսկի
«Գահ Արսենի 'ի Պինդոս ընծայեցաւ 'ի Վիր-
գիլէ»։

ԱՌ Հ. ԱՐՍԷՆ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

—

Ի հալոցացըդ խանդիս
Երգ մի և ինձ աղաչեմ
Կիզուլ 'ի բոցդ և 'ի հուր
Թռանիլ ընդ թռիչսըդ վրսեմ։
Կամ թէ կամիս երգ աղու
Գորովանաց և սիրոյ

Թռթրակ տաւղիդ 'ի նուրբ թելս
Շարժեալ առ իս հնչեցո,
Ո՛հ ոչ այնպէս 'ի գիրգ ծոց
Ցունկըն փափկիկ քաղցրասցի
Մանկանն 'ի քուն անուշից
Օրոր գըթոյն մայրենի
Ոչ 'ի կուսին յերգ 'ի քնար
Մանու մատանց քնքշենի
Ցակճիռըս կայ իւր տարփող
Սրտատրոփիկ պատանի,
Ոչ դայլայլիկք սոխակին
Ի պուրակին լուռ ըստուեր
Մելամաղձիցըն ոգւոց
Եւ կամ սրտից կարեվէր,
Ինձ քաղցրասցին որչափ քո
Դաշնակութեանցըդ ծորանք
Որ յիս յաւերժ հնչեսցեն
Ջերթ մշտախօս արձագանք։

ԱՌ ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ՕՏԵԱՆ

—

Գիտեմ ազնիւդ, ըզդառնութիւն գիտեմ անդարձ
բաժանման.
Գիտեմ ո՜հ, թէ ի՞նչ կ'ըզգայ սիրտ բոցաթեւ որ
կը թռչի

Գորովանացն յիւր բունիկ, ու զայն պարապ կը գտնայ,
Պարապ ծոցիկն հայրենի որ չէր յոգներ 'ի գգուելոյ
Ու անչէջ սիրոյն ջերմութեամբ միշտ տաքցը-նէր ըզսիրտ որդւոց,
Եւ ուր անժոյժ դիմէին գութ և կարօտ իւր նա-զելեաց
Իղձք հարսին և դստերաց և թոռնեկին մանրիկ ժըպիտ
Որ վարդափթիթ շրթունքներով կեանքս մաղթէր անուշ պապուն։
Դիտեմ թէ ինչ կ'ըզգայ սիրտ երբ որբ մնայ 'ի համբուրէն
Որ մի միայն շըքեղ է վարձ և քաջալեր սիրա-յորդոր,
Քան զոր պայծառ յաղթանակ չըկայ քրտանց իւր որդեկին
Եւ ոչ դափնիք այնչափ փառքեր թափեն անոր ճակտին վըրայ։
Ա՜հ, մանկութեան իմ օրերուս անցայ լեղի այդ փորձէն
Եւ ո՞ր հաճոյք կրնան ըզքեզ գրկել երբ գոց են հօր գրկերն,
Համբոյր չունին իւր շրթներն, հայեաց չունին վառվռուն աչկունք
Եւ ուրիշ բան չի մընար իրմէ... բայց սուրբ յի-շատակ։

Սակայն ոչ թէ միայն սուրբ այլև անմեռ է յիշատակ
Որով անեղծ և կենդանի 'ի շրջանակն իսկ տապանին
Պիտի տեսնես ըզպատկեր քու սիրայնոյ վեհազըն հօր,
Պիտի տեսնես ըզկերպարանն և ըզճակատ լայ-նակամար՝
Ուր ձեռք ձեռքի վըսեմութիւն և հեզութիւն ըբնակէին
Եւ ուր խորհուրդք առաքինիք կարծես 'ի գահ միշտ բազմէին.
Եւ թէ երբեմն 'ի դիշերի նըսեմասաուեր նո-ճեաց մէջէն
Զայն մի ականջըդ զարնէ. ո՜հ մի կարծեր ո՞վ բարեկամ
Թէ ողբական շըշունչ է այն հողմակոծիկ տերև-ներուն,
Չէ՛ այն վըտակ որ հառաչէ, չէ՛ այն թռչուն որ ճըւճըւայ
Զա՛յն հեշտալուր է ծընողին, ձա՛յն որ ըզքեզ դրդէ դարձեալ
Սիրել ինչ որ գեղեցիկ է, ինչ որ բարի և վըսեմ։
Վէր կաց ուրեմն 'ի դամբանէն, նայէ՛ չորս դի, չը կա՞յ քու հայր...
Բայց աղեկէզ կայ մայրիկ, բայց կան քուրեր արտասուաթոր
Ընկերք ցաւոց կան քեզ եղբարք և պէս եղբօր մէկ բարեկամ
Ու ասոնցմէ շատ աւելի կա՞յ սրգաւոր մէկ Հայ-րենիք...

*

ԱՌ ԳՈՀԱՐԻԿ

—

Ո՞վ է պզտիկն այն աղջիկ
Սիրուն աղուոր և փափկիկ,
Սև մազերով սև աչքով
Իսքը բոլոր խատուտիկ.
Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ։
Երբոր լինայ պարտէզիկ
Քաղել ըզվարդ կամ յասմիկ.
Դու չես կրնար որոշել
Ո՞վ է վարդ, ո՞վ Գոհարիկ.
Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ։
Երբոր թռչուն ճըւճըւայ
Երբոր վառեակ կըակըտայ.
Դու չես գիտեր թռչունն է
Զէ նէ Գոհար որ ձայն տայ.
Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ։
Գոհարիկն է այն ծաղիկ,
Գոհարիկն է այն թռչնիկ,
Որ այս տողիս փոխարէն
Ինձի տուաւ մէկ պաչիկ։
Ո՜հ, այն աղջիկ
Է Գոհարիկ։

Ո՞վ է պզտիկն այն աղջիկ
Անհնազանդ չարաճճիկ։
Որ շատ անգամ տունին մէջ
Յարուցանէ փոթորիկ.
Զէ, այն աղջիկ
Զէ Գոհարիկ։



Ի ԴԱՐՁԱՄ ՄԱՀ ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՄԵԱՆ

Հիմնադիր հեղինակի հայկական բնարին

—

Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր, վա՜հ, կայ թաղուած,
Առոյգ հասակդ և սըրտիդ հուր երկնասլաց
Զէ թէ միայն սփռենք ծաղիկ լի ձեռքով,
Զէ թէ միայն արցունք անհուն ցաւերով.
Այլ և ձօնենք վշտահար,
Երգերն անուշ քնարին,
Որոյ փափուկ թելերը
Դու հիւսեցիր սրտագին։
Այն նուագներն որ քու բերնէդ սլացան,
Երթալ յողջոյն աւերակաց ցիր և ցան,
Լսեց զանոնք 'ի դամբանացն Հայրենիք
Եւ սփոփեցան Հայաստանեայց վեհ ոգիք։

Լսէ՛ զանոնք և դու այլ,
Մահուան քունէն արթընցիր,
Այն Քնարին թելերով
Ցանմահութիւն էլ թռիր։

ԹՈՑԼ ՏՈՒՐ

—

Եւ զի ընդ իս հաշտեցաւ բախտն իմ և քաղցր ինձ ակնարկէ,
Եւ առաջնոյ դառն հարուածոց 'ի քաւութիւն ե'ի մոռացօնս
Ըզձեռանէ իմմէ կալեալ, ընդ լոյս և շող հորդեալ շաւիղ
Նազելոյդ նազելեաց զիս առ ընթեր կացոյց դրթով,
Եւ զի այդքան ծանօթացար, ո՛ կոյս, աչացս իմ և սրտիս,
Ա՜հ թոյլ տուր այն հէք սրտին, այն ցրտահար ճնճղուկին
Ի փոթորկաց մաղապուր և փեսրաթափ 'ի քում սրտիդ
Գոցէ անքոյթ զիւր բունիկ և ջեռնուցու, և անդ նըմա
Քո կուսական դրթութիւնդ մայրօրինակ լիցի պաշտպան.

Թոյլ տուր աչացս իմ, ո՛ կոյս, 'ի բոց աչացդ աննըմանեաց
Հայել ըզչիթս իւր դառնողիս, զերկինս, ըզքեզ դիտել յստակ,
Սիրել՝ դրկել ըզբնութիւն, զի դու 'ի նմա ես ամփոփեալ։
Թոյլ տուր մատանցս իմ, ո՛ կոյս, 'ի փափկաթել հերացըդ հոյլս
Առնուլ դողտրիկ երթևեկ ու 'նդ հովանեաւ նոցա ծածկիլ.
Թոյլ տուր շնչել զօդ զոր շնչես զի նա միայն տայ սնունդ կենաց,
Թոյլ տուր ըզձայնըդ լսել զի խօսքդ և ձայն թըւին գգուանք.
Թոյլ տուր հանդէպ պատկերիդ աղերսահայց կալ ուխտաւոր.
Տիեզերաց Հաստի՛չդ անմահ, թէ այլ աշխարհ ածցես 'ի գոյ
Եւ 'ի նըմա յոյժ առաւել պայծառ արև փայլեցուսցես
Եւ առաւել շըքեղ աստղունս յիւրն 'ի կամար տացես ցոլալ
Եւ առաւել բուրաղուարճ յօրինեսցես զիւր ըզդարուն,
Թոյլ տուր, Հաստիչըդ անմահ, ինձ 'ի խոնարհ ընդ այս երկնիւր
Կեալ և շնչել ուր և նա կեայ և շնչէ... ես անդ մեռայց։

—*—

ՆԵՐԵԱ՛ ԻՆՁ ԿՈՅՍ

—

Ներեա՛ ինձ կոյս. մի՛ զտարփելի զերեսդ յինէն դարձուցանէր.
Գիտեմ, ըզդէմդ եթէ ծածկես գիշեր լինի ինձ ո՞ կոյս.
Ըզողջ բըբացդ թէ ամփոփես աչկունքս իմ լոյս ոչ տեսանեն
Եւ դանդաչեմ յաղջամուղջ կայս, և կարկառեմ բազուկ դողդոջ,
Խնդրեմ ըզքեզ, խնդրեմ զերկինս, խնդրեմ զարև և զաստեղս...
Ա՜հ դու ոչ գոս, և մոլորեալ պանդուխտ որդին եմ ես բնութեան.
Զայնիկ մի ինձ լըսեցո՛, և այն լիցի ինձ առաջնորդ.
Որպէս ոգիք գերեզմանաց երկնահնչակ նուագաց 'ի թեւս
Լըքեալ չիրմաց ըզմութ մըռայլ 'ի վեր 'ի վեր ճախրեն մեղմով,
Զայնիկ մի ինձ լըսեցո՛, զորպիսի դու միայն ունիս
Եւ վերըստին գըտանեմ ըզլոյս, զաստեղս, զամենայն ինչ։
Ներեա՛ ինձ կոյս, միթէ չիցե՞ս գըթած, ըքնքուշ, չիցե՞ս հրեշտակ։

Միթէ հրեշտակք բարկանայցե՞ն, միթէ զեփիւռ սըրամըտիցէ՞.
Միթէ ծաղկունք բուրմանց փոխան ըզհուր և բոց ծաւալիցե՞ն.
Ներեա՛ ինձ կոյս, ներեա՛ հրեշտակդ, ո՛հ միանգամ թէ գիտէի՛ր
Յո՞ր աւերակս թշուառ սրտիս զիս նաղելին եգիտ ը՞ սէր.
Յո՞ր փըշաբեր ամայութեանց զիս 'ի դրախտ վերադարձոյց,
Միթէ անդէն յետըս ընդ կրունկն ես 'ի շնորհացդ յաքսո՞ր դարձայց
Եւ դու ըզշուս արտասուաթոր տեսցես աչք անկարեկիր.
Ներեա՛ ինձ կոյս, յերկնացեղիկ առ քո ոդեակ ես աղերսեմ
Ա՛րկ ըզքեհեղ գըթութեանդ որ ծածկեսցէ ըզյանցանս իմ.
Ներեա՛ ինձ կոյս, եթէ սաստիկ բանք քո հարին յիս վրդովս
Զի խոր անդունդ է ծով սրտիս. վասն այն ուժգին փոթորկեցաւ
Ներեա՛ ինձ կոյս...

ՅԵՏԻՆ ՀԱՌԱՋՔ

—

Որպէս այր օրհասական 'ի յանկողնոյն իւր 'ի ցաւոց
Ըզհուսկ ողջոյն և ըզկարօտ թըռուցանէ առ լոյս արփւոյն,
Առ ծով, առ մարգարօտս, առ դաշտավայր և առ հովիտ,
Առ հովանիս անտառակին, առ զովութիւնս վը-տականւոյն,
Առ ամենայն որ խայտայ զարդու, գեղով, դա-շնակութեամբ,
Առ ամենայն՝ որ շընչէ, ցոլայ, ժըպտի և նըւագէ,
Հանդոյն և ես զիմ հուսկ ողջոյն, զիմ հուսկ կա-րօտ հըրատոչոր
Տամ սլանալ առ քեզ, ո՞ կոյս, թոյլ տուր յետին և այս նըւագ
Հայել 'ի քեզ, պըշնուլ 'ի դէմդ, և աչերոյդ լուղիլ 'ի լոյս,
Ի քոյդ խոպոպս դընալ ծածան, որպէս և այնը յայտիցդ 'ի վայր,
Յետոյ մեկնիլ 'ի նոցունց, սըրտակըտուր մեկնիլ 'ի քէն,
Ըզպըսակն երջանկութեան իմոյ առ ոտըս քո եդեալ
Զոր 'ի ընբուշ ձեռանէդ և 'ի գըթոյդ ես ըն-կալայ,

Զոր պահեցի սըրտիս կրակով, ցողով աչացս ոռոգեցի,
Եւ արդ թափուր յիւր 'ի գեղոյն և լուսափթիթ կայ 'ի թերթիցն։
Ա՛ռ. քո ընծայն էր այն, աւա՜ղ, տես ի՞նչ նոյն զոր ինձ ետուրդ...
Մեկնիմ 'ի քէն, և դու ինձ ո՛չ զանճառ նայեացցդ յուղարկ դիցես,
Տեսանել թէ յո՞ դընայ այն դալկահարն և որբ պանդուխտ,
Մեկնիմ 'ի քէն, և դու ըզգլուխըդ շարժելով աղաւնակերպ՝
Վուվուս ըզհետ իմ չարկցես թէ «յո՞ դընաս ա՛յ թշուառիկ»...
Լո՛ւր ինձ Հրանոյշ, ամպք բարձրադէզ զերթ սեաւ ճիւաղ թեւօք խաւար
Պատեցան ըզլուսնիւ և լըռութիւն աներերուն
Տեղի տըւեալ մըթութեան, հողապատեան կայանս էր ցո՛ւրտ.
Եւ թօթափեալ ըզհող չիրմիս՝ քեզ 'ի խընդիր եկի Հրանոյշ.
Զի ոչ մահուն ժանտ երես, ոչ գերեզմանն անդընդափոս
Կորզել ըզքեզ ինչ կարացին 'ի սերտ գըրկաց իմ ոգւոյս.
Խորութիւնք յաւիտենից զիս ոչ 'ի քէն անջատեցին.
Արև կենացս իմ թըռեաւ, հարեալ անկայ երի-տասարդ,

Այլ պինդ ըզսէր քո ունէի, այն ընդ իս էր երբ
լինուցին
Զիս յաշխարհ ըստուերաց մոռացութեան և մը-
ռայլից։
Լուր ինձ Հրանոյշ... այլ էր նրւաղ ձայնիս չը
տաս դու դարձուած
Զեմ կենդանի, և էր փակես զաչսըդ զիս ոչ
տեսանել,
Զեմ կենդանի, և էր 'ի բաց խոժոռ ըզդէմսըդ
շրջես.
Նկեալ չեմ գիշերազբօս ձեր դըդուանաց դընել
կըրճիմն.
Եւ ոչ համայն զօրութեամբ մեռելութեան և
դամբանին
Ամբաւութեան իմոյ սիրոյս փոխան ըզսէր քո
պահանջել.
Զոր կենդանեաւս ինձ դըլացար, միթէ մահուս
տացես շնորհ։
Լուր ինձ Հրանոյշ, դամ հարցանել թէ ե-
րանեալ իցես և դոհ
Բոցատերև աշխոյժք և խանդք քեզ ընդ ոտիւք
փըթթիցն դարձեալ,
Զըւարթութիւն և խընծիզ դեռ փայլակեն
'ի դէմըս քո.
Առաւել վըճիտ շողմն աչկունքըդ զերծք ինձ դի-
պելոյ.
Ըզչորաբեկ տերևիկս յիշատակես 'ի քոյին սիրտ։

Քաջիկ 'ի բաց վարեցեր, զի անարդել և ընդ-
դարձակ
Մուտ տացես նորոդ բաղձից դիպեալ յուզողդ
դէմ տապանին,
Անժոյժ ոստեաւք ըզնովաւ յայլում 'ի ծոց սըլա-
նալ 'ի մուտ.
Դու կենդանիդ մոռացաւ զայն՝ որ 'ի մահուն
իսկ յաւէտ.
Ո՞ Հրանոյշ, յիշեմ ըզքեզ, հոգիս սիրովդ է
խարակեալ,
Ընդ թեւովք անմահութեան իւրոյ պատեաց
սէրըս զայն.
Ոչ հանդարտէ մըշտատոչոր ահեղ բոցոյն բռնու-
թեան,
Արագագոյն քան զաստեղս և քան ըզսայլ հրա-
շէկ գընդին
Ընդ անոլորտ ասպարէզ տիեզերաց սրարշաւէ,
Եւ 'ի սլացս իւր առաւել բոցն այն վառեալ
բորբոքի։
Այո՛ Հրանոյշ յիշեմ ըզքեզ, և ընդ ուրուի
մօրն իմոյ
Հանապազ ըզքէն խօսիմ, և զայսոսիկ ասեմ նըմա.
«Ներեա՛ ինձ մայր, թէ որբացեալ 'ի քէն՝ սա-
կայն և ապրեցայ,
Եւ որբ կացեալ 'ի նմանէ՝ հատաւ արևս 'ի գե-
րեզման.
Ըսքանչելի էր, մայր, կոյսն այն քան զամենայն
սքանչելիս.

Զոր ինչ երկինք և բնութիւն ունին զարդեր և գեղ և լոյս
Ցիւր դէմս ա'ի բիբսն էին ամփոփ, յիս 'ի նոր-
ցունց ցոլանային.
Շքութունքն և վարսք մեղր ունէին վասըն բոլոր
սրտիս վիրաց։
Թըւէր ինձ, մայր, յանդարձական յինէն 'ի քում
հրաժեշտին
Դու բարեգութ մաղթեցեր զերկինս յըղել յիւր
զուարթնոց
Քան զամենայն տարփելին և գրգուելին և ման-
կագոյնն
Ինձ մոր և քեռ լինել փոխան, փոխան ամեն
սփոփանաց.
Սիրոյ հրեշտակ ես կարծեցի, մահուան հրեշտակ
էր նա, մայր իմ։



ՀՐԱԺԵՇՏ

(Թարգմանութիւն ի գաղղիականէ)

—

Մեռանի՛մ ես, մանէ անժամ կենացս արև.
Պէտք է երթալ եկ ընդունէ զիմ հուսկ բարև։
Դու որ լաս զիս, ով իմ աղուոր հրեշտակ գըթած
Մէյ մ'ալ դարձու ինձի, այդ քու անոյշ նայեացք։
Այդ աչերոյդ լուսով թռչիմ յերկինս 'ի վեր
Ու հետ տանիմ հառաչդ որ ինձ գորովի տեր.

Ու երբ տեսնաս իյնան տերևք չոր դալկահար
Թէ սիրեցիր զիս, աղօթէ հոգ ինձ համար։
Նորէկ գարուն ցանէ շիրմիս ծաղիկ ու բոյս
Վերջին անգամ ծագէ արև իմ աչքերուս,
Մէն մի ծաղիկ փրթած դժգոյն այս ծառերէն
Դժնէ մահուն ցուրտ կերպարանն ինձ ցուցանեն.
Ճըւճըւալով թռչնոց երամ անցնին երթան
Անոնց ձայնին ականջք իմ խուլ պիտի ըլլան.
Ու երբ տեսնաս իյնան տերևք չոր դալկահար
Թէ սիրեցիր զիս, աղօթէ հոգ ինձ համար։
Թէ չըլլայիր դու, այն փափուկ սէրդ չըլլար
Ես անտարտունջ թողուի զկեանս այս վշտահար,
Առոյգ հասակս զարնըվելով ընդ քար ընդ փուշ
Մահուան մրրկին մընար երթալ յափունս անյուշ,
Բայց երբ ինձի դէմ սլանային բաղդին նետեր
Քու թևերուդ մէջ կենայի ես անվեհեր.
Ու երբ տեսնաս իյնան տերևք չոր դալկահար
Թէ սիրեցի՛ր զիս, հոգ, աղօթէ ինձ համար։



ԵՐԳ

—

Ուստի՞ յանկարծ ծագէ այս լոյս 'ի յամայլոջ
սրտիս խաւար
Զերթ արևուն շող թափանց 'ի թուխ անտառ
գերեզմանաց։—
Ցոյս գեղանի, ոսկեթև զըւարթաթռիչ դու
թիթեռնիկ,

Քանիցս արդեօք թեւածեալ զմելամաղձիկ իմ սրտիւ
Հարար 'ի բախան իմ անողոք. և ըճքըճեալ քո ծիրանիք
Հանդերձ զարդուրդ անդամանդեայ աւաղ յերկիր թօթափեցան.
Ընդվայր իմովքս ձեռամբ ես ըզճակատ քո պըճնեցի,
Դափնիդեայ մի ընձիւղ ոլորեցի քեզ 'ի պըսակ
Եւ նըշուլիւ մի սիրոյ ըզքո թեւերդ զարդարեցի.
Հէք թիթեռնիկ, արդ անկենդան անկեալ դընիս յիմ սրտիկ.
Եւ կորուսեալ զամենայն ծածկիմ Ոգւոյս 'ի վիհ մըռայլ.
Զաչքս փակեմ չըտեսանել եթէ զիւրդ պարեն աստեղք
Զիւրդ ծաղկունք փունջ կապեն և կամ բնութիւն նազի յիւր գահ.
Իբրև ճըղիկ մի կիպարի ես խոնարհիմ 'ի գերեզմանն
Ցուսից իմոց և բաստից և լուսաթոյր երջանկութեան։—
Սակայն ուստի ծագէ յանկարծ լոյս 'ի խաւար իմ սըրտիս...
Ո՜հ զինչ տեսի. միթէ հրեշտակ, կոյս, կամ մանուկ գեղաշնորհ
Որ յիս մօտի և մատանիշ առնէ զգաւառս ինձ լուսոյ

Որ ատելի և անհանդոյրժ էին տիեզերք աչաց իմոց
Նա արդ ընութեան գեղով, զարդու, չըքով լինի ինձ յանդիման.
Ո՞ իցես դու արդեօք. զուարթունք անշուշտ դուք ճանաչէք,
Զի քոյր թըւի Նա հրեշտակաց. դուք ճանաչէք ըզմաքրափայլ
Ըզճակատն՝ ուր դայ նստի ժամի չիկնի պարկեշտութիւն,
Եւ զայն ծիծաղ իւր չըթանց ոյր չիք անուն յազանց լեզուս,
Եւ զմանկունի իւր այտերն, և ըզխոպոպսըն դեղահոյլ
Եւ զերկինս որ 'ի շողշող լուսապարեն 'ի սեաւ աչկունս
Ըզսիրտ նորա և ըզհոգեակ անշուշտ հրեշտակք դուք ճանաչէք,
Ամենեին 'ի պատկեր չըքնաղ մարմնոյն ձևեալ է այն։
Եկ ո՛ կուսիկ, որ 'ի փըշուտ յուղի կենացս երեւեցար
Հրեշատեսիկ երևոյթ, և զճանապարհն իմ լցուցեր
Խնկով վարսիցդ և երեսաց. լուսով բըբայդ և նայուածոյ,
Մինչև անցեալ, եկ ո՛ կուսիկ, շուշանափայլ քո զուլանէդ

Կախեմ մանեակ ըզտաղս իմ զայս ընդելուզեալ
յայն մի արտօսր
Ապա մնց գնա թըռիր, ո՛ կոյս, ես մընացից յա-
մայուԹեանս
Զի աննըշան միջատի չիք Թոյլ յերկնից աստեղս
Թևել։—

Ե Ր Գ

—

Ցիշեա՛ զիս կոյս յորժամ գըլուխդ հանդչի 'ի բարձ
փափկիկ Թևոցդ,
Եւ զԹռչնեկին ննջես ըզքուն. յիշեա՛ զիս կոյս
յորժամ անուրջք
Աշխոյժ և հոյլ երամով գեղապարեն առ սընա-
բաւդ.
Ցիշեա՛ զիս կոյս յորժամ զաչկունսըդ մեծամեծ
և լուսալիր
Բանաս յողջոյն շողից արփւոյն Թողեալ ըզմահիճ
Ըզքոյնն զայն այնքան գեղոյ այնքան շնորհաց
պարկեշտասուն
Ցիշեա՛ զիս կոյս յորժամ յայգուն ճեմիս 'ի մարդ
ցօղատարափ
Զի մնունդ տացես մըտացըդ քո և երկնաթռիչ
խանդից հոգւոյդ
Զեփիւռիւ առաւօտուց և արփենւոյն նըշուլիւ,
Համատիւռ բուրմամբ ծաղկանց և սոխակին
նըւագաց.

Եւ ասասջիր, յորմէ հետէ ետես զիս նա՝ վասն
Է՛ր արդեօք
Ոչ ևս սիրէ ըզծաղիկ ոչ ըզզեփիւռ առաւօտուց,
Վասըն իւր ցօղատարափ պարտէզ չունին անու-
շութիւն
Ոչ երկինք նըշուլազարդ, ոչ աղաւնեակ և ոչ
սոխակ.
Ցիշեա՛ զիս կոյս երբ նայելով 'ի հայելիդ գոչես
խաբեալ՝
Ց գեղեցիկ զի՞ սիրուն զի՞ չարաճճիկ է այս
պատկեր,
Եւ բիւր մանեակս յօրինես 'ի յոլորից սամոյր
վարսիցդ
Եւ մանկական գողտրիկ ձևօք ժպտիս խաղաս
ընդ պատկերիդ.
Ո՞հ ասասջիր և յայնժամ կոյս, Քանիցս անգամ
ջանացաւ նա
Համոզակեր զիս առնել եԹէ աչկունքս են ան-
նըման,
Եւ Թէ մեղուք զայտքս իմ և ըզշըրթունս կարծեն
ծաղիկ,
Եւ հրեշտակաց իմ հանդոյն. արդեօք երբա՞ զոր
ինչ ասաց.
Ցիշեա՛ զիս կոյս երբ բերկրանք ձեռն 'ի ձեռին
ըեզ տարփացեալ
Փարին ըզդիրդ քո մարմնով և փայփայեն զե-
ռեսըս քո.

Ցիշեա՛ զիս կոյս, երբ տրամութիւն ըզնազելի
գլխիկդ հակէ.
Զերթ ցողալիր վարդից կոկոն, զսէրն իմ դընեմ
այնըմ նեցուկ.
Ցիշեա՛ զիս կոյս երբ ըզվայրի ո՛հ տեսանես դու
ըզծաղիկ
Որ հըսկէ ի վերա՛յ իմ մենաւոր գերեզմանին։

ԵՐԳ ԱՌ ՄԱՆԿԻԿ

—

Եկու բըչիկ եկու մընչիկ
Տուր երեսիկդ, առ մի պաչիկ.
Շէքէր կուզէս կամ պատեմիկ
Բայց դուն ալ տուր ինձի պաչիկ։

Պաչիկներու ձայնըն ինձի
Չ'գիտեմ ինչու անուշ կուգայ
Երբ քեզ պագնեմ սիրտըս բացուի
Քեզմէ ինձի պաչիկ չիկա՞յ։

Ցառաւօտուց դեռ յանկողին
Մէկտեղ տեսնեմ պաչիկ ս'արև
Երբ գիշերով ի քուն հանգչիմ
Թռչի պաչիկ գլխուս վերև։

Եկու պըտիկ եկաւ բըչիկ
Ա՛յ կը պօռաս, ինչու մընչիկ.
Վախ իմ աղջիկ վախ բըչըչիկ
Առ մէկ պաչիկ կեցիր լըռիկ։

ԵՐԳ

Թարգմանութիւն յիտալականէ

—

Մնացեմ բարեաւ, սէր իմ սէր.
Հրաւէր մարտից որոտաց՝
Թէ չեմ քաջաց ես ընկեր
Զըկա՛յ բաժին ինձ փառաց։
Մի լար հոգւոյս իմ հատոր
Գուցէ դառնամ ո՛հ մի լար,
Թ' անկայց մարտին ես 'ի դոռ
Տեսցուք յերկինս մեք զիրեար։
Եղբայրադաւ չէ՛ նախանձ
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ Հայրենեաց
Բառնամ ըզլուծ օտարի։



ՀԱՑ ՔԱՋՈՐԴԻ

Ա.

ԵՐԳ

Ապառաժուտ լերան մը կող
Ցեցեալ 'ի քար գերեզմանի,
Աչք մերթ յերկինս և մերթ 'ի հող
Խարտիշագեղ կայր պատանի.
Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց
Ի՞նչու այդպէս սիրտդ է ցաւած։
Կուզէս որ մեծ փոթորկեալ ծով
Մատուցանէ քեզ մխիթար
Կոհակաշարժ իւր լարերով
Երգեալ 'ի շունչ մրրկավար.
Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց
Ի՞նչու այդպէս սիրտդ է ցաւած։
Կուզէս որ քեզ ահեղաշուք
Խնդայ կամարն աստեղց անթիւ,
Եւ բընութիւն պայծառ զարդուք
Ժըպտի ծաղկամբ և զեփիւռիւ.
Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց
Ի՞նչու այդպէս սիրտդ է ցաւած։
Կամ փափկագոյն այլ ըսփոփանք
Միթէ կուզէս մօր քաղցուենի
Ու սիրուհւոյ անոյշ գգուանք
Որ քու կսկիծըդ փարատի.
Դեռ ի՞նչ կուզես, ահա մի ծածկեր...
—Կուզեմ վառօդ և դնտակներ։

ՄԱՀ ՔԱՋՈՐԴԻՈՑՆ

Բ.

ԵՐԳ

Դու զմով խնդրես մայր իմ անոյշ.
Ե՛կ, մի դողար, մօտեցիր հոս.
Անլայ աչօք դիտէ զորդիդ
Ու իւր վերքերն արիւնահոս
Խուժից մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։
Ինչպէս երբեմն որբանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրև հրեշտակ նըւագելով,
Ձիս հանգչեցու 'ի հող՝ և դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։
«Նորեկ որդւոյս կենացն արև
Ձեզի համար փայլէ՞ Հայեր»
Այսպէս յայնժամ դու կերգէիր
Օրորոցիս նստեալ քովեր.
Անոնց համար չիլաւ, և դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։
Կարմիր կայլակը ցայտին վերքէս
Սակայն մայր իմ նայէ՛ չորս դին,
Զարիւնըռուշտ ոսոխքն տես
Հազարներով փռուած գետին,

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։

Մրընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրայ յարձակեցան,
Ո՜վ Հայրենիք, 'ի հուր 'ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն,
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։

Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք
Զի չէ՛ մեռած Հայոց կըրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր
Զի լուծաւ վրէժ յարեան վրտակ.
Խնտաց Մասիս, մայր իմ և դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։

Վերջի՜ն համբոյր տամ քեզ մայրիկ
Հատուցանե՜ս զայն սիրուհոյս.
Վերջի՜ն անգամ գրկեմ մեր հող
Այր արդ կիջնամ 'ի ծոցն անլոյս,
Խաչ մը տնկէ վրրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի մեր տուն։

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՈՒՈՑՆ

Պար հայրենակցաց

—

Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ
Սարէ 'ի սար չարաշըշուկ տարին լուր
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ
Երբ պատանւոյն բացինք մրռայլ փոսին դուռ։

Գիշերական մունջ ըստուերներ շուրջ կային
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին
Սուգ էր պատեր ըզդաշտ բըլուր և երկինք։

Պէտք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ
Որով դոցուէր ազատորդի քաջորդին,
Նա յետ մարտին կարծես հոգնած կուհանգչէր

Ու վերարկուն կարմիր բաւէր իւր անձին։

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց ե՛ Աստուծոյ,
Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց
Թոյլ չի տըւաւ հառաչ մ' ու ճիչ հանելոյ։

Բայց երբ դըլուխն 'ի բարձ դըրինք հողաշէն
Տեսանք ըզդեղ ճակտին ու վերքըն պայծառ,
Ո՛վ պատանեակ, ըսինք ամենքս մէկ բերնէն
Վասն հայրենեաց մեռար, դու չա՜տ ապրեցար։

Գընա զրուցէ՛ հայկազարմից մեծ ոգւոց
Որ կան այս տեղ ազատ ու քաջ դեռ Հայեր,
Որոնք 'ի բոյր պատերազմաց թէպէտ խոց
Մէջ ամպրոպաց 'ի ժայռ կանգուն են կե-
ցեր...
Մէյ մ՛ալ քամի յանկարծ փըչեց ցրտաշունչ
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ
Ու մեր սարերն զերթ ուրուականք անմըռու
Սև գլուխնին տնկած դիտեն ապշութեամբ։
Ցայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան.
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատուէր եա.
Ո՛չ այլ շըքեղ արձանագիր ո՛չ տապան,
Զինքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ։



ՀԱՑ ՔԱԶՈՒՀԻՆ

—

Այն ո՞ւր կերթայ զըւարթադէմ
Եւ սուրալով լերանց վըրան
Փափուկ թեթև ոտիցն 'ի ճեմ
Ուսից վըրայ հերքըն ծըփան։
Արդեօք չքնաղ եկա՞ւ գարուն
Կամ աւետիս եւ ծիծառնուկ...
Եւ նա խնտում և զարդարուած
Ու նաղելով աշխուժաբար
Կերթայ ընդ պարս ընկերուհեաց
Քաղել նարկիզ և նունուֆար։

Սակայն ոչ ոք կայ իրեն քով.
Զայն մը լսուի, բայց ծիծռան չէ,
Թևիցը տակ չունի կողով
Ուր որ ծաղկի փունջեր շարէ։
Բօթ մի փըչեց ինչպէս մրրիկ,
Ու այն տեղի անտառներուն
Ցաղթահասակ դողան մայրիք.
Ցցուեց առիւծ բաշ գալարուն։
Այն բարձրաբերձ սարից պահպան
Աղատութիւնն՝ ել սըլացաւ,
Հովտաց դաշտաց հիւղից վըրան,
Թեատարած հովանացաւ։
Արինք 'ի զէն. խուժն ահարկու
Լողաց եղբարց յարեան 'ի ծով,
Արդ 'ի մեր կոյս վաղըս կառնու
Արիւնթաթախ ճիրաններով։
Ու կանգնեցան հսկայաբար
Հաղարաւորք աչք բոցահատ
Իրենց ահեղ սարից հաւասար
Բարձրացուցած գուռոզ ճակատ։
Բայց ո՞ւր կերթայ այն գեղադէմ
Աղջիկ թռուցեալ լերանց վըրան,
Փափուկ թեթև ոտիցն 'ի ճեմ.
Ուսից վըրան հերքըն ծըփան։
Ի՞նչ է այն որ կուրծքըն սըխմէ
—Բոցանըշոյլ զըրահ մի լայն
Ի՞նչ գգուանօք նա համբուրէ.
—Ճակատամուղ երկաթն է այն։

Նա այլ գգուանք և այլ համբոյր
Կուսին անբիծ՝ դեռ չ'գիտէր,
Երեխայրի սրտին 'ի բոյր
Ցոլաց միայն ազգին իւր Սէր։
Օրհնեա՛լ անմահ դու քաջութիւն
Պըսակ լանջաց Ազատութեան,
Որ զհրեղէն վառես Զուարթուն
Եւ զսիրտ քնքուշ Հայ աղջկան։
Դու մէկ օր մ՚ալ յանհուն թեւեր
Պիտի թռչիս 'ի Հայաստան...
Տես ինչպէս քաջ կոյս Հայկուհին
Խրախոյս կարդայ դռռ բարբառով,
Ցառաջ, մօտ կայ ժանտ թշնամին
Զինք վանեցէք կոտորածով։
Տեսին Հսկայք զայն ահաւոր,
Ծափ ըզծափի մեծ աղաղակ
Որոտացին ցվիհրս խոր,
Կարծես բոմբիւն հանեց կայծակ։
Հայկուհին է. տեսէք ահա
Կրակներ թափին իւր աչքերէն
Հայկուհին է որ թռչի գայ
Ինչպէս հրեշտակ ըսպառազէն։
Որպէս շանթից հրավառ նիզակ
Զարնէ կառափ մեր յաղթ լերանց,
Այնպէս զարնենք այն աւազակ
Խուժին գըլուխն արիւնախանձ։
Ինչպէս մղեալ 'ի փոթորկաց
Գլորին ժայռից մեր հատորներ,

Հապա, այնպէս մէջ թշնամեաց
Իյնանք թաւալ օրհասաբեր։
Հայկուհին է, կարիճ եղէք,
Հայկուհին տայ խրախոյս յորդոր,
Ժանտից վըրայ հուր տեղացէք
Մինչև մոխիր դառնան բոլոր։—
Ու շանթեցին. հարցէք, ո՞ւր է
Այն բազմամբոխ խուժից բանակ,
—Սևափրփուր շունչն արձրկէ
Հայորերոյն ոտքերուն տակ։
Այդ կոյսն աղէտ ուստի՞ կուգայ
Թռուցեալ զըւարթ լերանց վըրան
—Պատերազմէն նա կու դառնայ,
Հերաց վըրայ դափնիք շողան։

ՎԻՔԹՕՌ ՀԻԻԿՕՑԻ

Ուրուական

(Թարգմանութիւն)

Ա.

Քանի՞ աւա՜ղ տեսի ես աղջկունս անժամ կենաղրաւ
Ճակատագրին են օրէնք, հարկ է մահուան իւր աւար.
Հարկ է խոտոյ անկանիլ ընդ սայրասուր մանգաղաւ

Հարկ է պարուց 'ի հանդէս զուարճ կայթից սրա-
վար
Կոխել ըզփունջըս վարդից։
Հարկ է ուղխից ըսպառիլ յընթանալոյն 'ի ծոր-
ծոր.
Հարկ է ցոլալ փայլակին, ւ'ի նոյն հապճեպ առ-
նուլ վերջ.
Հարկ է Ապրիլ նախանձոտ դիցէ պաղիւ 'ի
տոչոր
Ըզդեղանին խնձորի աստղափրթիթ ծաղկամբ
պերճ,
Անուշաբոյր ձիւն դարնան։

Զի այս են կեանք, յետ լուսոյ երիթամած գայ
գիշեր
Ցետ ամէն 'ի զարթնութիւն 'ի վիհ դժոխոց կամ
յերկին.
Աշխարհախումբն 'ի խրախճան անյագ ակումբըն
բազմէր
Սակայն քանի՞ բազմական լրբեալ պարապ զիւր
տեղին.
Եւ ել գնաց տարաժամ։

Բ.

Քանի՞ տեսի կենդրաւ. մին վարդադոյն և
ճերմակ,
Միւսըն թրուէր ականջել երկնախոսիկ նըւագաց.

Այլ ոք, կրթոտ, ըզմի թև դընէր ճակտին իւր
խեչակ
Եւ զերթ թռչուն հոլաթև թեքէ զճիւղն յիւրն
'ի սլաց.
Հոգեակն եբեկ զիւր մարմին։

Մին 'ի նոսա շրջմոլիկ, ցնորակոծ, դալկահար,
Հծծէր յուշիկ անուն մի զոր ածէ ոչ ոք 'ի միտ.
Այլ ոք անկեալ թալանայր հանդոյն երգոց 'ի
քնար.
Եւ այլն 'ի շունչ օրհասին ունէր զանոյշըն ժըմիտ
Ցերկնից նորեկ հրեշտակին։

Համայնք ծաղկունք վաղանցիկք, և կեանք, աւաղ,
կարճատև.
Աղկիոնեայք ծովասոյզ հանդերձ բընկօքն ե-
բերուն,
Աղու տատրակք զոյս երկինք տուեալ երկրիս էր
պարգև,
Ոյք շընորհօք և սիրով և մանկութեամբ զար-
դարուն,
Զամսըն դարնամբք հաչուէին։
Զիարդ, ոչ ևս են նոքա, այդպէս կանուխ հո-
ղեցան.
Այդրան չրքնաղ աղջըկունք աներևակ և անխօս.
Շիջելափառ այդրան ջահք, այդրան ծաղկունք
ցիր և ցան,

Ա՜հ, թոյլ տուք ինձ առաթուր կոխեալ ըզդէզ թերթից գօս
Գընալ յանտառքս մոլար։

Անոյշ ուրուք, անդ 'ի մութ մինչ մրտախոհ կամ դեգեր.
Նոքա անձնիւր գան, խօսիմ, խօսին ընդիս նոքա այլ.
Բեկբեկ 'ի լոյս մերթ 'ի յայտ գան, մերթ ծածկին 'ի յրստուեր
Եւ 'ի միջոյ կողերաց և սաղարթուցըն մրռայլ
Դիտեմ զաչաց նոցին ցոլս։

Քոյր է հոգիս գեղագէշ ու ուրուատեսիկ այն ոգւոց.
Եւ մեք վաղեմք զօրինօք գերեզմանին և կենաց.
Մերթ զուգաճեմ և մերթ բուռն հարում նոցին ըղթևոց.
Անճառ տեսիլ, ուր ես եմ նոցա նըման մահացած
Այնք կենդանի ինձ նըման։

Ըզձևս իւրեանց ընծայեն իմ խորհրդոցըս բոլոր.
Դիտեմ, դիտեմ ըղնոսա և ասեն ինձ եկ առ մեզ,
Զեռն 'ի ձեռին կայթեն շուրջ յետոյ զշիրմաւ պարաւոր

Ցետոյ տակաւ սուզանին անհետ 'ի մութն ապարէզ
Եւ ես խորհիմ ու յիշեմ...։

Գ.

Մի՞ն մանաւանդ.—Հրեշտակ մի, պատանուհի Ըսպանիկ.
Ունէր թաթիկ ձիւնաթոյր ուռնոյր 'ի հեծ լանջքն յանմեղ
Աչք սևորակ, յոր շողշն գաղթածնի ակնարկիք.
Եւ անծանօթն այն հրապոյր, և այն պըսակ լուսագեղ
Զարդ ճակատուց նորատի։

Եւ մեռաւ նա, ոչ առ սէր, զի 'ի ճակատն այն անամբ
Հաճոյք սիրոյ և մըրցմունք դեռ ոչ էին ազդեցիկ,
Զայնքը ամեն դիմեցմունս վանէր սըրտիկն ապըստամբ.
Ի տես նորին մինչ համայնք գոչէին, զի՞ դեղեցիկ,
Զասէր ոք զայն յունկանէ։

Նա յոյժ սիրող էր պարուց, այս է մահուան իւր պատճառ
Սիրող պարուց հանդիսին ակնախըտիղ և ցընծուն.

Դեռ խլլբրտի աճիւն իւր և գողգոլթ մեղմա-
բար
Մինչ ըզվրճիտ գիշերաւ ճերմակ ամպիկ մի
փայլուն
Պարէ զերկնիցըն մահկաւ։

Նա յոյժ սիրուղ էր պարուց, մինչ տօնախումբ
գայր 'ի խնդ,
Յայն մըտածուփ կայր ըզտիւս, այն գիշերացն
էր երազ
Եւ երաժիշք և բամբիշք և պարանցիկք յա-
հուր թինդ
Աղմըկելով ըզքուն իւր և ըզգլխոցն առեալ
վազ,
Բառնան քրքիջ և շըշուկ։

Յեռոյ գոհար և մանեակ աչացն հանդէպ շող-
շողէր
Գօտի կամար բեհեղեայ կոհակակերպ ծըփալով.
Եւ անկուածոյք նըրբաթել քան ըզմեղուացըն
թեւեր.
Դրասանդ և ծոպք հոյլ 'ի հոյլ որովք լընոյր բիւր
կողով,
Ցեղատարփ և ծաղկանց։

Ցըսկըսանիլ հանդիսին ծիծաղադէմ ընդ իւր
քորս
Գայր խոսալով, ւ'ի մատունս իւրն հովահար ծա-
ծանէր.

Յեռոյ նըստէր մեռաքսեայ փաղփուն ձորձոցըն
- յոլորս
Եւ սիրտ զբաւրթ զերդ բամբիռս 'ի ծոց խնդայր
և վազէր
Ընդ բիւրաձայն կընդընդոցս։

Էր տեսանել զաղջիկն այն 'ի կայթ ոտին սուր-
արշաւ.
Ոսկիանիշ իւր զքանցը տան 'ի շարժ փայլ
ըզփայլի
Եւ թոյրաթուխ մեծ աչկունք ցոլան ընդ սեաւ
կերպասեաւ
Որպէս գիշերց 'ի ճակատ աստեղաց զոյգ մի
վառի
Ի ծոպս ամպոցըն մըռայլ։

Եւ խընդամոլ էր աղջիկն, համայն խնծիլ և
կայտիռ
Թուէր մանուկ. հիացումն էր մեր ժամուց տըխ-
րաղբոս
Զի ոչ պարուց յակըմբին սիրտ բողբոջէ ցըն-
ծալիր.
Ո՜հ, անդ փոշիք մըրբրկեալ ընդ ծիրանիս տան
հըրոս
Եւ սեաւ տաղտուկը ընդ հաճոյս։

Սակայն կայթից 'ի դոփիւն նա սրաթռիչ պար-
առալ

Հոլաթևէր դարձադարձ չառնէր շընչոյ տուր և առ
Եւ արբենայր մրմընջով աղեբախից քաղցրաւաչ,
Ծաղկամբ մոգիչ հանդիսին ւ'ոսկի ջահիւք բոցա-
վառ

Զայնից ւ'ոտից աղմըկաւ։

Զի հեշտալի 'ի յամբոխն յապշոպ ընդոստ սը-
լանալ
Ըզդալ զի պարն յաւելու ըզկիրս հոգւոյդ բիւ-
րաւոր
Եւ չը գիտել թէ արդեօք գընաս ընդ ամպն 'ի
թաւալ
Թէ խոյս յերկրէն տաս խուճապ, թէ ընդ ոտիւք
պարաւոր

Կոխես զալիս պրտոյտքեալ։

Սակայն աւաղ զի հարկ էր 'ի դալ շողից այդածին
Մեկնիլ 'ի բաց և առ սեամբս մընալ լոդկին
սընդուսոյ
Եւ էր յայնժամ՝ զի յաճախ այն կաքաւիչ աղաւնին
Ըզդայր 'ի դողդոփալով 'ի վայր մերկիկ 'ի յուսոյ

Սողալ այգուց շընչոյն զով։

Զի վաղորդայնն է տխուր, կայթատօնից հրա-
ճուական.
Ողջամբ մընայք դուք զարդեր, պարք և ծիծաղք
մանկունակ

Հաղն անողոք յայլորդէ դաշնակութեանցըն փո-
խան
Եւ վարդադէմ և դալար հաճոյից տենդ կա-
պուտակ.

Աչկունք շողշող նըւաղին։

Դ.

Մեռաւ կենացն 'ի դարուն, աղւոր, գըգուեաւ,
երանեաւակ.
Մեռաւ, ելեալ 'ի պարուց որ զմեզ 'ի թուխս
համակեաց.
Մեռաւ, աւաղ, ւ'ի ծոցոյ խելայեղ ժորն անու-
շակ,
Իւր ամենայն զարդերով ցուրտ մահ ըզնա թо-
թափեաց՝

Դընել 'ի քուն 'ի դագաղ։

Դեռ շատ կայտիռս հարկանել յակումբ պարուց
պատրաստ էր,
Մահ այդքան բուռն հապճեպով էառ զչըքնաղ
զիւր մարմին,
Եւ առօրեայ այն ծաղկունք որովք գըլուխ իւր
պըճնէր
Որ դեռ յերէկ յերախանս ամենաբոյր փըթթէին,
Ի հող շիրմին խամրեցան։

Վահ եղկելի իւր մայրիկ որ անգիտակ իւր բաղ-
դին

Այնքան 'ի սէր կաթոգնէր 'ի դիւրաբեկն յայն ծրղօտ
Մինչ տրղայն էր՝ և հիւանդ, տրքնէր 'ի գլուխ իւր բարձին
Եւ ղալագին իւր մանուկ այնքան գիշեր՝ խընամոտ
Հանգուցանէր յորորան։

Զուր մայրենի գորովանք, արդ այն աղջիկ վաղամեռ
Ընդ կապարեաւ դագաղին, կապուտակեալ, որդնահար
Ընկնէ, ւ'ի փոս դամբանին ուր զնա ետին ձեռքըն մեր,
Մեռելական յինչ հանդէս եթէ զարթնու սառնահար
Զմրան չրքնաղ գիշերով,

Դառնաժըպիտ հրէշ ճիւաղ դայ մունջ ըզնա զարդարել
Փոխանակ մորըն քընքուշ. ասէ, ել, ժամն է ահա.
Եւ սառնամած մի համբոյր տրւեալ շրթանցն անեղեր
Խաղայ մատամբքն աճառուտ սողեալք ձեռացն յոսկորեայ
Երկայն ծրփուն իւր հերովք։

Յետոյ ածէ դողդոջուն ըզնա 'ի պար դիւթաճեմ
Յակըմբահոյլ օդային որ 'ի խաւար ճախրասլաց.

Եւ թլփայորդ կայ յոլորտս լուսին ժժգոյն լայնադէմ
Եւ շավիւղեայ ներկեն շողք ծիածանին գիշերաց
Ամպոց ըզծոպս արծաթեայ։

Ե.

Դուք, զոյս 'ի խաղս իւր կոչէ պարահանդէսն եռանդուն
Զբսպանուհին յուշ ածէք որոյ չիջաւ կենաց լոյս.
Ծաղկահատակ աղջկունք, նա գիրդ ձեռամբ զբաւարթուն
Կենաց ըզվարդըս հընձէր, ըզմանկութիւն, ըզհաճոյս,
Ըզդեղ փափուկ և ըզսէր։

Թշուառ մանուկըն տանից 'ի տանըս յար դիմեցիկ
Զարմանազան յօրինէր զերփնիս սիրուն այն փընջին,
Այլ խիստ բախտին հարուածով զիւրդ եղև վաղանցիկ
Զերթ Ոփելիա 'ի յալեաց յափըշտակեալ դեռատակին
Մեռաւ ծաղկունս քաղելով։

ՄԵՐՁ Ի ՄԱՀ ԳՐՎԱԾ

Կարծեցի մոռանալ, ոչ գիտացի չափել ըստոյգ
Զանդունդ խորայատակ սրտիս որ լին էր երազոք.
Ո՞հ յիշատակք ոյք հանդոյն ահեղամռունչ մրրկոց ալեաց
Խուժեն անդուլ յիմ վերայ. 'ի վեր 'ի վեր տանիմ ըզցաւս
Եւ համարիմ թեթևանալ, խոր ևս 'ի վիհ թաւալի նա։
Ընդ վայր բուռն ահուր տրոփմանց առնեմ սրտիս եռանդնաղայր,
Ընդ վայր 'ի հող և 'ի վէմ անկանի գլուխքս մայրամած,
Ոչ դադարին խոյանք սրտիս, ոչ հովանայ հուր ճակատուս։
Այս ընդ անձին գուպարած գրգռէ ըզցաւ որ զիս լափէ.
Ա՞հ զինչ առնել է ինձ ո՞ Տէր. յոյս իմ և ջահ իմոց կենաց
Ի մի և եթ փայլէր նայեաց և այն յինէն ծածկեցաւ արդ.
Թուխ աչկունք նորա ըզծիր կենացս յոսկի ներկանէն
Ըզնա 'ի դանձքս երկնից ընտրեցի ես՝ զամենագեղն.
Էր նա շունչ իմ շրթներոյս, հոգի էր նա ոգւոյս իմոց,

Նա իմ խորհուրդն էր անճառ յաւերժական և բարձրագահ։
Զբգոյր ուստեք ինձ երկիւղ, զոդ այնքանի չքնաղ ւ՝ անոյշ
Մահուն դիմաց իսկ ընծայէր ո՞հ չըգիտեմ որպիսի գեղ.
Եւ թըւէր ինձ մահ կին մի խորհրդաւոր քօղածածուկ
Որ գալոց էր յաւուր միում ժըմիտս ածեալ շրթանց իւրոց
Շիջուցանել ըզսէր իմ յետ զգերանըշոյլ տալոյն ըզփայլ.
Կամ զիւր փըչէր շունչ ցրտիկ ւ՝ անկանէին այլագունեալ
Երկու յիրար կից վարդենիք ըգքաղցրագոյնն արձակեալ բոյր.
Աղու ցնորք իմ սրտիս ա՞հ յո՞ գնացէք անհետացայք.
Արդ ելիք եթող նա զիս, հուր արտասուք են իմ բաժին.
Պատեցայ 'ի ծալքս սեաւ դառնահամբոյր թշուառութեան
Զինչ առնել է ինձ ո՞ Տէր, և ո՞ երբէք հաւատայր
Զի հրեշտակն որ յիւր ձայնիկ փոքր ինչ յառաջ գըլթածաբար

Զիս յափանց գերեզմանին անդրէն 'ի կեանս
վերակոչեաց
Նոյն ինքըն արդ անգութ ձեռամբ զիս անդանօր
դահավիժէ։—

—

Այսպէս անձն իմ ընկճեցաւ ընդ բեռամբ մի և
եթ մրտածման.
Ծերանեփայլ սլորա կենացս ահա 'ի գոյն հարաւ
դալկան.
Շատ իսկ տեսի, շատ իսկ կրեցի, յոյս երթ փա-
խիր, չկամիմ ըզքեզ.
Մի ըզհանգիստն իմ խռովէք ո՞վ ձայնք սիրոյ և
բերկրանաց.
Ողջամբ մնացէք ոսկեակ անուրջք, լուսատեսիկ
երևոյթք,
Որ այնքան բոյր և այնքան զարդս ածիք աւուրց
իմ գեղաշուք։
Սիրուն մոլորութիւնք, մեղբր անոյշ և մա-
հածու,
Աբբեցութիւն, որոյ զրկումն աղիտաբեր է սրտի,
Դուք ոչ ևս էք, ահ ոչ ևս էք, փախեան երազք
քերթողականք,
Ողջամբ գնացէք. սփռեալ յուղղոյս ըզբիւր
պատրանս և յոյս զամէն
Դիմեմ յուշիկ 'ի գերեզման, այն հանգստոց զիս
ոչ խաբէ.

Առ սիրելեօքբս վաղամեռ. անդ 'ի տեղի ինձ ա-
ռանձնակ
Հանգեայց և ես գոհ ս անտրտում; գէթ անդանօր
չեմ անոքիկ։

—

Այո՛ վայրն է առանձին և անվեհեր իջանեմ
անդ,
Եւ երբ հողմքն մեռելոց գայցէ զաճիւնն իմ
խլրտել
Ըսպիտակն իմ ճակատ ձրմեռնական մրրկաց 'ի
մռունչ
Ի բաց զպատանան արասցէ, և բազմելով չիրմիս
վերայ
Ե՛կ, դոչեցիս առ նա եկ, չեմ նոյն յորմէ խոր-
շէիր դու.
Տես զիա՞րդ գեղեցկացոյց զիս մահ, արար զիս
տարփելի.
Մինթէ դարձեալ ատիցես զիս և անդրադոյն քան
ըզչիրիմ...
—Ո՞վ բանդագուշանք, նա ոչ լսէ, ոչինչ յիշէ—։
Ի հանգիստն իմ հողոյ մրտից անդրէն ընկող-
մանեալ,
Եւ 'ի խոխոջ վրտակին 'ի յուշ ածից զխաղա-
ղութիւն
Իմ հեզաշարժ օրորոցիս, և զարեգակըն ման-
կութեանս
Որ 'ի դաշտիկն իմ ցոլայր, զանոյշ իմ խաղս և
զարշաւանս

Ընդ հովանեաւ ծառաստանին որ զիւր տերևս թափէր յիմ գլուխս
Եւ ուր սոխակըն թագուցեալ երգէր առ իս զիւր երգ գորով.
Ո՜հ մերթ հոգիս ըզմայլեալ դայցէ վայրացն այն այցելու.
Գոցէ ըզմարգ, գոցէ զպուրակ և զերգեցիկըն թըռչնիկ
Եւ զքեզ քաղցրիկ բարեկամ որ զիս միայնդ յիշես և լաս։

Թարգմանութիւն

—

Մինչև մահուն անյիշատակ ի չիրիմ
Մընամ քու սիրոյդ ես հաւատարիմ
Կըրնայ ըլլալ որ դուն աւաղ մոռնաս զիս,
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստմունքիս։

Ով իմ հրեշտակ յոյս իմ միակ նաղելի
Քեզի կեանք ու բաղդ բոլորն ալ տուի
Իմ մանկութեան տիոց դու սէր նախընծայ
Սիրտդ գերել միշտ ես փափաքեցայ։

Սակայն ափսոս երջանկութեան այն փափուկ
Մահուան ժանտ ձեռքով ըլլայ վաղանցուկ
Այս է վճիռ զոր գրեց ճակատին մեր երկինք
Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք։

Սակայն իմ սիրտ քուկին սրտէդ անբաժան
Քեզմէ չի զատուի մինչ 'ի գերեզման
Սիրոյս յետին բաղձանք յետին նշանակ
Քու քովդ է հանդչիլ մահուան քարին տակ։

Սոխակն երգել իւր դայլայլիկ գիշերին
Նստի ի վերայ մեր ցուրտ դամբանին
Մինչ երկուքնիս մենք ի տեղւոյն այն դադար
Մահուան գրկաց մէջ ննջենք անդադար։

Վրկայ ըլլան աստեղք երկնից կամարաց
Զքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց
Զի դադրիմ պիտի երբէք ըսել քեզ
Ես քուկդ եմ յաւերժ սիրով բոցակէզ։

Ո՜հ ինչ ընեմ ըսէ սրտիս իմ հատոր
Արիւնս կ'ուզես թող վաղէ բոլոր
Բայց թէ անով ալ զոհ չըլլաս ով անգութ
Կեանքս այս զոհ կուտամ քու սիրոյդ։

Պիտի սիրես զիս յետ մահուան դիտեմ ես
Բայց անօգուտ տեղ արտասուքներ թափես
Շիրմիս վրայ անմխիթար ողբալով
Այն սիրելիդ որ կորուսիր շուտով։

ՅԱՆԿ

Մկրտիչ Գէշիկթաշլեան. առաջաբան Ա.էօ-ի 3
Հրատարակութիւնն առ ընթերցողս. (սկզբնական (Կ. Պոլիս 1870) հրատարակութեան առաջաբան) 26
Ի բերանոյ մանկան առ պաշտպանուհին 33
Նուագ ի մահն Յիսուսի 34
Յընտրութիւն Վ. Հ. Գէորգայ վարդապետի արբայ Մխիթարեան ուխտէն. 35
Ի նահատակութիւն Վարդանանց 53
Վարդ մի գունեան և յոյժ փափկիկ 54
Երգ Հայրենի, թարգմանօրէն. 55
Տապանագիր վաղամեռիկ մանկան 56
Առ Հ. Ղևոնդ Ալիշան 56
Ի վաղամեռիկ մահ Ոսկեան Պետրոսի պատանուոյ ճարտարարուեստ նկարչի 58
Ի մահ Յակոբայ Զամչեան 63
Ի մահ Աղնիւի Լուսֆեան 65
Բացան դըրունք նոր տարւոյս 67
Ո՛վ երջանիկ դու նըժդեհ. 68
Մի՛ ի շաւիղ ընդ մոլար 69
Բերթողական ոգին Հայաստանու ի քուն 69
Գիշեր 71
Երգ մօր ի վերայ մանկանն քունելոյ. 73
Ողբ մանկան ի թռչնիկն իւր վաղամեռիկ. 75
Հրաւէր ի մարտ Խոսրովու Մեծի 77
Անուշ աշխոյժ կերպարան 78
Անմահ անուշ դու գինի 79
Հանելուկ 80
Մխիթարեան աշակերտաց առ Միքայէլ վարդապետ Շէքեան բողոք 81
Գնացէք իմ տաղք 82
Աշուն. Երգ առ նէ 83
Առ զեփիւռն Ալէմտաղիի 86
Յ Ալէմտաղըն այն գեղեցիկ 88
Ո՛ւր էր թէ զեփիւռիկ 90

Ինչու երկինք որոտալով 91
Արտասուք կուսին 91
Երգ մերձ ի մահուն եղերերգեալ 92
Վերադարձ 95
Ձեմք ի լեառն հսկային 97
Մահ պանդխտին (Նմանողութիւն) 102
Դիւցազունք Հայոց. զիշեր 103
Զբօսանք Արտաշէսի Առաջնոյ 109
Տէրն Վանայ 112
Բնար և շիրիմ 114
Եղբայր եմք մեք 122
Ի հանդէս պարգեւաբաշխութեան աշակերտուհեաց սրբոյ Հռիփսիմեանց վարժարանին Օրթագիւղի առ Հայկազուն օրիորդս 123
Գարուն 125
Երգ ի մահ Խոսրովու Մեծի 126
Ի սրբանուէր օծումն աստուածապատիւ Տեառն Եղուարդայ վարդապետի Հիւրմիւզեան յարքեպիսկոպոս Շիրակայ ի Հռովմ 127
Վիրգիլ ի Պառնասեայ 128
Առ Հ. Արսէն Կ. Բագրատունի 130
Առ Գրիգոր Էգէնտի Օտեան 131
Առ զոհարիկ 134
Ի տարաժամ մահ Գաբրիէլի Երամեան 135
Թոյլ տուր 136
Ներեա՛ ինձ կոյս 138
Յեռին հառաչք 140
Հրաժեշտ 144
Ուստիս յանկարծ ծագէ այս լոյս 145
Յիշեա՛ զիս կոյս 148
Երգ առ մանկիկ 150
Մնասցե՛ս բարեաւ, սէր իմ սէր 151
Հայ քաջորդի. Ա. 152
Մահ քաջորդւոյն. Բ. 153
Թաղումն քաջորդւոյն 155
Հայ քաջուհին 156
Վիքթոր Հիւկոյի Ուրուականք 159
Մերձ ի մահ զրված 170
Թարգմանութիւն 174

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես.	Ի երեսից.	Սխալ.	Ուղիղ.
31	14	վերջացնելով	վերջացնել
39	9	վաղանդ	վաղանդ
43	14	յաղոող	յաղթող
51	3	գեկեցիկ	գեղեցիկ
52	17	յաթանակ	յաղթանակ
59	18	ճարտարատուեստ	ճարտարարուեստ
59	7	գեղաժիծաղ	գեղաժաղիկ
"	25	ի զարդ	ի զարդ
62	21	շնչես զոդ	շնչես դու զոդ
65	4	մահուան	մահուն
67	3	Յաւերժահարսունք	Յաւերժհարսունք
73	4	Յարշաւասոյն	Յարշաւասոյր
"	13	յօրօրոցիդ	յօրորոցիդ
"	21	յօրօրոցիդ	յօրորոցիդ
74	27	էրեսքըդ	երեսքըդ
79	1	դիմանալ	դիմանար
86	10	լուսակարկաչ	լուսակարկաջ
92	19	մրմընջեա՛	մրմընջեա՛
94	12	շողին	շողիդ
95	18	պուրակին.	պուրակին
"	23	դալարիք.	դալարիք
96	6	արթուցանել	արբուցանել
106	13	գէտ	դէտ
122	18	քաղցր	քաղցր
126	15	արշաւասոյր	արշաւասոյր
128	20	սայրասոյր	սայրասուր
135	7	Ի դարաժամ	Ի տարաժամ
145	1	տերևք	տերևք
"	3	Նորկ	Նորեկ
"	4	աչքերուս	աչերոյս

146	25	տեսի.	տեսիլ.
149	10	Զ	Զի՞
151	1	եկաւ	եկու
153	7	արիւնահոս	արիւնահոսն
„	14	հանդչեցու	հանգչեցու
156	3	'ի բոյր	'ի բիւր
„	8	անմրռուն	անմրռունչ
158	3	Երեխայրի	Երախայրի
164	10	երաժիշք	երաժիշտք
170	3	մրրկոց	մրրկոտ
„	5	'ի վիր 'ի վեր	'ի վեր 'ի վեր

—*—

10/

ՀՀ Ազգային գրադարան
NL0361027

50509